

ՓՈՔՐ

ՄԱՇՏՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԷՅՐՈՒԹ - ԼԻԲԱՆԱՆ

2013



ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

Արհիպպատիւ Գերապայծառ Տիարք,
Գերյարգելի, Գերապատիւ վարդապետներ եւ
Արժանապատիւ քահանաներ,

Աշխարհաբար Փոքր Մաշտոցի այս նոր հրատարակութիւնը կը փոխարինէ Փոքր Մաշտոցը, որ նախաձեռնութեամբ երջանկայիշատակ Իգնատիոս Պետրոս ԺԶ. Կաթողիկոս Պատրիարքին, լոյս տեսած էր 18 Յունուար 1966-ին: Անոր կիրարկումը ի գորու կը դառնայ, թուականէս սկսեալ, երեք տարուայ փորձի շրջանի մը համար:

Մեր դիտաւորութիւնը, այս հրատարակութեամբ, պակաս մը լեցնել է նախ, քանի որ նախորդ տպագրութիւնը սպառած ըլլալով, կարիքը կը զգացուէր նորի մը: Այլուստ, մեր Պատրիարքական Ծիսական Յանձնախումբը, ընդառաջելով մեր եպիսկոպոսներուն եւ կղերին կողմէ բազմիցս արտայայտուած բաղձանքին, կատարեց կարգ մը լեզուական թէ բնագրային բնոյթով բարեփոխութիւններ, համապատասխան օրուայ պայմաններուն: Ուստի, կրկնապէս այժմէական ու անհրաժեշտ համարուեցաւ նման քայլ մը առնելը:

Այս հրատարակութիւնը կը գուգադիպի բարեպատեհ թուականի մը հետ, որ է՝ Յիսնամեակը Վատիկանեան Բ. Տիեզերական Ժողովի ընթացքին հրատարակուած Ժողովական Սահմանադրութեան՝ յատկացուած ծիսական բարե-

նորոգումի, եւ որու տիտղոսն է “Sacrosanctum Concilium”:
Այս յորելինական եղելութեան, որու ոգեկոչումը պիտի
կատարուի համայն Կաթողիկէ աշխարհի մէջ, իր համեստ
մասնակցութիւնը պիտի բերէ նաեւ Հայ Կաթողիկէ Եկեղե-
ցին, նախնականութիւնը կարգ մը տիսական հանդիսութիւն-
ներու: Յուսալիր ենք որ այս եղելութիւնը առաւել եւս պիտի
հրահրէ մեր կղերին ու հաւատացեալներուն գիտակցու-
թիւնն ու բժախնդիր կատարումը Ծէսին, որ մեր քրիստո-
նէական կեանքին առանցքն է եւ հոգեւոր սնունդի աղբիւր:

Յիշեալ Սահմանադրութիւնը յատուկ կերպով կը շեշտէ
թէ «Ծէսը մեծապէս կ’օժանդակէ որ հաւատացեալները,
զայն ապրելով, բացայայտեն եւ ուրիշներուն հաղորդեն
Քրիստոսի խորհուրդը եւ Եկեղեցւոյ հարագատ բնութիւ-
նը»: Ինչ որ կը հաստատէ թէ ծէսը լոկ արարողութիւն չէ,
այլ մանաւանդ հաւատքի ապրում եւ վկայութիւն: Այդ նպա-
տակը իրագործելու կը ծառայեն սուրբ խորհուրդները եւ
այլ արարողութիւնները, որոնք պարունակուած են ներկայ
Մաշտոցիւն մէջ:

Լիայոյս ենք, որ այս նորագոյն հրատարակութիւնը
մեծապէս օգտակար պիտի ըլլայ մեր կղերին՝ իրենց հովուա-
կան պաշտօնին ու պարտականութեան բժախնդիր կատար-
ման մէջ:

Զմմառ, 29 Յունիս 2013

+ *Ետրուս Եպիսկոպոս*

Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ
Կաթողիկէ Հայոց

ԿԱՆՈՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Երբ երախան պիտի մկրտուի, մկրտարանին մէջ կը պատրաստուի գաղջ ջուր ամանով մը, եւ սուրբ մեռոնը կը դրուի ափսէով մը սեղանի մը վրայ, աւագանին մօտ՝ երկու վառուած մոմերով եւ խաչելութեամբ մը: Հոն կը դրուի նաեւ Երախայից Իղը, բամպակ եւ հացի միջուկ, ջուր՝ քահանային ձեռքը լուալու համար եւ փոքր անձեռոց մը ու մեծ անձեռոց մը մանուկին համար:

Մկրտող Քահանան կը հագուի ուրար, շուրջառ եւ ձեռաց խաչ ձեռքին, պաշտօնեաներն ու դպիրները՝ իրենց կարգին համեմատ զգեստները: Եւ աչդպէս պատրաստուած՝ կ'ելլեն դուրս՝ եկեղեցոյ դրան մուտքին կամ մկրտարանին մօտ, եւ կը փակեն դուռը, եւ բերել կու տան երախան ու կնքահայրը կամ կնքամայրը, որ կը կենայ երախային մօտ՝ երեսը դարձած դէպի դուռը. իսկ պաշտօնեաներն ու դպիրները կը կանգնին քահանային կողքին:

Եթէ երախան մանուկ է՝ կնքահայրը կամ կնքամայրը կ'առնէ զայն իր գիրկը. իսկ եթէ չափահաս՝ կը կանգնի կնքահօր աջ կողմը, կնքահայրը իր աջ ձեռքը դնելով երախային ուսին վրայ:

Կնքահայրը կը պատասխանէ երախային անունով, իսկ եթէ երախան չափահաս է՝ ի'նքը կը պատասխա-

Աէ քահանայիցն հարցումներուն:

Սրկ. կամ Դպր. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա-
չեսցուք. ընկալ, կեցո եւ ողորմեա:

Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր Ք եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն:

Քհն. Ա. Ա., Ի՞նչ կը խնդրես Աստուծոյ Եկեղեցիէն:

Կնքի. Հաւատքը:

Քհն. Հաւատքը Ի՞նչ կը շնորհէ քեզի:

Կնքի. Յաւիտենական կեանքը:

Քհն. Արդ, եթէ կ'ուզես յաւիտենական կեանքը
ժառանգել, պահէ պատուիրանները. «Սիրէ զԱստուած
բոլոր սրտովդ, բոլոր հոգիովդ եւ բոլոր մտքովդ, եւ
ընկերդ քու անձիդ պէս»:

ԱՂՕԹՔ

Քհն. Տէր Աստուած մեր, Աստուած բարերար, որ
չանտեսեցիր քեզմէ հեռացած, փափկութեան դրախ-
տէն մերժուած մարդկային մեր սերունդը, այլ զթա-
լով՝ քու բարձրութենէդ խոնարհեցար մինչեւ մեր
նուաստութիւնը, առնելով մեր բնութիւնն ամբող-
ջութեամբ, բացի մեղքէն:

Որ մեր փրկութեան եւ դարձի գինը վճարեցիր
չարչարչարանքով եւ խաչի մահով, եւ վերստին կեն-
դանութիւն պարգեւեցիր մեզի:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Ընդունէ՛ այժմ, բարերա՛ր Տէր, յօժար կամքը այս քու արարածիդ, որ ուզեց մերձենալ սուրբ եւ միա՛յն ճշմարիտ աստուածութեանդ եւ քրիստոնեայ կոչուիլ: Տո՛ւր իրեն ոյժ եւ օգնութիւն, որպէսզի արժանի ըլլայ հասնելու ամբիժ կեանքին՝ սուրբ աւագանին մաքրութեամբ եւ ժառանգելու երկնքի արքայութեան որդեգրութիւնը, Քրիստոս Յիսուս, մեր Տէրը, որ օրհնեալ ես Հօր եւ Սուրբ Հոգիին հետ՝ յաւիտենապէս:

Սրկ. Ողորմէ՛ ինձի, Աստուած, քու մեծ ողորմութեամբդ. քու անբաւ գթութեամբդ՝ ներէ՛ յանցանքներս:

Լուս՛ զիս ամբողջովին չարութենէս եւ մեղքերէս մաքրէ՛ զիս:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Երախայիս համար խնդրենք մարդասէր Աստուծմէ, որ գթայ անոր՝ իր մեծ ողորմութեամբ, եւ արժանի ընէ զայն երկրորդ ծնունդի լուացումին եւ անապական զգեստին, իր անունին հաւատացողներուն թիւին մէջ դասէ եւ փրկէ՝ իր ողորմութեան շնորհիւ: Ամենակալ Տէր Աստուած մեր, փրկէ՛ եւ ողորմէ՛:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛, Տէ՛ր, ողորմէ՛, Տէ՛ր, ողորմէ՛:

ԱՂՕԹՔ

Քհն. Ընդունէ՛, մարդասէ՛ր Տէր, քեզի ընծայուած

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

այս երախան. իր միտքն ու խորհուրդները մաքրէ հակառակորդին բոլոր նենգութիւններէն, եւ սուրբ աւագանին միջոցով արժանի ըրէ զինք՝ սրբուելու իր հին մեղքերէն եւ նորոգուելու շնորհքիդ լոյսով. որպէսզի ինքն ալ մեզի հետ փառաւորէ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՀՐԱԺԱՐՈՒՄ

Քահանան կը հրամայէ երախային (կամ կնքահօր) դառնալ դէպի Արեւմուտք, եւ կը հարցնէ անուանովի երախային՝ ըսելով.

Քհն. Ա. Ա., կը հրաժարի՞ս սատանայէն:

Կնքհ. Կը հրաժարիմ:

Քհն. Եւ անոր խաբէութենէ՞ն:

Կնքհ. Կը հրաժարիմ:

Քհն. Անոր բոլոր չար գործերէն, մտածութիւններէն, կենցաղէն ու չար կամքէ՞ն:

Կնքհ. Կը հրաժարիմ:

Քհն. Սրտանց կը հրաժարի՞ս անոր բոլոր չար հրեշտակներէն, պաշտօնեաներէն, կամակատարներէն եւ ամէն չար ազդեցութենէն:

Կնքհ. Կը հրաժարիմ:

Քհն. Կը հրաժարինք քեզմէ, սատանայ, եւ քու

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

ամէն խաբէութենէդ, պատրանքներէդ, պաշտամունքէդ, մտածութիւններէդ, ընթացքէդ, կամքէդ, արբանեակներէդ, պաշտօնեաներէդ, չար կամակատարներէդ եւ ամէն չար ազդեցութենէդ:

ՀԱԻԱՏՔԻ ԴԱԻԱՆՈՒԹԻՒՆ

Քահանան կը հրամայէ երախային (կամ կնքահօր) դառնալ դէպի Արեւելք, եւ կը հարցնէ անուանովի երախային, ըսելով.

Քհն. Ա. Ա., կը հաւատա՞ս ամենակալ Հայր Աստուծոյ, որ Արարիչն է երկնքի եւ երկրի:

Կնքհ. Կը հաւատամ:

Քհն. Կը հաւատա՞ս անոր Միածին Որդիին, Յիսուս Քրիստոսի, մեր Տիրոջ, որ ծնաւ, չարչարուեցաւ, մեռաւ եւ յարութիւն առաւ:

Կնքհ. Կը հաւատամ:

Քհն. Կը հաւատա՞ս Սուրբ Հոգիին, Կաթողիկէ Սուրբ Եկեղեցիին, Սուրբերու Հաղորդութեան, մեղքերու թողութեան, մարմիններու յարութեան եւ յաւիտենական կեանքին:

Կնքհ. Կը հաւատամ:

Քահանան երախային (կամ կնքահօր) հետ միասին պարզ ձայնով կ'ըսեն Հաւատամքը լրիւ.

Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն Ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ՝ Հօրէ Միածին, այսինքն՝ յէութենէ Հօր:

Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ՝ եւ ոչ արարած:

Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի՝ երեւելիք եւ աներեւոյթք:

Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ Սրբոյ Կուսէն՝ Հոգւովն Սրբով:

Որով հառ մարմին, եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք:

Չարհարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր:

Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս: Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն:

Որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն, յընդհանրական եւ յառաքելական սուրբ Եկեղեցի:

Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւոն-

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Թիւն եւ ի թողութիւն մեղաց:

Ի յարութիւն մեռելոց: Ի դատաստանսն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց:

Յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս:

Քահանան աջ ձեռքով կը բանայ եկեղեցւոյ դուռը կամ մկրտարանի դուռը՝ ըսելով.

Քհն. Բացէ՛ք ինծի արդարութեան դուռը, որ մըտնեմ անկից եւ խոստովանիմ Տիրոջ:

Այս դուռը Տիրոջ կը պատկանի եւ արդարները կը մտնեն անկից:

Եւ կը մտնէ Անրս, ուրարին ծայրը դնելով երախային գլխուն վրայ եւ ըսելով անոր.

Քհն. Մտի՛ր Աստուծոյ տաճարը, որպէսզի Քրիստոսի հետ բաժին ունենաս յաւիտենական կեանքին: Ամէն:

Ամէնքը կը մտնեն եկեղեցի եւ կ'ուղղուին դէպի մկրտարան, ըսելով.

Աղաղակեցէ՛ք Տիրոջ, համա՛յն երկիր,

ուրախութեամբ ծառայեցէ՛ք Տիրոջ:

Յնծութեամբ մտէ՛ք անոր առջեւ,

ճանչցէ՛ք թէ Ան է մեր Տէր Աստուածը:

Ա՛ն ստեղծեց մեզ, երբ մենք չկայինք,

մենք՝ անոր ժողովուրդը եւ հօտը անոր արօտին:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

*Խոստովանելով մտէ՛ք անոր դռներէն ներս,
եւ օրհնաբանելով՝ անոր յարկերուն ներքեւ:
Խոստովանեցէ՛ք Տիրոջ,
եւ օրհնեցէ՛ք անոր անունը:
Քաղցր է Տէրը, յաւիտեան է անոր ողորմութիւնը,
եւ սերունդէ սերունդ է անոր ճշմարտութիւնը:
Փառք Հօր, եւ Որդւոյ, եւ Հոգւոյն Սրբոյ:
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Երբ հասնին աւազանին մօտիկ խորանին, քահանան կը թաթիւէ իր աջ բթամատը Երախայից սուրբ ձեթին մէջ, եւ խաչաձեւ կ'օծէ անով՝ երախային սիրտը եւ կոնակը, միանգամայն ըսելով.

Քին. Կ'օծեմ քեզ ջ փրկութեան ձէթով եւ կ'ընծայեմ քեզ մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որպէսզի յաւիտենական կեանքը ժառանգես. ամէն:

Եւ ապա բամպակով կամ հացի միջուկով կը սրբէ երախային օծուած մասը եւ իր բթամատը:

Յետոյ կու գան սուրբ աւազանին մօտ, եւ քահանան, առնելով պատրաստուած գաղջ ջուրը, խաչաձեւ կը թափէ աւազանին մէջ ըսելով.

Քին. Տիրոջ ձայնը ջուրերուն վրայ, եւ Աստուած իր փառքովը կ'որոտայ եւ Տէրն ինքը բազմառատ ջուրերու վրայ:

Սրկ. Տիրո՛ջ մատուցէք, Աստուծոյ որդիներ, Տիրո՛ջ մատուցէք խոյերու որդիները:

Ապա կը սկսին մերկացնել երախան՝ եթէ մանուկ է:

ԸՆԹԵՐՑՈՒՄ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ

Պօղոս առաքեալին Գաղատացիներուն ուղղուած Թուղթէն է այս ընթերցուածս, 3 24-29.

Օրէնքը դաստիարակ եղաւ մեզի դէպի Քրիստոս, որպէսզի հաւատքով արդարանանք: Բայց երբ հաւատքը եկաւ, այլեւս դաստիարակի պէտք չկայ, որովհետեւ ամէնքդ Աստուծոյ որդիներ էք Յիսուս Քրիստոսով:

Անգամ մը որ Քրիստոսի մէջ մկրտուեցաք, Քրիստոսը զգեցած էք. չկայ այլեւս խտրութիւն ո՛չ հրեայի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ստրուկի եւ ո՛չ ազատի, ո՛չ արուի եւ ո՛չ էգի, որովհետեւ դուք ամէնքդ մէկ էք Քրիստոս Յիսուսով:

Եթէ դուք Քրիստոսի կը պատկանիք, ուրեմն զաւակ էք Աբրահամի եւ համաձայն խոստումին՝ նաեւ ժառանգորդներ:

Արկ. Ալէլուիա, ալէլուիա: Տէրը պիտի հովուէ զիս, եւ ոչինչ պիտի պակսի ինծի:

Արկ. Ալէլուիա օրթի:

Քհն. Խաղաղութիւն ջ ամենեցուն:

Արկ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Երկիւղածութեամբ լուարուք:

Քհն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու, (3, 1-8)

Սրկ. Փառք քեզ, Տէր Աստուած մեր:

Պռոսխումէ: Ասէ Աստուած:

Քհն. Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Փարիսեցիներու մէջ Նիկողեմոս անունով մարդ մը կար, հրեայ իշխան մը: Ասիկա գիշեր մը Յիսուսի քով եկաւ եւ ըսաւ անոր. «Ռա'բբի, գիտենք որ Աստուծմէ եկած ես իբրեւ Վարդապետ, որովհետեւ ոչ ոք կրնայ ընել քու գործած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ»:

Յիսուս պատասխան տալով ըսաւ. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, եթէ մէկը վերստին չծնի, չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»:

Նիկողեմոս ըսաւ. «Ինչպէ՞ս կրնայ մարդը ծնիլ՝ երբ արդէն ծեր է. կարելի՞ քան է որ մէկը նորէն մօրը որովայնը մտնէ ու ծնի»:

«Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, պատասխանեց Յիսուս, եթէ մէկը ջուրէն եւ հողիէն չծնի չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել: Որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է եւ հողիէն ծնածը՝ հոգի»:

Այլ սուրբ գրային Ընթերցումներ

(Տե՛ս Յաւելուած՝ էջ 32)

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Երկնատուր խաղաղութեան եւ մեր անձերու փրկութեան համար աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Աշխարհի խաղաղութեան եւ սուրբ Եկեղեցւոյ հաստատութեան համար աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Որպէսզի Տէր Աստուած ուղղէ մեր գործերը, ինչպէս նաեւ քահանայիս որ պիտի մկրտէ այս երախան, աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Որպէսզի Սուրբ Հոգին գործակից ըլլայ սրբելու այս ջուրը, աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Որպէսզի այս ջուրն ընդունի Յորդանանի օրհնութիւնը, եւ հոգիներու եւ մարմիններու բժշկութեան ծառայէ, աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Որպէսզի Ա. Ա., այս երախան, որ այս ջուրին մէջ կը մկրտուի, լոյսի եւ ճշմարտութեան որդի ըլլայ, աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Յիշելով Աստուածածին Մարիամ միշտ Կոյսը, սուրբ Յովհաննէս Մկրտիչը եւ բոլոր Սուրբերը, անոնց միջնորդութեամբ աղաչենք:

Քհն. Յիշէ՛, Տէ՛ր, եւ ողորմէ՛:

Սրկ. Մեր ճշմարիտ եւ սուրբ հաւատքին համար միաբան աղաչենք:

Քհն. Տէր, ողորմէ՛:

Սրկ. Մեր անձերը եւ զիրար յանձնենք ամենակալ Տէր Աստուծոյ:

Քհն. Քեզի՛, Տէր, կը յանձնենք մեր անձերը:

Սրկ. Ողորմէ մեզի, Տէր Աստուած մեր, մեծ ողորմութեամբդ. ամէնքս միաբան ըսենք:

Քհն. Տէր, ողորմէ: Տէր, ողորմէ՛: Տէր, ողորմէ՛:

Մինչ սարկաւագը կ'ըսէ քարոզը, կնքահայրը (կամ կնքամայրը) դարձեալ կ'առնէ երախան իր գիրկը եւ կը կենայ աւագանին մօտ:

Քարոզին աւարտին, քահանան այս Աղօթքը կ'ըսէ մկրտութեան ջուրին վրայ:

ԱՂՕԹՔ

Քհն. Տէ՛ր մեր, Յիսուս Քրիստոս, որ քու մեծ գօրութեամբդ ստեղծեցիր ծովն ու ցամաքը եւ անոնց մէջ գտնուող արարածները, զատեցիր ջուրերը երկրի եւ երկինքի, ուր կը բնակին լուսեղէն հրեշտակները, որ անդադար կը փառաբանեն քեզ:

Առաքեցիր նաեւ սուրբ Առաքեալները, պատուիրելով որ քարոզեն ու մկրտեն բոլոր հեթանոսները Հօր, Որդիին եւ սուրբ Հոգիին անունով:

Դարձեալ անսուտ խօսքովդ վճռեցիր՝ թէ եթէ մէկը չձնի ջուրէն ու Հոգիէն, չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Այս խօսքէն մղուած, Ա. Ա., քու ծառայ/աղախինդ փափաքելով մտնջենաւոր կեանքին, կամովին եկաւ մկրտուելու այս հոգեւոր ջուրով:

Կ'աղաչենք, Տէր, զրկէ՛ Սուրբ Հոգիդ այս ջուրին վրայ եւ սրբէ՛ թ եւ օրհնէ՛ թ զայն, Տէր մեր Յիսուս Քրիստոս, ինչպէս սրբեցիր Յորդանանը՝ անոր մէջ իջնելով, Դուն որ ամենասուրբ ես եւ օրինակ բոլոր մարդոց երկրորդ ծնունդին՝ մկրտութեան այս աւագանով:

Եւ շնորհէ որ այս ջուրը, որուն մէջ այժմ կը մկրտուուի այս երախան, ըլլայ մեղքերու թողութիւն, Սուրբ Հոգիիդ ընդունելութիւն, երկնաւոր Հօրդ որդեգրութեան շնորհք եւ երկնքի արքայութեան ժառանգութիւն:

Որպէսզի, մեղքերէ սրբուած՝ այս երախան աշխարհիս մէջ ապրի քու կամքիդ համաձայն եւ հանդերձեալ անսպառ բարիքներդ ընդունի եւ ուրախութեամբ եւ գոհութեամբ միշտ փառաւորէ քեզ՝ Հօրդ եւ Սուրբ Հոգիիդ հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա քահանան, առնելով սուրբ Մեռոնը աջ ձեռքին մէջ, անով կը խաչակնքէ ջուրին վրայ՝ ըսելով երեք անգամ.

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԶՈՒՐԻ

Քհն. Օրհնեսցի թ եւ սրբեսցի ջուրս այս, նշանաւ սուրբ խաչիւս եւ սուրբ աւետարանաւս եւ սուրբ մեռոնաւս, յանուն Հօր թ եւ Որդոյ թ եւ Հոգւոյն

Սրբոյ Ճ . այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

Սրկ. Ամէն. *ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:*

Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր Ճ եւ Որդւոյ Ճ եւ Հոգւոյն Ճ Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

Սրկ. Ամէն:

Ապա կ'երգեն Ծարականը (ԴԶ).

Առաքելոյ աղաւնոյ, իջանելով մեծաճայն հընչ-մամբ ի բարձանց. ի նմանութիւն լուսոյ փայլման, հրազինեաց անկիզբելի զաշակերտան. մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն:

Քահանան մի քանի կաթիլ սուրբ Մեռոն կը հոսեցնէ խաշաձեւ ջուրին մէջ՝ ըսելով.

Քհն. Մեր Տէր Յիսուս Քրիստոսի եւ մխիթարիչ Սուրբ Հոգիին այս Մեռոնին հեղումը, թող կատարուի Սուրբ Երրորդութեան անունով. ամէն:

ԱՂՕԹՔ

Քհն. Տէ՛ր, որ ծառադ/աղախինդ հրաւիրեցիր սրբութեան եւ մկրտութեան, արժանի ըրէ՛ զինք այս մեծ շնորհքիդ. վերցուր իրմէ՛ մեղքին հնութիւնը եւ նորոգէ՛ զինք նոր կեանքով: Լեցուր Սուրբ Հոգիիդ զօրութեամբ, որպէսզի նորոգուի Քրիստոսիդ փառքով: որովհետեւ քեզի՛ միայն, բարերա՛ր Աստուած, կը վայելէ՛ փառքը, իշխանութիւնը եւ պատիւը, այժմ

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ապա քահանան կը հարցնէ երախայինն.

Քհն. Ա. Ա. *ի՞նչ կը խնդրես:*

Կնքհ. *Կը խնդրեմ մկրտուիլ:*

Քհն. *Ճշմարտապէ՞ս կը խնդրես:*

Կնքհ. *Հաւատքով կը խնդրեմ մկրտուիլ եւ մաքրուիլ մեղքերէն, ազատիլ սատանայէն եւ ծառայել Աստուծոյ:*

Քհն. *Հաւատքիդ համաձայն թող ըլլայ:*

Ապա քահանան, նորոգելով դիտաւորութիւնը կատարելու մկրտութեան սուրբ խորհուրդը, կ'առնէ երախան կնքահօր (կամ կնքամօր) ձեռքէն, եւ ձախ ձեռքով կը բռնէ անոր վիզէն, եւ աջով՝ ոտքերը, գլուխը դէպի արեւմուտք ուղղուած եւ ոտքերը արեւելք, գլուխը բարձր, երեսը դէպի վեր, ոտքերը վար՝ կ'իջեցնէ աւազանին մէջ, եւ տարածելով երախան կոնակին կողմէ՝ ձախ ձեռքին վրայ, եւ առնելով սուրբ ջուրէն աջ ակով՝ կը մկրտէ երախան խաչածե՛լ ըսելով մէկ անգամ, որոշակի եւ մտադիրութեամբ, այսպէս.

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Քհն. *Աստուծոյ ծառան/աղախինը, Ա. Ա., կը մկրտուի ձեռքովս յանուն Հօր ✠ եւ Որդւոյ ✠ եւ Հոգւոյն ✠ Սրբոյ:*

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Եւ այս խօսքերուն հետ միասին, քահանան երեք անգամ ափ մը ջուր կը թափէ երախային գլուխը: Ապա, դարձեալ, ձախ ձեռքով կը բռնէ երախային վիզը եւ աջով անոր ոտքերը, եւ երեք անգամ կը մխրճէ ջուրին մէջ, իբր խորհրդանիշ՝ հին մեղքի թաղումին եւ ի նմանութիւն Քրիստոսի երեքօրեայ թաղումին, ըսելով մէկ անգամ.

*Քհն. Քրիստոսի արեամբ մեղքի գերութենէն գըն-
ուած, այս մկրտեալը կ'ընդունի երկնաւոր Հօր որ-
դեգրութեան ազատութիւնը, դառնալով ժառանգա-
կիցը Քրիստոսի եւ տաճարը Սուրբ Հոգիին. այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Չափահասի պարագային, զանց կ'առնուի ջուրի մէջ մխրճումը, բայց անպայման կ'ըսուի «**Գնեալ, արեամբ**» աղօթքը: Ապա քահանան կ'ըսէ.

*Քհն. Դուն որ մկրտուեցար Քրիստոսի մէջ, այժմ
Քրիստոսը զգեցար. դուն որ Հօր մէջ լուսաւորուե-
ցար, այժմ Սուրբ Հոգին կը բերկրի քու մէջդ:*

Եթէ երկու կամ աւելի ըլլան երախաները, քահա-
նան առանձին առանձին հարցում կ'ուղղէ եւ կը
մկրտէ ամէն մէկը:

Եթէ մանչ եւ աղջիկ միասին կը մկրտուին, նախ
մանչը կը մկրտուի:

Եթէ հաւանական տարակոյս ըլլայ թէ երախան
նախապէս մկրտուած է, այն ատեն քահանան հե-
տեւեալ ձեւով կ'ըսէ.

ՔՈՏ. Աստուծոյ ծառան/աղախինը, Ա. Ա., եթէ մկրտուած չէ, կը մկրտուի իմ ձեռքովս յանուն Հօր ✕ եւ Որդւոյ ✕ եւ Հոգւոյն ✕ Սրբոյ:

ԱԻԵՏԱՐԱՆ

Արկ. Օրթի:

ՔՈՏ. Խաղաղութիւն ✕ ամենեցուն:

Արկ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Երկիւղածութեամբ լուարուք:

ՔՈՏ. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի, (3, 13-17.):

Արկ. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Պռոսխումէ: Ասէ Աստուած:

ՔՈՏ. Տէրն մեր ✕ Յիսուս Քրիստոս.

Այն ատեն Յիսուս Գալիլեայէն Յորդանան եկաւ, Յովհաննէսի մօտ, անկէ մկրտուելու: Բայց Յովհաննէս արգիլեց զինք ըսելով. «Ես պէտք եմ քեզմէ մկրտուիլ, դուն ինձի՞ կու գաս»:

Յիսուս պատասխանեց եւ ըսաւ անոր. «Թոյլ տուր հիմա, պատշաճ է մեզի որ այսպէս կատարենք ամէն արդարութիւն»: Այն ատեն Յովհաննէս թոյլ տուաւ:

Երբ Յիսուս մկրտուեցաւ, իսկոյն ջուրէն դուրս ելաւ, եւ ահա երկինքը բացուեցաւ իրեն եւ տեսաւ Աստուծոյ Հոգին որ կ'իջնէր աղանիւի նման եւ իր վրայ կու գար:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Եւ ահա երկինքէն ճայն մը որ կ'ըսէր. «Դա է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ»:

Ապա քահանան մկրտեալին կամ կնքահօր (կամ կնքամօր) եւ բոլոր ժողովուրդին հետ կ'ըսէ.

Քհն. եւ ժող. Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեցցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս՝ եւ յերկրի:

Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, եւ թող մեզ զպարտիս մեր՝ որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն:

Զի քո է արքայութիւն թ Եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. Ամէն:

Կամ աշխարհաբար՝

Հայր մեր, որ երկինքն ես, սուրբ ըլլայ քու անունդ, թող գայ թագաւորութիւնդ, թող ըլլայ քու կամքդ, ինչպէս երկինքի մէջ՝ նոյնպէս երկրի վրայ:

Մեր ամենօրեայ հացը տուր մեզի այսօր, եւ ներէ՛ մեզի մեր յանցանքները, ինչպէս որ մենք ալ կը ներենք՝ մեզի դէմ յանցանք գործողներուն:

Եւ մի՛ տանիր մեզ փորձութեան, այլ փրկէ՛ մեզ չարէն:

Որովհետեւ քո՛ւկդ է արքայութիւնը թ Եւ զօրութիւնը եւ փառքը՝ յաւիտենապէս. ամէն:

ԱՂՕԹՔ

Քհն. Հայր՝ մեր Տիրոջ, Յիսուս Քրիստոսի, որ լու-

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

սաւորեցիր քու արարածներդ աստուածգիտութեան լոյսը մեր մէջ ծագելով, որ ազատեցիր այս ծառադ /աղախինդ Ա. Ա., սրբեցիր զինքն ու արդարացուցիր եւ որդեգրութեան պատիւին արժանացուցիր, շնորհէ իրեն նաեւ մասնակցութիւն՝ կեանքիդ, պարգեւէ անոր մշտական անապականութիւն, դասելով արդարներուդ հետ՝ քու սուրբերուդ թիւին մէջ: Շնորհիւ քու Միածինիդ, մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որուն հետ, քեզի՝ Հայր, եւ Սուրբ Հոգիիդ, կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

✠ ✠ ✠

ԿԱՆՈՆ ԳՐՈՇՄԻ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԳԻՆ

Թէպէտ, ինչպէս կ'ուսուցանէ սուրբ Եկեղեցին, միայն եպիսկոպոսն է օրինաւոր պաշտօնեան Դրոշմի սուրբ Խորհուրդին, սակայն հայաձէս քահանան, իբր անոր արտաքոյ կարգի պաշտօնեան, անյիշատակ ժամանակներէ ի վեր, հաւանութեամբ Կաթողիկէ սուրբ Եկեղեցոյ, կրնայ մատակարարել այս խորհուրդը, որ կը կատարուի մկրտութենէն անմիջապէս ետք, հետեւեալ ձեւով:

Աւարտելէ ետք մկրտութեան կանոնը, քահանան, պաշտօնեաներով եւ դպիրներով, կու գան մկրտարանի խորանը, ուր դրուած կ'ըլլայ սուրբ Մեռոնը, բամպակը եւ հացի միջուկը: Նախապէս որոշուած տեղ մը՝ պատրաստ կը գտնուին գլխարկն ու սպիտակ զգեստը եւ երկու մոմեր, նուիրեալին համար:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ընկալ, կեցո եւ ողորմեա՛:

Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր ✠ եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քահանան աջ ձեռքը կը դնէ մկրտեալին գլխուն վրայ, ապա, տարածուած բռնելով զայն անոր վրայ, կ'ըսէ.

ՔՐՈՑ. *Տէր Աստուած, մարդասէր եւ ողորմած, կը խնդրենք քեզմէ եւ կ'աղաչենք՝ ինչպէս որ ջուրի եւ Հոգևոյ վերածնութեամբ արժանի ըրիր ծառադ (կամ աղախինդ) երանելի յոյսիդ եւ յաւիտենական փրկութեանդ, այս ձեռնադրութեամբս շնորհէ անոր սուրբ Հոգևոյդ խաղաղութեան պարգեւները եւ մասնակից ըրէ զինք յաւիտենական եւ ճշմարիտ լոյսիդ, եւ դասէ երկնքի սուրբերուդ ժողովին մէջ, եւ արժանի ըրէ փառաւորեալ արքայութեանդ: Խաղաղ պահէ անոր կեանքին ընթացքը, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքով, որու հետ՝ Հօր եւ Սուրբ Հոգիիդ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եթէ մէկէ աւելի միասին կը դրոշմուին, քահանան աջ ձեռքը կը դնէ ամէն մէկուն գլխուն վրայ, եւ ապա, ձեռքը բարձրացնելով եւ տարածուած բռնելով անոնց ուղղութեամբ, կ'ըսէ, յոգնակի, նոյն Աղօթքը. «Տէր Աստուած մարդասէր»:

Շարական (ԴԶ)

Որ յառաջագոյն յօրէնս, յօրինակ Միածնի քոյ, Հայր երկնաւոր, ետուր զօրութիւն ի յիւղ սրբութեան յօծումըն օծելոյ. հեղ եւ յիւղս յայս գերկնային քո գնորհս:

ՕԾՈՒՄ

Շարականի աւարտին, քահանան, նորոգելով իր դիտաւորութիւնը Դրոշմի խորհուրդը կատարելու, աջ

Գ Ր Ո Շ Մ

բթամատը կը թաթխէ սուրբ Մեռոնիմ մէջ, եւ նոյն ձեռքը նուիրեալին գլխուն վրայ դնելով, իր բուրձովը խաշաձեւ կ'օծէ անոր ճակատը.

Քհն. Ա. Ա., այս անոյշ իւղը, որ կը հեղու քու վրադ Յիսուս Քրիստոսի անուկով՝ թող ըլլայ կնիք թ ստուածային եւ երկնաւոր պարգեւներու. Հօր թ Որդիին թ եւ Սուրբ թ Հոգիին անուկով. ամէն:

Կ'օծէ աչքերը՝ ըսելով մէկ անգամ.

Յիսուս Քրիստոսի անուկով դրուած այս թ կնիքը թող լուսաւորէ աչքերդ, որպէսզի երբեք չմտնես մահուան քունին մէջ:

Կ'օծէ ականջները՝ ըսելով մէկ անգամ.

Յիսուս Քրիստոսի անուկով դրուած այս թ կնիքը լսելի թող ընէ քեզի աստուածային պատուէրները:

Կ'օծէ հոտոտելիքը՝ ըսելով.

Յիսուս Քրիստոսի անուկով դրուած այս թ կնիքը թող ըլլայ քեզի համար անոյշ հոտ՝ կեանքէն դէպի կեանք:

Կ'օծէ բերանը՝ ըսելով.

Յիսուս Քրիստոսի անուկով դրուած այս թ կնիքը թող ըլլայ պահապան քու բերանիդ եւ ամուր դուռ քու շրթունքներուդ համար:

Կ'օծէ երկու ձեռքերուն ափերը՝ ըսելով մէկ անգամ.

Յիսուս Քրիստոսի անունով դրուած այս Ճ կնիքը թող ըլլայ պատճառ բարեգործութեան, առաքիւնի վարքի եւ գործերու:

Կ'օծէ սիրտը՝ ըսելով.

Յիսուս Քրիստոսի անունով դրուած այս Ճ կնիքը թող սուրբ սիրտ մը հաստատէ քու մէջդ եւ ուղիղ հոգի մը նորոգուի քու անձիդ մէջ:

Կ'օծէ կոնակը՝ ըսելով.

Յիսուս Քրիստոսի անունով դրուած այս Ճ կնիքը թող ըլլայ ամուր վահան մը, որով կարենաս մարել չարին բոլոր հրեղէն նետերը:

Կ'օծէ երկու ոտքերուն երեսը՝ ըսելով մէկ անգամ.

Յիսուս Քրիստոսի անունով դրուած այս Ճ կնիքը թող ուղղէ ոտքդ եւ անոր քայլերը դէպի յաւիտեանական կեանք:

Ապա, քահանան երեք անգամ կը խաչակնքէ որոշմեալին վրայ՝ ըսելով.

Քհն. *Խաղաղութիւնը Ճ քեզի՛ հետ, փրկեա՛լդ Աստուծոյ:*

Կնքի. (Խոնարհելով կ'ըսէ) *Նաեւ քո՛ւ հոգիիդ հետ:*

Քհն. *Խաղաղութիւնը Ճ քեզի՛ հետ, օծեա՛լդ Աստուծոյ:*

Կնքի. (Խոնարհելով կ'ըսէ) *Նաեւ քո՛ւ հոգիիդ հետ:*

Քհն. *ԽաղաղուԹիւն թ քեզի՛ հետ, բերկրեա՛լդ Աստուծոյ:*

Կնքի. (Խոնարհելով կ'ըսէ) *Նաեւ քո՛ւ հոգիիդ հետ:*

Քահանան կը սրբէ իր բթամատը բամպակով կամ հացի միջուկով, կը լուայ ձեռքը եւ կը սրբէ անձեռոցով:

Ապա դպիրները կը բերեն քահանային առջեւ ափսէի մը վրայ երեխային գլխարկը եւ սպիտակ զգեստը, եւ քահանան կ'օրհնէ զանոնք՝ ըսելով.

Քհն. *Օրհնեա՛լ ես, ամենակարո՛ղ Տէր, Հայր եւ առաքիչ մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ ծառադ (կամ աղախինդ) ազատեցիր Թշնամիին խաւարային իշխանութենէն եւ սուրբ աւագանին միջոցաւ, զինք ճշմարիտ լոյսին հրաւիրեցիր:*

Օրհնէ՛ թ Տէր, այժմ, այս պսակն ու զգեստը, որոնք լոյսի խորհրդանիշ են, որպէսզի ամբողջապէս ամրացած եւ պայծառացած քու հաստատուն յոյսովդ, ընթանայ երեսիդ լոյսովը եւ քու անունովդ ցնծայ միշտ եւ փառաւորէ քեզ, Որդիին եւ Սուրբ Հոգիիդ հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա քահանան կը դնէ գլխարկը դրոշմեալին գլխուն վրայ՝ ըսելով.

Քհն. *Ա. Ա., ա՛ն այս պայծառ զգեստը, եւ պահէ՛ զայն անաղարտ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ատեանին առջեւ, որպէսզի յաւիտենական կեանքը ստանաս. ամէն:*

Ապա քահանան կը դնէ սպիտակ զգեստը դրոշմեալին վրայ եւ կ'ըսէ.

Քհն. *Օրհնեա՛լ ես, բարեխնամո՛ղ Աստուած՝ որ Ա. Ա., ծառայիդ (կամ աղախինիդ) հագցուցիր փրկութեան զգեստը եւ ուրախութեան պատմուճանը, եւ անոր գլուխը դրիր փրկութեան սաղաւարտը եւ շնորհքի պսակը՝ իբրեւ անպարտելի զէնք թշնամիին դէմ:*

Ուստի մենք ալ, գոհութիւն մատուցանելով, կը փառաւորենք քեզ, Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա քահանան երկու մոմեր վառելով, կու տայ դրոշմեալին՝ ըսելով.

Քհն. *Ա՛ռ այս վառած մոմերը եւ ամբիժ պահպանէ դրոշմդ, պահէ՛ Աստուծոյ պատուիրանները, որպէսզի երբ Տէ՛րը հարսանիքի գայ, անոր առջեւ ելլես բոլոր սուրբերուն հետ եւ ժառանգես յաւիտենական կեանքը: Ամէն:*

Աղօթքի ասարտին քահանան, իր թեւերուն մէջ առնելով դրոշմեալը, վառած մոմերով, – իսկ եթէ չափահաս է՝ զայն կողքին ունենալով–, կը դառնայ դէպի խորան եւ կ'երկրպագէ՝ խոնարհելով սուրբ խորանին առջեւ եւ ըսելով.

Քհն. *Ա. Ա., Յիսուսի Քրիստոսի ծառան (կամ աղախինը), որ մեղքէն մերկացաւ եւ աստուածային գիտութեան լոյսով զգեստաւորուեցաւ, յօժար կամքով երկրպագելու եկած, կ'երկրպագէ սուրբ խորա-*

նին առջեւ՝ Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով:
Ամէն:

Ապա կու տայ դրոշմեալը կնքահօր եւ կ'ըսէ.

ԱՂՕԹՔ

Քհն. Յիսուս Քրիստոս, խաղաղութիւն եւ հաստատող խաղաղութեան, օծեալ եւ երկրպագելի եւ յաւիտենական քահանայապետ, ահա, ծառադ (կամ աղախինդ) ստացաւ սրբութեանդ օծումը:

Ուստի կ'աղաչենք, Տէ՛ր, մի՛ ջնջեր զինք կեանքի գիրքէն: Եւ մենք ալ արժանի ըլլանք երկնային փառքիդ, երբ քու սուրբերդ եւ քեզ սիրողները պսակես: Եւ անդադար փառաւորենք Քեզ՝ Հօր եւ Սուրբ Հոգիիդ հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սրկ. Սուրբ խաչին շնորհիւ աղաչենք Տիրոջ, որ ասով փրկէ մեզ մեղքերէն եւ ազատէ՝ իր ողորմութեան շնորհիւ: Ամենակալ Տէր Աստուած մեր, փրկէ՛ եւ ողորմէ՛:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛:

Պահպանիչ եւ յոյս հաւատացեալներու, Քրիստո՛ս, Աստուած մեր, խաղաղութեամբ պահպանէ՛ այս դրոշմեալը, կնքահայրը եւ կնքամայրը, անոր ծնողները, եւ այս ժողովուրդդ՝ սուրբ եւ պատուական խաչիդ հովանիին տակ: Փրկէ՛ տեսանելի եւ անտեսանելի թշնամիէն, արժանի՛ ըրէ՛ գոհութեամբ փառաւորելու քեզ՝ Հօր եւ Սուրբ Հոգիիդ հետ, այժմ եւ

միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քհն. Օրհնեալ Ճէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Դպիրք ձայնիւ.

Հայր մեր որ յերկինս ես, Սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի:

Ձկաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց. եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի հարէ:

Քհն. Ձի քո է արքայութիւն Ճ եւ զօրութիւն եւ փառք. յաւիտեանս. ամէն:

Եւ Քահանան կ'ըսէ դրոշմեալին.

Քհն. Ա. Ա. , գնա՛ խաղաղութեամբ եւ Տէրը ըլլայ քեզի հետ: Ամէն:

✠ ✠ ✠

ՅԱԻԵԼՈՒԱԾ ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ա. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԹՈՒՂԹԵՐ

Պօղոս Առաքեալին Հոռոմայեցիներուն ուղղուած Թուղթէն է այս ընթերցուածը, 6, 3-8.

Մենք, մկրտուելով Յիսուս Քրիստոսով, անոր մահով մկրտուեցանք:

Մենք, Քրիստոսի հետ թաղուեցանք մահուան մէջ մկրտութեամբ, որպէսզի, ինչպէս որ ինքը յարութիւն առաւ մեռեալներէն Հօր փառքով, մենք ալ ապրինք նոր կեանքով:

Որովհետեւ եթէ մահուան նմանութեամբ վիճակակից եղանք Քրիստոսի, անոր յարութեան ալ պիտի ըլլանք մասնակից (...)

Եթէ մեռանք Քրիստոսի հետ, կը հաւատանք թէ Քրիստոսի հետ ալ պիտի ապրինք:

Պօղոս Առաքեալին Կորնթացներուն ուղղուած Ա. Թուղթէն է այս ընթերցուածը, 12, 12-13.

Ինչպէս որ մարմինը մէկ է, թէպէտ բազմաթիւ անդամներ ունի, եւ մարմինին բազմաթիւ անդամները մէկ մարմին կը կազմեն, այնպէս ալ Քրիստոս:

Որովհետեւ ամէնքս ալ մկրտուած ենք միեւնոյն Հոգիով, կազմելու համար մէկ մարմին:

Հրեայ կամ հեթանոս, ստրուկ կամ ազատ, ամէնքս ալ միեւնոյն Հոգիէն ըմպած ենք:

Պետրոս Առաքելալին Ա. Թուղթէն Է այս ընթերցուածը, 2, 4-5, 9-10

Մօտեցէ՛ք Տիրոջ, կենդանի Վէմին, որ մերժուեցաւ մարդոցմէ, սակայն ընտրեալ եւ թանկագին է յաչս Աստուծոյ:

Դուք ալ, իբրեւ կենդանի քարեր, մասնակցեցէ՛ք հոգեւոր տաճարին կառուցման՝ սուրբ քահանայութեան մը համար, որպէսզի Քրիստոսի միջոցաւ նուիրէք Աստուծոյ հոգեւոր եւ հաճելի զոհեր (...)

Դուք՝ ընտրեալ ցեղ մըն էք, թագաւորական քահանայութիւն, սուրբ եւ սեփական ժողովուրդ մը, հռչակելու համար գովաբանութիւնները Անոր՝ որ ձեզ կանչեց խաւարէն իր սքանչելի լոյսին:

Դուք որ ատենօք ժողովուրդ մը չէիք, իսկ հիմա Աստուծոյ ժողովուրդն էք, ատենօք գթութիւն չէիք ընդունած, իսկ հիմա գթութեան արժանացաք:

Պօղոս Առաքելալին Հոռոմայեցիներուն ուղղուած Թուղթէն Է այս ընթերցուածը, 8, 28-32.

Գիտենք թէ Աստուած ամէն բանի մէջ գործակից է բարիքին անոնց՝ որոնք զինքը կը սիրեն եւ կանչուած են իր կամքին համաձայն:

Անոնք զորս կանխաւ ճանչցաւ՝ նախասահմանեց ըլլալ կերպարանակից իր Որդիին պատկերին, որպէսզի ան ըլլայ անդրանիկը բազմաթիւ եղբայրներու մէջ:

ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Անոնք զորս նախասահմանեց՝ նաեւ կանչեց, անոնք որ կանչեց՝ նաեւ արդարացուց, եւ անոնք որ արդարացուց՝ նաեւ փառաւորեց:

Իսկ արդ ի՞նչ ըսենք ասկէ ետք. եթէ Աստուած մեզի հետ է, ո՞վ է մեզի հակառակ: Ինք որ չխնայեց իր Որդիին, այլ մատնեց զինք մեզի համար, ի՞նչպէս անով պիտի չչնորհէ մեզի ամէն բան:

Պօղոս Առաքեալին Եփեսացիներուն ուղղուած Թուղթէն է այս ընթերցումը, 4, 1-61.

Կը յորդորեմ ձեզ որ ապրիք ձեր ընդունած կոչումին արժանի կեանքով եւ ամենայն խոնարհութեամբ եւ հեզութեամբ:

Միրով հանդուրժեցէք իրարու. պահպանեցէք Հոգիին միաբանութիւնը խաղաղութեան զօրով:

Մէկ է Մարմինը եւ մէկ՝ Հոգին, ինչպէս նաեւ մէկ է յոյսը ձեր կոչումին:

Մէկ է Տէրը, մէկ է Հաւատքը, մէկ է մկրտութիւնը, եւ մէկ է Աստուած, Հայրը ամէնուն, ամէնէն վեր, ամէնուն հետ եւ ամէնուն մէջ:

Բ. ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Աւետարան ըստ Մատթէոսի, 26, 18-20.

Յիսուս ըսաւ. «Ամէն իշխանութիւն տրուեցաւ ինծի երկինքի մէջ եւ երկրի վրայ:

Գացէ՛ք ուրեմն, աշակերտեցէ՛ք բոլոր ազգերը եւ մկրտեցէ՛ք զանոնք՝ Հօր, Որդւոյն եւ Սուրբ Հոգւոյն անունով:

*Սորվեցուցէ՛ք անոնց պահել ինչ որ ես ձեզի պատ
ւիրեցի: Ահաւասիկ ես ձեզի հետ եմ ամէն օր՝ մինչեւ
աշխարհի կատարածը»:*

Աւետարան ըստ Մարկոսի, 10, 13-16.

*Մանուկներ կը բերէին Յիսուսի, որպէսզի ձեռքը
դնէ անոնց վրայ: Աշակերտները կը սաստէին մա-
նուկները բերողները:*

*Ասիկա տեսնելով, Յիսուս յանդիմանեց զանոնք եւ
ըսաւ. «Թո՛ղ տուէք որ մանուկները ինծի գան, այդ-
պիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը:*

*Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, այն որ չ'ընդունիր երկին-
քի արքայութիւնը մանուկի մը նման՝ պիտի չմտէ
հոն»:*

*Ապա Յիսուս գիրկը առաւ եւ օրհնեց զանոնք՝
ձեռքերը անոնց վրայ դնելով:*

Աւետարան ըստ Յովհաննու, 7, 37-39.

*Մեծ տօնին վերջին օրը, Յիսուս, կանգնած, աղա-
ղակեց եւ ըսաւ. «Եթէ մէկը ծարաւի է, թող ինծի գայ
եւ թող խմէ. այն որ կը հաւատայ, Գրքին խօսքին
համաձայն, կենսատու ջուրի գետեր պիտի հոսին
անոր ծոցէն»:*

*Յիսուս ասիկա ըսաւ Հոգիին մասին, զոր պիտի
ընդունէին անոնք որ իրեն հաւատացին, որովհետեւ
տակաւին Հոգին չէր իջած, քանի ինք դեռ չէր փա-
ռաւորուած:*

ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Աւետարան ըստ Մարկոսի, 1, 9-11.

Այն օրերուն, Յիսուս եկաւ Գալիլիոյ Նազարէթ քաղաքէն եւ մկրտուեցաւ Յովհաննէսէն Յորդանան գետին մէջ:

Եւ նոյն ժամուն, երբ ջուրէն դուրս կ'ելլէր, տեսաւ երկինքը բացուած եւ Աստուծոյ Հոգին որ կ'իջնէր իր վրան աղանիի նման:

Եւ երկինքէն ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր. «Դուն ես իմ սիրելի Որդիս, քու վրադ դրած եմ իմ ամբողջ հաճութիւնս»:

✠ ✠ ✠

ԿԱՆՈՆ ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ ՄԱՆՈՒԿԸ ԵԿԵՂԵՑԻ ԲԵՐԵԼՈՒ

Երբ մանուկը քառասուն օրուայ ըլլայ, եւ բաղձանք կը յայտնուի այս գովելի սովորութիւնը կատարելու, մայրը կ'առնէ ընծայուելիք երեխան եւ կը ներկայանայ եկեղեցոյ դուռը՝ Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելու եւ քահանային օրհնութիւնը առնելու դիտարութեամբ:

Քահանան, ուրարով եւ շուրջառով զգեստաւորուած, հետը առած օրհնեալ ջորի ամանը եւ մշտիկը, եկեղեցոյ դրան առջեւ կ'ելլէ: Մայրը, գիրկը առած մանուկը, եւ վառած մոմ մը ձեռքին, կը կանգնի քահանային դիմաց:

Քահանան մշտիկով խաչաձեւ կը ցօղէ մօր, մանուկին եւ ժողովուրդին վրայ, ըսելով.

Յօղէ զիս մշտիկով եւ մաքուր պիտի ըլլամ. լուա, եւ ձիւնէն աւելի սպիտակ պիտի դառնամ:

Ապա այս աղօթքը կ'ըսէ մանուկին մօր վրայ.

Տէր Աստուած մեր, որ մարդկային ազգը փրկելու եկար, նայէ՛ այս աղախինիդ վրայ եւ շնորհէ անոր ապաւինիլ՝ սուրբ, կաթողիկէ եւ առաքելական Եկեղեցիիդ եւ հաղորդուիլ պատուական սուրբ Մարմինիդ եւ Արիւնիդ:

Լուա եւ սրբէ զայն ամէն մարմնական աղտէ եւ հոգեւոր բիծէ, մինչ կը կատարէ լրումը այս քառա-

սուն օրերուն, եւ սրբէ՛ գայն քահանայութեան շնորհ-
քի պատուական ուխտին միջոցաւ: Եւ արժանի ըրէ
զինքը մտնելու սուրբ տաճարիդ փառքին մէջ եւ
վայելելու քեզմէ բխող անսպառ բարիքները: Որով-
հետեւ քեզի կը վայելէ փառքը, իշխանութիւնը եւ
պատիւը. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից-
ամէն:

Քհն. Խաղաղութիւն ջ ամէնուն:

Սրկ. Նաեւ քու Հոգիիդ հետ:

Քհն. Աստուծոյ երկրպագենք:

Սրկ. Քու առջեւդ, Տէր:

Քահանան հետեւեալ աղօթքը կ'ընէ
մանուկին վրայ.

Տէր Աստուած, որ կը նորոգես հին բաները եւ
կեանք կու տաս մահկանացու մարդկային ազգին.
դուն զօրութիւնն ես եւ օգնութիւնը քեզի ապաւի-
նողներուն: Թող հաստատուն ըլլայ ողորմութեանդ
շնորհքը քեզի նուիրուող այս մանուկին վրայ, որ
քառասուն օրուայ եղած՝ կու գայ հոս, որպէս զի
դառնայ հզօր եւ աներկիւղ՝ թշնամիին յարձակում-
ներուն դէմ, քու սուրբ աջիդ պահպանութեամբը.
որովհետեւ դուն ամէնուն մօտ Տէրն ես եւ բարերարը
բոլորին:

Պահպանէ՛ այս մանուկը եւ մաքրէ՛ գայն քու
ճշմարտութեամբդ. եւ արժանի ըրէ գայն՝ սրբու-
թեամբ ստանալու քու սուրբ Հոգիիդ երաշխիքը՝ քու
սուրբ տաճարիդ մէջ:

Կ'աղաչեմ քեզի, Տէր, որ այս մանուկին վրայ իջնէ սուրբ Հոգիդ, ճշմարտութեան հոգին, հեզութեան հոգին, եւ որդեգրութեան հոգին, որպէսզի ըլլայ անբիծ եւ անարատ, պսակուելու համար խաչովդ քու աջակողմդ եւ դառնալու ժառանգակիցը սիրելիներուդ՝ երկինքի արքայութեան մէջ, ո՛վ Քրիստոս Յիսուս, մեր Տէրը, որուն կը վայելէ փառքը, իշխանութիւնը եւ պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա կը մտնեն եկեղեցի եւ կու գան դասին մուտքին, ըսելով տուն առ տուն Սաղմոս 42.

Պիտի մտնեմ Աստուծոյ խորանին առջեւ, Աստուծոյ՝ որ կ'ուրախացնէ մանկութիւնս:

Դատս տես, Աստուած իմ, եւ իրաւունքս ճանչցիր դատաստանի ժամանակ:

Փրկէ՛ զիս անսուրբ ազգէն եւ մեղաւոր ու նենգաւոր մարդէն :

Դո՛ւն ես իմ զօրութիւնս, Աստուած իմ, ինչո՞ւ մոռցար զիս. ինչո՞ւ տրտում քալեմ ես երբ թշնամիս կը հալածէ զիս:

Լոյսդ եւ ճշմարտութիւն դրկէ ինծի, Տէ՛ր, որպէսզի առաջնորդես ինծի եւ հանեն զիս քու սուրբ լերանդ վրայ եւ դէպի քու բնակարաններդ:

Պիտի մտնեմ Աստուծոյ խորանին առջեւ, Աստուծոյ՝ որ կ'ուրախացնէ մանկութիւնս:

Պիտի խոստովանիմ քեզի՝ օրհնելով քեզ, Աստուած, ի՛մ Աստուածս:

Արդ, ինչո՞ւ տրտում ես, իմ հոգիս, կամ ինչո՞ւ կը խռովեա գիս. Աստուծոյ վրայ դիր յոյս, խոստովանէ՛ անոր, իմ անձիս փրկութիւնը Աստուած ի՛նքն է:

Փառք՝ Հօր ✠ եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն:
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ հասնելով դրան առջեւ՝ կանգ կ'առնեն: Քահանան եւ պաշտօնեաները դասին մէջ, բեմին առջեւ, դէպի խորան կը կանգնին. իսկ մայրը, մանուկով՝ դասէն դուրս, աւագ խորանին դիմաց կը կենան:

Սրկ. Այս սուրբ եկեղեցիին հետ միասին, աղաչենք Տիրոջ, որ ասով փրկէ մեզ մեղքէն եւ կենդանի պահէ՛ իր ողորմութեան շնորհիւ. ամենակալ Տէր, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Քհն. Տէր, ողորմէ՛. Տէր, ողորմէ՛. Տէր, ողորմէ՛:

ԱՂՕԹՔ

Այս տաճարին մէջ եւ այս աստուածընկալ եւ փառաւորեալ սուրբ նշաններուն եւ սուրբ խորանին առջեւ խոնարհած՝ երկիւղով կ'երկրպագենք, քու սուրբ, հրաշալի եւ յաղթական տէրութիւնդ կը փառաւորենք, եւ քեզի կը մատուցանենք օրհնութիւն եւ փառք՝ Հօրդ եւ սուրբ Հոգիիդ հետ. այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Շարական ԱԶ

Մարմնացեալդ ի Կուսէն, նախայաւիտեան Բանդ. այսօր ի տաճարն եկիր կատարել զօրէնս. վասն փրկութեան հեթանոսաց:

Որ յանարուեստ աթոռ նստիս, բարեբանեալդ ի հրեշտակաց. այսօր ի Սիմէովնի բառնալով ի գիրկս. որ ընծայեսցես ըզմեզ ի կեանքս յաւիտենից:

Որ արձակիչդ ես կապելոց, պարգեւատուն ամենեցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա եւ զիս զբազմամեղս ի կապանաց մահու ի կեանսդ յաւիտենից:

Քահանան, դառնալով, այս աղօթքը կ'ըսէ քառասնօրեայ մանուկին եւ անոր մօր վրայ՝ որ կը ծընրադրէ աղօթքին ստեւն.

Տէ՛ր, Աստուած մեր, որ ծնունդէդ քառասուն օր ետք տաճար եկար նուիրուելու համար, օրէնքին համաձայն, քու մօրդ, Մարիամին հետ, եւ արդար Սիմէոնի գիրկը առնուեցար զգուանքով:

Կ'աղաչենք քեզի, Տէ՛ր, ընդունէ՛ այս մանուկը, (Ա. Ա.) քու ծառադ (կամ աղախինդ), պահէ՛ զայն եւ անճեղճը քու անտեսանելի զօրութեանդ շնորհիւ, եւ արժանի ըրէ զայն՝ քու ընտրեալներուդ բաժին ինկած ժառանգութեան վիճակին հասնելու, եւ հաղորդուելու քու պատուական Մարմնիդ եւ Արեանդ, եւ պահպանուելու համագոյական եւ անբաժանելի Երրորդութեանդ շնորհիւ:

Որովհետեւ Քեզի, Հօրդ եւ սուրբ Հոգիիդ հետ, կը

վայելէ փառքը, իշխանութիւնը եւ պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ասկէ ետք, քահանան իր թելերուն մէջ կ'առնէ մանուկը, վառած մոմերով, եւ բեմ կը բարձրանայ, եւ երեք անգամ կ'երկրպագէ սուրբ խորանին, համբուրելով անոր երեսը, նախ մէջտեղը, ապա աջակողմը եւ վերջը՝ ձախակողմը, ըսելով մէկ անգամ.

(Ա. Ա.) Յիսուս Քրիստոսի ծառան (կամ աղախինը), քառասնօրեայ այս տաճարը գալով, երկրպագելու համար այս սուրբ խորանին, կ'երկրպագէ ահա յանուն Հօր, եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն:

Ապա քահանան մանուկը կը յանձնէ անոր մօրը:

Սրկ. Սուրբ խաչին շնորհիւ աղաչենք Տիրոջ, որ ասով փրկէ մեզ մեղքերէն եւ ազատէ՝ իր ողորմութեան շնորհիւ: Ամենակալ Տէր Աստուած մեր, փրկէ՛ եւ ողորմէ՛:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛:

Պահպանիչ եւ յոյս հաւատացեալներու, Քրիստո՛ս, Աստուած՝ մեր, խաղաղութեամբ պահպանէ՛ այս ծառադ (կամ աղախինը), անոր մայրը եւ այս ժողովուրդը՝ սուրբ եւ պատուական խաչիդ հովանիին տակ: Փրկէ՛ տեսանելի եւ անտեսանելի թշնամիէն, արժանի՛ ըրէ գոհութեամբ փառաւորելու քեզ՝ Հօր եւ Սուրբ Հոգիիդ հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քհն. Օրհնեալ ✠ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես, Սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի:

Ձհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց. եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ:

Քհն. Զի քո է արքայութիւն ✠ եւ զօրութիւն եւ փառք. յաւիտեանս. ամէն:

✠ ✠ ✠

ԿԱՆՈՆ ՆՇԱՆՏՈՒՔ ՕՐՀՆԵԼՈՒ

Ժողովրդապետը կ'ընդունի բացայայտ հաւանութիւնը նշանուելիք երկու կողմերուն, որոնք որեւէ արգելիչ չունին Եկեղեցւոյ կանոններուն համաձայն: Ապա թէ ոչ, տեղւոյն Մեծաւորին գրաւոր հաւանութիւնը պէտք է ընդունին:

Արկ. Քար. Եւ եւս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք. ընկալ կեցո եւ ողորմեա:

Քին. Օրհնութիւն եւ փառք Հօր Թ եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Շարական ԱԿ.

Խորհուրդն անճառ ծածկեալն յազգաց եւ յաւիտեանց. յայտնեցաւ իջմամբ հրեշտակապետին այսօր առ Կոյսըն Մարիամ. զոր առ Տէր ունիմըք բարեխօս վասն անճանց մերոց:

Անժամանակն առ ի Հօրէ եւ անմարմին ծոցածին ծընողնդ. այսօր աւետեօքըն Գաբրիէլի մարմին զգենու ի սրբոյ կուսէն. զոր առ Տէր ունիմըք բարեխօս վասն անճանց մերոց:

Անտանելին ի համայնից բովանդակիչ բնութեանց բոլորից. պարագրի այսօր մարդասիրապէս յորովայնի անարատ կուսին. զոր առ Տէր ունիմըք բարեխօս վասն անճանց մերոց:

Եւ ասեմ Սաղմոս 18

Կց. Ան վրան մը պարզեց վերեւ արեւուն համար, որ փեսայի նման կ'ելլէ առագաստէն եւ կը ցնծայ ինչպէս հսկան՝ որ կ'ընթանայ իր ճանապարհէն:

Փխ. Երկինքը կը պատմէ Աստուծոյ փառքը, եւ երկնակամարը կը պատմէ անոր ձեռքին արարածին մասին:

Պօղոս Առաքեալին Կորնթացիներուն ուղղուած Առաջին թուղթէն է այս ընթերցուածը (13, 1-8):

Եթէ ես խօսիմ մարդոց եւ հրեշտակներու լեզուները, բայց չունենամ սէրը, նման եմ պղինձի որ կը հնչէ եւ ծնծղայի որ կը ղօղանջէ: Եթէ ունենամ մարգարէութեան հոգին եւ թափանցեմ խորհուրդներու եւ գիտութեան գաղտնիքը, եթէ ունենամ լիութիւնը հաւատքի՝ լեռներ փոխադրելու չափ, բայց չունենամ սէր, ոչինչ եմ: Եթէ բաժնեմ բոլոր ինչքերս իբրեւ ողորմութիւն, եթէ մարմինս տամ հրոյ ճարակ, բայց սէր չունենամ, ոչինչ կ'օգտուիմ:

Սէրը համբերող է, սէրը ծառայասէր է եւ չի նախանձիր, սէրը չի պարծենար, չի հպարտանար, չի յանդրգնիր:

Սէրը սեփական շահը չի՛ փնտռեր, չի՛ գրգռուիր, չի՛ չարախօսեր, անիրաւութեան մէջ չի՛ հրճուիր, կը խայտայ ուրախութեան մէջ:

Սէրը կ'արդարացնէ ամէն բան, կը հաւատայ, կը վստահի ամէն խոստումի, կը համբերէ ամէն բանի:

Սէրը յաւերժական է:

Դպ. Ալէլուիա, ալէլուիա:

Տեսցես դու զորդիս որդւոց քոց, զխաղաղուծիւն ի վերայ Իսրայէլի:

Սրկ. Ալէլուիա օրթի:

Քհն. **Խաղաղուծիւն Ք ամենեցուն:**

Դպ. **Եւ ընդ հոգւոյդ քում:**

Սրկ. **Երկիւղածուծեամբ լուարուք:**

Քհն. **Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու. 1, 26-38:**

Դպ. **Փառք քեզ Տէր Աստուած մեր:**

Սրկ. **Պռոսխումէ:**

Դր. **Ասէ Աստուած:**

Քհն. **Ի Հօրէն Ք ամենակալէ:**

Եւ վեցերորդ ամսոյն, Գաբրիէլ հրեշտակը Աստուծոմէ զրկուեցաւ Գալիլիոյ մէկ քաղաքը, որուն անունն էր Նազարէթ, կոյսի մը, որ նշանուած էր Դաւթի տունէն Յովսէփ անուն մարդու մը հետ, եւ Կոյսին անունը Մարիամ էր:

Հրեշտակը անոր մօտենալով ըսաւ. «Ողջոյն Քեզի, լի շնորհքով, Տէրը քեզի հետ»: Այս խօսքերուն վրայ Մարիամ վրդովեցաւ եւ կը խորհէր թէ ինչ կը նշանակէ այս ողջոյնը:

Հրեշտակը ըսաւ. «Մի՛ վախնար, Մարիամ, վասնզի

Աստուծոյ առջեւ շնորհք գտար. ահա պիտի յղանաս եւ որդի մը պիտի ծնանիս եւ անոր անունը Յիսուս պիտի կոչես: Ան մեծ պիտի ըլլայ ու Բարձրեայլին Որդին պիտի կոչուի. Տէր Աստուած անոր պիտի տայ իր Հօրը՝ Դաւթի աթոռը, եւ ան Յակոբի տան վրայ պիտի թագաւորէ յաւիտեան եւ անոր թագաւորութիւնը վերջ պիտի չունենայ»:

Մարիամ հարցուց Հրեշտակին. «Ինչպէ՞ս կրնայ ըլլալ ինծի ատիկա, քանի որ ես այր չեմ ճանչնար»:

Հրեշտակը պատասխանեց. «Սուրբ Հոգին պիտի իջնէ քու վրադ եւ Բարձրեայլին գորութիւնը հովանի պիտի ըլլայ քեզի, որովհետեւ Ան, որ քեզմէ պիտի ծնի, սուրբ է եւ Աստուծոյ Որդին պիտի կոչուի: Ահա, Եղիսաբէթ, քու ազգականդ ալ յղի է իր ծերութեան ատեն, եւ արդէն վեցերորդ ամսոյն մէջ է ան՝ որ ամուլ կոչուած էր, վասնզի Աստուծոյ համար անկարելի բան չկայ»:

Մարիամ ըսաւ. «Ահաւասիկ Տիրոջ աղախինն եմ ես, ըսածիդ պէս թող ըլլայ ինծի»: Եւ Հրեշտակը մեկնեցաւ անոր քովէն:

Դպ. Փառք քեզի, մեր Տէր Աստուածը:

Սրկ. Աղաչենք Տիրոջ՝ հաւատացեալ հոգիներուն վերեւ տրուած պաշտպանութեան եւ միութեան հրաւիրեալներուն համար:

Քհն. Տէր, ողորմէ՛. Տէր, ողորմէ՛. Տէր, ողորմէ՛:

ԱՂՕԹՔ

Յաւելտեանական Աստուած եւ Արարիչ ամէն բանի, կ'աղաչենք ու կը խնդրենք քեզմէ, որ գթութեամբ կը խնամես արարածներդ, ընդունէ՛, մարդասէր Տէր, մեր խնդրանքը եւ օրհնէ այս նշանը քու ամենայաղթ Խաչովդ: Հեռացուր այս ծառաներէդ կեղծաւոր եւ չար մտածութիւնները եւ ուրիշ ամէն տեսակ նենգութիւն. պահէ գարշութիւններէ եւ խաւարային ճամբաներէ եւ խառն անկողնի պղծութենէ: Եւ այս նշանին տուչութիւնը թող համարուի իբրեւ հաստատուն հիմ սուրբ ամուսնութեան կառոյցին, ընդունելու համար վայելչութեան պսակը իրենց գլխուն վրայ, օրհնութեամբ Սուրբ Երրորդութեանդ, որուն կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քհն. Խաղաղութիւն ջ ամէնուն:

Դպ. Նաեւ քու հոգիիդ հետ:

Սրկ. Աստուծոյ երկրպագենք:

Դպ. Քու առջեւդ, Տէր:

Քհն. Հայր սուրբ եւ ամէն բանի մէջ օրհնեալ, որ քու մեղաւոր ծառայիդ ձեռքով օրհնեցիր Սուրբ Հոգւոյդ զօրութեամբ եւ սրբեցիր այս նշանը, քու Միածնիդ անունով. հիմա կը խնդրենք քեզմէ, առաքէ Սուրբ Հոգիդ այս նշանը տուողին եւ ընդունողին վրայ: Անարատ պահէ զիրենք իրարու հանդէպ, եւ առաջնորդելով հասցուր այն ժամուն, երբ փառքի պսակը պիտի դնեմ

իրենց գլուխը, որովտեսեւ քեզի մնայն կը պատկանի պատիւը եւ քեզի կը վայելէ փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հոս, քահանան փեսային կը յանձնէ օրհնուած մատանին եւ սա՛ հարսնցուին, եւ փոխադարձաբար:

Սրկ. Սուրբ խաչին շնորհիւ աղաչենք Տիրոջ, որ ասով փրկէ մեզ մեղքերէն եւ ազատէ՝ իր ողորմութեան շնորհիւ: Ամենակալ Տէր Աստուած մեր, փրկէ՛ եւ ողորմէ՛:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛:

Պահպանիչ եւ յոյս հաւատացեալներու, Քրիստո՛ս, Աստուած՝ մեր, խաղաղութեամբ պահպանէ՛ այս նշանուածները եւ այս ժողովուրդդ՝ սուրբ եւ պատուական խաչիդ հովանիին տակ: Փրկէ՛ տեսանելի եւ անտեսանելի թշնամիէն, արժանի՛ ըրէ՛ գոհութեամբ փառաւորելու քեզ՝ Հօր եւ Սուրբ Հոգիիդ հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քհն. Օրհնեալ ✠ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Դպիր ձայնիւ.

Հայր մեր որ յերկինս ես, Սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի:

Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, եւ թող

ՆՇԱՆՏՈՒՔ

մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց. եւ մի' տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ:

Քհն. Ձի քո է արքայութիւն թ և զօրութիւն եւ փառք. յաւիտեանս. ամէն:

✠ ✠ ✠

ԿԱՆՈՆ ՍՈՒՐԲ ՊՍԱԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Պսակը պետք է միշտ օրհնուի եկեղեցւոյ մէջ: Եթէ կարեւոր պատճառի համար հարկ ըլլայ տան մէջ կատարել գայն, յատուկ հրաման պետք է խնդրուի Առաջնորդէն: Այդ պարագային, կը պատրաստուի յարմար սեղան մը, որու վրայ կը գետեղուին խաչ մը եւ վառած մոմեր:

Պատրաստ ըլլան նաեւ, սեղանի մը վրայ, ափսէ մը երկու գեղեցիկ պսակներով, ինչպէս նաեւ բաժակ մը գինի:

Քահանան (ժողովրդապետը), պաշտօնեաները եւ դպիրները կը զգեստաւորուին: Ապա կու գան խորանին առջեւ, եւ յետ խոնարհելու, կը դառնան դէպի ժողովուրդը: Հուսկ քահանային առջեւ կը բերուին փեսան, հարսը, փեսաւէրին եւ փեսեղբօր հետ, որոնք պսակին վկաները պիտի ըլլան:

*Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:
Ընկալ, կեցո եւ ողորմեա:*

Քհն. Օրհնութիւն եւ փառք՝ Հօր ✠ եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենոց. ամէն:

Դպիրները կ'երգեն Ծարականը (ԳԿ)։

Նայեա ի մեզ եւ ողորմեա մեզ Քրիստոս, որ ունիս բազում գթութիւն։

Որ Հայրդ ես որբոց, եւ դատաւոր այրեաց Քրիստոս. որ ունիս բազում գթութիւն։

Որ պսակիչդ ես սրբոց, լուր եւ մեզ աղօթիւք սոցա Քրիստոս. որ ունիս բազում գթութիւն։

Խորանին առջեւ հասնելով, փեսան՝ աջին եւ փեսաւէրը ձախին, կը կանգնին մէջտեղ. կը բերեն հարսը փեսային մօտ եւ կը կանգնին մին միւսին դիմաց. իսկ քահանան պաշտօնեաներով եւ դպիրներով անոնց քով՝ կողմնակի։

Դպիրները կ'ըսեն Սաղմոս 88

Դպիրք. Գտայ Դաւիթ ծառաս եւ սուրբ իւզով օծեցի զայն։

Իմ ձեռքովս պիտի ընդունիմ զայն եւ բազուկս պիտի զօրացնէ զայն։

Քահանան կ'առնէ հարսին աջ ձեռքը եւ կը դնէ փեսային աջ ձեռքին մէջ՝ ըսելով.

Քհն. Աստուած, առնելով Եւայի ձեռքը, Ադամի աջին մէջ դրաւ։ Իսկ Ադամ ըսաւ. «Ասիկա հիմա ոսկը է իմ ոսկորներէս եւ մարմին՝ իմ մարմինէս։ Սա պիտի կոչուի կին, որովհետեւ իր այրէն առնուեցաւ»։

Ասոր համար այր մարդը, թողլով իր հայրն ու մայրը, իր կնոջ ետեւէն կ'երթայ եւ երկուքը մէկ մարմին կ'ըլլան։ Արդ, ինչ որ Աստուած միացուց, մարդը թող չբաժնէ։

Դպիրները կ'երգեն Ծարականը (ԳԿ).

Մայր եւ Կոյս, աղախին Քրիստոսի, որ բարեխօսդ ես միշտ աշխարհի. քեզ երանեն ամենայն ազինք:

Մաքուր աղանի, եւ հարսն երկնից Մարիամ. տաճար եւ աթոռ Աստուծոյ բանին. քեզ երանեն ամենայն ազինք:

Քեւ հաճեցան իմանալիքն ընդ հողեղէնքս. եւ քեւ մերձեցաք ի փայտըն կենաց. քեզ երանեն ամենայն ազինք:

Քահանան խաչը կը դնէ նախ փեսային, ապա հարսին գլխուն վրայ, եւ յետ օրհնելու զանոնք, այս աղօթքը կ'ըսէ անոնց վրայ.

Քհն. Յաւիտենական Տէ՛ր Աստուած, դուն որ կը միացնես անոնք որ առանձին են եւ միաւորելէ ետք, անքակտելիօրէն իրարու կը կապես, դուն որ օրհնեցիր Իսահակն ու Ռեբեկան եւ քու խոստումներուդ ժառանգակից կարգեցիր զանոնք, քու անսխալ խօսքովդ՝ անոնցմէ ծնած ժողովուրդը ծովու ափի աւազին չափ բազմացուցիր:

Եւ այժմ, բարերար եւ ողորմած Աստուած, օրհնէ՛ Ք այս ծառադ եւ այս աղախինդ, զորս ընդունեցար, եւ սրբութեամբդ առաջնորդէ՛ անոնց, որպէսզի ընթանան բարի գործերու եւ արդարութեան ճամբուն մէջ եւ կատարեն քու կամքդ:

Քու հրամանիդ համաձայն ապրին այս աշխարհիս վրայ, եւ երկար ապրելով, տեսնեն իրենց որդիներուն

որդիները եւ գալիք կեանքի մէջ ալ անսպառ բարիքներուն եւ անթառամ պսակին հասնին ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որուն կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քհն. Խաղաղութիւն թ ամէնուն:

Դպիրք. Նաեւ քու հոգիիդ հետ:

Սրկ. Աստուծոյ երկրպագենք:

Դպիրք. Քու առջեւդ, Տէր:

Քհն. Տէ՛ր, Աստուած մեր, որ հեթանոսներէն զատելով, քեզի հարս ընտրեցիր սուրբ Եկեղեցին, որպէսզի նեկայանայ երկնաւոր փեսայիդ, եւ պսակեցիր ամենայաղթ սուրբ Խաչիդ նշանով.

որ միատեղ կը բերես անոնք որ ցրուած են, եւ կը միացնես կտակարաններու անքակ կապով.

որ նահապետները օրհնեցիր եւ ժառանգորդ ըրիր զանոնք քու խոստումներուդ.

օրհնէ՛ թ այժմ այս ծառադ եւ այս աղախինդ՝ խաչիդ զօրութեամբ: Որովհետեւ դուն ողորմած ես ու մարդասէր, եւ քեզի կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթքի աւարտին, քահանան կը հրամայէ փեսային եւ հարսին թողուլ իրենց ձեռքերը: Ապա կը յառաջանան դէպի խորան, քահանան՝ պաշտօնեաներով եւ դպիրներով առջեւէն, ապա փեսան՝ իր ձա-

խը ունենալով հարսը. իսկ փեսային աջը՝ փեսեղ-
բայրը: Անոնց ետեւէն՝ հարսնետորները:

Դպիրները կ'երգեն Ծարականը (ԳԿ).

*Յաղթող եւ զնոր օրհնութիւն միշտ ի բարձունս
երգեսցուք. Թագաւորին Քրիստոսի հաւատացեալ ժո-
ղովուրդք:*

*Որ եկն ի լուսաւորել զընտրեալ սուրբ զԵկեղեցի.
եւ պսակեաց սուրբ խաչիւն. նմա զփառս երգեսցուք:*

*Այսօր եւ մեք տօնեսցուք զնաւակատիս սուրբ խա-
չին. եւ փրկողին մատուցուք փառք եւ պատիւ յա-
ւիտեան:*

Սուրբ խորանին առջեւ հասնելով, քահանան եւ
պաշտօնեաներն ու դպիրները կը խոնարհին ապա կը
դառնան դէպի ժողովուրդ: Իսկ փեսան եւ հարսը կը
կանգնին քահանային դիմաց, խորանին առջեւ, քով
քովի, փեսան՝ հարսին աջը, երկու վկաները՝ փեսային
աջ կողմը եւ հարսին ձախ կողմը:

Քահանան կը դառնայ փեսային եւ հարսին, եւ
անոնցմէ կը պահանջէ յանձնառութեան խոստումը,
ըսելով.

*Քհն. Ա.Ա. եւ Ա.Ա., կը խոստանա՞ք Աստուծոյ առջեւ
երկիւղածութեամբ հաստատ պահել իրարու հանդէպ
Աստուծոյ պարգեւած սէրը, եւ նոյն սիրով, մղուած
Աստուծոյ երկիւղէն, փոխադարձաբար եւ սիրայօժար
տանիլ իրարու նեղութիւնները, ըլլան մարմնական
դժբախտութիւններ՝ հիւանդութիւն կամ որեւէ այլ
փորձանք, համակերպելով Աստուծոյ կամքին:*

Կը խոստանանք եւ յանձն կ'առնէ՞ք սիրայօժար կատարել այս ըսուածները:

Փեսայ եւ Հարս. Այո՛, կը խոստանանք, Աստուծոյ կամքով:

Քհն. Տեսէ՛ք, որդիներ, դուք եկած էք այս սուրբ եկեղեցին՝ Աստուծոյ հրամանով եւ մեր սուրբ հայրապետներուն օրէնքով՝ օրինաւորապէս պսակուելու սուրբ ամուսնութեամբ:

Կը մաղթեմ որ Աստուած սիրոյ մէջ միաբան պահէ ձեզ, խոր ծերութեան հասցնէ եւ երկինքի պսակին արժանացնէ:

Գիտէք սակայն որ այս աշխարհիս վրայ զանազան փորձանքներ կան, հիւանդութիւն, աղքատութիւն եւ այլ նեղութիւններ: Կ'աղօթեմ որ Աստուած հեռու պահէ ձեզ ամէն փորձանքէ: Բայց Աստուծոյ կամքն է որ դուք երկուքդ, մինչեւ մահ իրարու օգնական ըլլաք:

Ապա կը հարցնէ փեսային.

Քհն. Ա.Ա., կ'ընդունի՞ս Ա.Ա.ը իբր հարս, եւ կը խոստանա՞ս սիրել ու պաշտպանել զայն եւ հաւատարիմ մնալ անոր մինչեւ մահ:

Փեսայ. Այո՛ կ'ընդունիմ զայն եւ կը խոստանամ, Աստուծոյ օգնութեամբ:

Եւ ապա կը հարցնէ հարսին.

Քհն. Ա.Ա. կ'ընդունի՞ս Ա.Ա.ը իբր փեսայ, եւ կը

խոստանա՞ս միշտ սիրել ու յարգել զայն եւ հա-
ւատարիմ մնալ անոր մինչեւ մահ:

Հարս. Այո՛, կ'ընդունիմ եւ կը խոստանամ, Աս-
տուծոյ օգնութեամբ:

Քհն. Ձեր այս խոստումին վկայ է Աստուած, որ
աներեւութապէս ներկայ է սուրբ խորանին վրայ:
Նոյնպէս վկայ են՝ մեր պահապան հրեշտակները, այս
սուրբ եկեղեցին, սուրբ խաչն ու Աւետարանը, քահա-
նաները եւ այս ժողովուրդը: Ասոնք ամէնքը, եւ յատ-
կապէս՝ այս երկու անձերը, որոնք ձեր վկաները պի-
տի ըլլան: Կ'ուզէ՞ք որ անոնք վկայ ըլլան:

Փեսայ եւ Հարս. Այո՛, Հայր սուրբ, կ'ուզենք որ
վկայ ըլլան:

Քհն. (Վկաներուն). Կը վկայէ՞ք:

Վկաները. Այո՛, կը վկայենք:

Քահանան հարսին աջ ձեռքը կու տայ փեսային
աջ ձեռքը, եւ կ'ըսէ.

Քհն. (Փեսային) Աստուածային հրամանին համա-
ձայն զոր Աստուած տուաւ մեր նախնիքներուն, ես
Ա. Ա. քահանայ, Ա.Ա.ը կու տամ քեզի այժմ իբր
հարս:

Կ'ընդունի՞ս:

Փեսայ. Այո՛, կ'ընդունիմ, Աստուծոյ կամքով:

Քհն. (Հարսին) Եւ դուն, Ա.Ա., կ'ընդունի՞ս Ա.Ա.ը
իբր փեսայ:

Հարս. Այո՛, կ'ընդունիմ, Աստուծոյ կամքով:

Քհն. Արդ, եթէ այս կերպով ապրիք իրարու հետ Աստուծոյ սիրով, ամենախնամմն Աստուած պիտի պահէ ձեզ ձեր կեանքին ընթացքին. պիտի օրհնէ ձեր գործերը եւ պիտի ճոխացնէ ձեզ հոգեկան եւ մարմնական բարիքներով, որպէսզի խաղաղութեամբ եւ աստուածապաշտութեամբ ապրելով այս աշխարհիս վրայ, խոստացուած հանդերձեալ բարիքներուն արժանի ըլլաք, շնորհքովը Քրիստոսի, որուն կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ապա կ'աւելցնէ.

Աստուած ներկայ է ասոնց մէջ, եւ ասոնք պիտի չսասանին: Աստուած պիտի օգնէ ասոնց մէկ առաւօտէն մինչեւ միւս առաւօտը:

Հոս, աղօթքի աւարտին, փեսան եւ հարսը կը թողուն իրարու ձեռքերը:

Իսկ դպիրները կ'երգեն Ծարականը (ԳԶ).

Ուրախ լեր, սուրբ Եկեղեցի. քանզի Քրիստոս, արքայն երկնից, այսօր պսակեաց զքեզ խաչիւն իւրով. եւ զարդարեաց զամուրս քո սքանչելի փառօք իւրովք:

Խնդա յոյժ, դու'ստր Սիրովնի, քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերատին քո նորոգմամբ. եւ թագաւորն երկնաւոր հաճեցաւ բնակիլ ի քեզ:

Մինչ «Ուրախ Լեր» շարականը կ'երգցուի, քահանան կ'օրհնէ մատանիները լոկ խաչակնքումով: Այս զանոնք կը յանձնէ փեսային ու հարսին, որպէսզի անցընեն իրարու ձախ մատնեմատներուն:

Կարելի է առաջարկել, նախապէս, կնքափոր կամ պսակելիներու բարեկամի կամ ազգականի մը, որ առաջին Ընթերցումը կատարէ:

(Տես նաեւ այլ ընթերցումներ. Յաւելուած, էջ 68)

Դպիրք. Սաղմոս 20:

Տէ՛ր, քու զօրութեամբդ կը հրճուի թագաւորը. քու փրկութեանդ համար կը համակուի ցնծութեամբ:

Դուն գոհացուցիր անոր սրտին ցանկութիւնները. եւ չմերժեցիր անոր շրթունքներուն մաղթանքը:

Շնորհեցիր անոր քաղցր օրհնութիւններ. անոր գլուխը դրիր պսակ մը թանկագին քարերով:

Պօղոս Առաքեալին Եփեսացիներուն ուղղուած Թուղթէն է այս ընթերցումաձը. 5, 22 - 33.

Կիները իրենց այրերուն հնազանդ ըլլան իբրեւ Տիրոջ: Որովհետեւ այրն է կնոջ գլուխը, ինչպէս Քրիստոս գլուխն է Եկեղեցւոյ, եւ ինքն է փրկիչը մարմնոյ: Բայց ինչպէս Եկեղեցին հնազանդ է Քրիստոսի, նոյնպէս կիները ամէն բանի մէջ հնազանդին իրենց ամուսիններուն:

Այրե՛ր, սիրեցէ՛ք ձեր կիները ինչպէս Քրիստոս սիրեց Եկեղեցին եւ իր անձը նուիրեց անոր համար, զայն սրբելու՝ աւազանին սրբութեան խօսքով, որ-

պէսզի ինքն իրեն փառաւոր ներկայացնէր Եկեղեցին, զերծ ամէն արատէ կամ աղտեղութենէ եւ կամ ասոնց նմաններէն, այլ ըլլար նա սուրբ եւ անարատ:

Նոյնպէս այրերը պէտք է սիրեն իրենց կրները իբրեւ իրենց մարմինը: Ով որ իր կինը կը սիրէ, իր անձը կը սիրէ: Յիրաւի, ոչ ոք իր անձը կ'ատէ, այլ կը սնուցանէ եւ կը դարմանէ զայն, ինչպէս Քրիստոս՝ Եկեղեցին: Որովհետեւ անոր մարմնոյն անդամներն ենք, անոր մարմինէն եւ ոսկորներէն:

Ասոր համար այր մարդը պիտի թողու իր հայրը եւ մայրը եւ պիտի կապուի իր կնոջ եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան:

Մեծ է այս խորհուրդը: Ես կ'ըսեմ. ինչպէս Քրիստոս եւ Եկեղեցին միացած են իրարու, նոյնպէս ալ՝ դուք իրարու հետ: Վասնզի ամէն ոք իր կինը այնպէս պէտք է սիրէ ինչպէս իր անձը. եւ կինը պէտք է ակնածի իր ամուսինէն:

Դպիրք. Ալէլուիա, ալէլուիա: Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ. ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ եւ պաճուճեալ:

Սրկ. Ալէլուիա. օրթի:

Քհն. Խաղաղութիւն ջ ամենեցուն:

Դպիրք. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Երկիւղածութեամբ լուարուք:

Քհն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի, 19, 1 - 6.

Քհն. Պռոսպերոսմէ:

Դպիրք. Ասէ Աստուած:

Քհն. Մեր Տէրը Յիսուս Քրիստոս.

Երբ Յիսուս աւարտեց այս խօսքերը, մեկնեցաւ Գալիլիայէն եւ եկաւ Հրէաստանի սահմանները, Յորդանանի միւս կողմը: Իր ետեւէն բազմաթիւ ժողովուրդ գնաց, եւ հոն բժշկեց զանոնք:

Փարիսեցիները, մօտեցան անոր, եւ փորձելու համար զայն՝ հարցուցին անոր. «Օրինաւո՞ր է մարդուն որեւէ պատճառով իր կինը արձակել»:

Յիսուս պատասխանեց եւ ըսաւ. «Չէ՞ք կարդացած որ Արարիչը սկիզբէն արու եւ էգ ստեղծեց մարդը եւ ըսաւ. ասոր համար մարդ իր հայրն ու մայրը պիտի թողու եւ իր կնոջ ետեւէն պիտի երթայ: Եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան: Ուրեմն այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին:

Ուստի ինչ որ Աստուած միացուց, մարդը թող չբաժնէ»:

Դպիրք. Փա՛ւք քեզ, Տէր Աստուած մեր:

Արկ. Որպէսզի ուղղէ մեր ընթացքը խաղաղութեան ճամբուն մէջ. Տիրոջ աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Արկ. Որպէսզի չարին ամէն խորհուրդները հեռացնէ մեզմէ. Տիրոջ աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Որպէսզի պարգեւէ մեզի առողջ խորհուրդներ եւ առաքիւնի վարք մը. Տիրոջ աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Որպէսզի պահէ մեզ իր ամենագօր աջին հովանիին տակ. Տիրոջ աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Ողորմէ՛ մեզի, Տէր Աստուած մեր, մեծ ողորմութեանդ համեմատ: Ըսենք միաբան.

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛:

Քարոզիմ աւարտելու մօտ, դպիր մը կը բերէ պսակներու փսէն եւ կը բռնէ քահանային առջեւ. եւ քահանան կ'օրհնէ պսակները ըսելով:

Տէր Աստուած զօրութեան եւ Արարիչ ամէն արարածներու, որ երկրէն հող առիւր եւ ստեղծեցիր մարդը ըստ պատկերիդ եւ նմանութեանդ, արու եւ էգ ստեղծեցիր զանոնք եւ օրհնեցիր՝ ըսելով. «Աճեցէք եւ բազմացէք եւ լեցուցէք երկիրը եւ տիրեցէք անոր» (...):

Արդ, Տէ՛ր, կը խնդրենք քեզմէ, օրհնէ՛ Ք այս ամուսնութիւնը՝ ինչպէս օրհնեցիր սուրբ նախահայրերունը, անարատ պահելով այս պսակեալները՝ հոգեւոր սիրով եւ միաբանութեամբ այս կեանքին մէջ:

Օրհնէ՛ Ք նաեւ ասոնց որդեծնութեան պտղաբերութիւնը, որպէսզի առաքիւնի վարք մը ունենան քու ամենասուրբ փառքիդ համար, եւ խաղաղ կեանքով,

այս աշխարհիս մէջ ապրին՝ մինչեւ խոր ծերութիւն. եւ արժանի ըլլան հասնելու երկինքի հարսնարանին անվախճան ուրախութեան՝ բոլոր քեզ սիրողներուն հետ:

Շնորհքովը եւ ողորմութեամբը քու Միածինիդ՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի, որուն հետ՝ Հօր եւ Սուրբ Հոգիին կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա քահանան սուրբ խաչով կ'օրհնէ պսակները եւ կը դնէ փեսային ու հարսին գլուխը:

Ապա այս աղօթքը կ'ըսէ անոնց վրայ.

Քհն. Քու անմահ անունովդ, Աստուած եւ Տէր, Արարիչ երկնքի եւ երկրի, որ ամէն ինչ ստեղծեցիր հրամանովդ, առաջին մարդը՝ Ադամը ստեղծեցիր եւ իրմով հաստատեցիր Եւայի ամուսնութիւնը, եւ պսակեցիր զինք քու փառքովդ, եւ ըսիր. «Ահա յոյժ բարի են»:

Օրհնեցիր Յուդայի ցեղէն Դաւիթը եւ Դաւիթի զաւակէն՝ Մարիամ Կոյսը, եւ ասկէ ծնունդ տուիր աշխարհի փրկչին, որովհետեւ դո՛ւն եղար բոլոր սուրբերուն պսակիչը:

Նոյն օրհնութեամբ թող օրհնուի թ՛է այս պսակը եւ ասոնց ամուսնութիւնը, որպէսզի քու ծառադ եւ աղախինդ, ամենայն աստուածպաշտութեամբ խաղաղ անցընեն իրենց կեանքը, եւ սատանան հեռանայ ասոնցմէ, եւ քու ողորմութիւնդ իջնէ ասոնց վրայ:

Իսկ մենք՝ օրհնութիւն եւ փառք կը մատուցանենք քեզի, Հօրդ եւ Սուրբ Հոգիիդ հետ՝ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հոս կը կատարուի բաժակի օրհնութիւնը: Ափսէի մը վրայ կը բերեն պատրաստուած բաժակը գինիով:

Դպիրք. Սաղմոս 22.

Տէ՛րն է իմ հովիւս, ոչի՛նչ կը պակսի ինծի:

Գլուխս իւղով օծեցիր, բաժակդ արբեցուց զիս անապակ գինիով:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սրկ. Ամէնքս միաբան՝ հաւատքով խնդրենք Տիրոջմէ որ իր ողորմութեան շնորհքը պարգեւէ մեզի: Ամենակալ Տէրը թող փրկէ մեզ եւ ողորմի մեզի:

Քրհն. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛:

ԱՂՕԹՔ

Քրհն. Տէ՛ր, Աստուած մեր, որ ամէն ինչ իմաստութեամբ ստեղծեցիր եւ փառաւորեցիր Կանայի հարսանիքը, եւ վերնատան մէջ բաժակն օրհնեցիր:

Օրհնէ՛ Տէր, սուրբ խաչովդ այս բաժակը, իբրեւ խորհրդանիշ քու ծառաներուդ միաւորութեան եւ հոգւոյ ու մարմնոյ բժշկութեան:

Որպէսզի արժանի ըլլան փառաւորելու Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՊՍԱԿ

Քահանան կ'օրհնէ բաժակը, եւ կը հրամայէ որ խմցնեն փեսային եւ հարսին միայն:

Դպիրք. Ծարական (ԱԿ).

Որ նախիմաց իմաստութեամբ տնօրինեցեր զխորհուրդ սուրբ Եկեղեցւոյ. խորագոյն արկեալ հիմունս հաստատութեան զդասս արդարոց. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ:

Որ զօրհնութիւն նախաստեղիցն աստուածազոյզ արուաց եւ իգաց. պայծառացեալ վայելչապէս ծաղկեցուցեր այսօր ի Յովակիմ եւ ի յԱննա. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ:

Որ զխոստումն Աբրահամու նահապետին մեր ըստ հոգւոյ. քահանայական եւ թագաւորական զաւազանացն միացեալ ցուցեր այսօր ի յԱննայէ. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ:

ԱՂՕԹՔ

Քհն. Տէ՛ր, Աստուա՛ծ ամենակալ, քու ծառայիդ եւ աղախինիդ պսակները օրհնցիր, քու սուրբ փառքիդ տաճարին մէջ, քու սուրբ խորանիդ վրայ, աստուածընկալ եւ պատուական խաչիդ առջեւ:

Նոյն օրհնութեամբ, Տէ՛ր եւ Աստուա՛ծ, օրհնէ՛ թա՛յս պսակեալները, եւ արտօնէ ինծի վերցնել այս պսակները ասոնց զլիսուն վրայէն:

Քահանան կը վերցնէ պսակները անոնց գլխուն վրայէն:

Քհն. Եւ փոխանակ այս պսակներուն, որ քու հրամանովդ դրուեցան, առաքէ՛ Քու խաղաղութեանդ հրեշտակը, որ գայ ու պահէ գիրենք սուրբ եւ անարատ, միաշունչ եւ միախորհուրդ, որպէսզի ապրին ահով եւ երկիւղով Ամենասուրբ Երրորդութեանդ փառաբանութեան համար, մինչեւ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի օրը:

Եւ պատե՛հ ժամանակին, իրենց զաւակներով ուրախանան, գերծ՝ սատանային խաբէութիւններէն, եւ ըլլան քեզի ժողովուրդ եւ փառաբանիչներ Ամենասուրբ Երրորդութեանդ, Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգիին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սրկ. Սուրբ խաչին շնորհիւ աղաչենք Տէրը որպէսզի անով ազատէ մեզ մեղքերէն եւ փրկէ մեզ իր ողորմութեամբ: Ամենակա՛լ Տէր, Աստուա՛ծ մեր, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛:

ԱՂՕԹՔ

Քհն. Պահպանիչ եւ յոյս հաւատացեալներու, Քրիստո՛ս, Աստուա՛ծ մեր, քու սուրբ եւ պատուական խաչիդ հովանիին տակ պահպանէ՛ այս փեսան եւ հարսը եւ քու ժողովուրդդ խաղաղութեան մէջ: Փրկէ՛ տեսանելի եւ անտեսանելի թշնամիէն: Արժանի ըրէ՛ գովաբանելու եւ փառաւորելու քեզ՝ Հօր եւ Սուրբ Հոգիիդ հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քհն. Օրհնեալ Ճէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Դպիրք. ձայնիւ.

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեացէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս՝ եւ յերկրի:

Ձհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, եւ թող մեզ զպարտիս մեր որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն:

Քհն. Զի քո է արքայութիւն Ճ եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Քհն. Օրհնեալ ըլլաք Ճ սուրբ Հոգիին շնորհքով, գացէ՛ք խաղաղութեամբ, եւ Տէրը ըլլայ Ձեր բոլորին հետ. ամէն:

ՅԱԻԵԼՈՒԱԾ ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ա.- ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԾԱՆԳՈՅ ԳԻՐՔԵԱՆ, 1, 26-28ա . 2, 18. 21-24

Աստուած ըսաւ. «Մարդը ստեղծենք մեր պատկերին համեմատ»: «Թող ան իշխէ ծովու ձուկերուն, երկինքի թռչուններուն, անասուններուն եւ բոլոր սողուններուն որ կը սողան երկրի վրայ»:

Եւ Աստուած ստեղծեց մարդը իր պատկերին նմանութեամբ. Աստուծոյ պատկերին համեմատ ստեղծեց զայն, արու եւ էգ ստեղծեց զանոնք:

Եւ Աստուած օրհնեց զանոնք եւ ըսաւ. «Աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք, եւ լեցուցէ՛ք երկիրը, եւ տիրեցէ՛ք անոր»:

Եւ ըսաւ Աստուած. «Լաւ է որ մարդը առանձին մնայ, օգնական մը չի նենք իրեն՝ իրե՛ն նման»:

Եւ Տէր Աստուած թմրութիւն բերաւ Ադամի վրայ, եւ ան քուն մտաւ: Եւ անոր կողերէն մին առաւ, եւ մարմին կազմեց անով:

Տէր Աստուած կինը շինեց այդ կողէն զոր առած էր Ադամէն եւ Ադամին քով բերաւ զայն:

Եւ ըսաւ Ադամ. «Ասիկա հիմա ոսկր է իմ ոսկորներէս, եւ մարմին է իմ մարմինէս»:

Ան կին պիտի կոչուի, որովհետեւ իր ամուսինէն առնուեցաւ:

Ասոր համար այր մարդը պիտի թողու իր հայրն ու մայրը եւ իր կնոջ ետեւէն պիտի երթայ, եւ երկուքը պիտի դառնան մէ'կ մարմին:

Տովբիթի Գիրքէն, 8, 5-9.

Իր ամուսնութեան երեկոն, Տովբիթ ըսաւ Սառային. «Մենք սուրբերու ժողովուրդի մը սերունդներն ենք եւ չենք կրնար միանալ իրարու հեթանոսներուն նման որ Աստուած չեն ճանչնար»:

Ոտքի ելան երկուքն ալ եւ սկսան եռանդով աղօթել միասին, ինդրելով Աստուծոյ պաշտպանութիւնը:

Տովբիթ կ'ըսէր. «Ո'վ Տէր, մեր հայրերուն Աստուածը, թող երկինքն ու երկիրը օրհնեն քեզ, ինչպէս ծովը, աղբիւրները, գետերը եւ հոն բնակող բոլոր արարածները: Դո՛ւն ես որ Ադամը շինեցիր երկրի տիղմով եւ Եւան տուիր անոր իբր օգնական:

«Եւ հիմա, Տէ'ր, դուն գիտես. եթէ կ'ուզեմ ամուսնանալ Իսրայէլի այս աղջկան հետ, ո'չ թէ իմ կիրքերս գոհացնելու համար է, այլ միայն բաղձալով ընտանիք մը հիմնել, որ օրհնէ քու անունդ դարէ դար»:

Սառան ըսաւ իր կարգին. «Ողորմէ' մեզի, Տէ'ր, ողորմէ' մեզի եւ շնորհէ' որ երջանիկ ապրինք միասին մինչեւ մեր խոր ծերութիւնը»:

Առակաց Գիրքէն, 31, 10-12. 20, 25-30

Ո'վ կրնայ ճանչնալ առաքինի կինը: Անիկա աւելի թանկագին է քան բոլոր գոհարները:

Անոր ամուսնոյն սիրտը կը վստահի անոր եւ երբեք աւարի կարօտ չի մնար:

Անիկա կը գործակցի իր կեանքի բոլոր օրերուն՝ բարի, եւ ոչ թէ չար գործերուն մէջ:

Ան աղքատներուն կ'երկարէ իր ձեռքերը եւ ողորմութիւն կու տայ չքաւորին:

Չափաւորութեամբ եւ իմաստութեամբ կը բանայ ան իր բերանը եւ կարգ ու կանոն կը դնէ իր լեզուին:

Զօրութիւն եւ վայելչութիւն կը զգենու ան եւ ուրախութեամբ լի է ապագային հանդէպ:

Պարկեշտ է անոր ընթացքը եւ իր հացը չ'ուտեր դատարկապորտութեամբ:

Չկայ անոր մէջ մարդահաճութիւն, ոչ ալ կանացի պճնասիրութիւն:

Ուստի պիտի օրհնուի իմաստուն եւ կրօնասէր կիւնը, քանի որ ան կը պատուէ զանոնք որ Տիրոջ երկիւղին մէջ կը քալեն:

Սիրաքի Գիրքէն, 26, 1-4. 13-16.

Երանի՛ այն մարդուն որ բարի կիին մը ունի. անոր կեանքը կրկնապէս գեղեցիկ պիտի ըլլայ: Քաջ կիւնը իր ամուսնոյն ուրախութեան պատճառ է, որովհետեւ ասիկա երջանիկ պիտի ըլլայ իր ամբողջ կեանքին ընթացքին:

Առաքինի կիին մը, ահա՛ լաւագոյն ընտրութիւնը, եւ բաժինը զոր Աստուած կու տայ անոնց որ կը ծառայեն իրեն. հարուստ թէ աղքատ, անոնց սիրտը

ուրախ է, ամէն առիթներով ժպտուն է անոնց դէմքը:

Կնոջ շնորհքը հրճուանք կը պատճառէ իր ամուսնոյն եւ իր ձիրքերը հանգստութիւն կու տան անոր:

Կինը որ լուել գիտէ, Աստուծոյ պարգեւն է: Ոչինչ աւելի արժէք ունի քան կին մը որ լաւ պատրաստուած է իր պաշտօնին:

Հրաշալի նուէր մըն է փափկանկատ կինը: Անգին գանձ մըն է այն հոգին որ գիտէ ինքզինքը գսպել:

Ինչպէս արեւածագ մը Տիրոջ լեռներուն վրայ՝ այնպէս ալ՝ տան լոյսն է կատարեալ կնոջ մը գեղեցկութիւնը:

Պօղոս Առաքեալին Կորնթացիներուն ուղղուած Առաջին Թուղթէն է այս ընթերցուածը, 6, 13-20

Մեր մարմինը Տիրոջ համար է եւ Տէրը մարմինին համար: Չէ՞ք գիտեր որ ձեր մարմինները անդամներն են Քրիստոսի:

Գրուած է. «Երկուքը մէկ մարմին պիտի ըլլան»:

Ով որ Տիրոջ կը միանայ, Տիրոջ հետ մէկ հոգի կը կազմէ:

Փախէ՛ք ուրեմն պոռնկութենէն. ամէն մեղք որ մարդ կը գործէ՝ իր մարմինէն դուրս է, իսկ պոռնկացողը իր մարմինին մէջ կը մեղանչէ:

Չէ՞ք գիտեր թէ ձեր մարմինը տաճարն է Սուրբ Հոգիին, որ կը բնակի ձեր մէջ եւ ձեզի տրուած է Աստուծոմէ:

Չէ՞ք գիտեր թէ դուք ձեզի չէք պատկանիր: Դուք գնուած էք մեծ գինով: Ուստի զԱստուած փառաբանեցէք ձեր մարմինին մէջ:

Պօղոս Առաքեալին Կորնթացիներուն ուղղուած Առաջին Թուղթէն է այս ընթերցուածը, 12, 31 - 13, 8

Զգտեցէք զերագոյն պարգեւներուն եւ ես ձեզի ցոյց կու տամ լաւագոյն ճամբան: Եթէ ես խօսիմ մարդոց եւ հրեշտակներու լեզուները, բայց սէր չունենամ՝ նման եմ պղինձի որ կը հնչէ եւ ծնծղայի որ կը դօղանջէ:

Եթէ ունենամ մարգարէութեան հոգին եւ թափանցեմ խորհուրդներու եւ գիտութեան գաղտնիքը, եթէ ունենամ լիութիւնը հաւատքի՝ լեռներ փոխադրելու չափ, բայց չունենամ սէր՝ ոչինչ եմ:

Եթէ բոլոր ինչքերս բաժնեմ իբրեւ ողորմութիւն, եթէ մարմինս տամ իբր հրոյ ճարակ, բայց չունենամ սէր՝ ոչինչ կ'օգտուիմ:

Մէրը համբերող է, սէրը ծառայասէր է, սէրը չի նախանձիր, չի պարծենար, չի հպարտանար, չի յանդգնիր: Մէրը իր սեփական շահը չի փնտռեր, չի գրգռուիր, չի չարախօսեր, անիրաւութեան մէջ չի հրճուիր, այլ կը խայտայ ուրախութեան մէջ:

Մէրը կ'արդարացնէ ամէն բան, կը հաւատայ, կը վստահի ամէն խոստումի, կը համբերէ ամէն բանի: Մէրը յաւերժական է:

Պետրոս Առաքեալին Առաջին Թուղթէն է այս ընթերցուածը, 3, 1-8ա

Նմանապէս դուք, կիներ, երբ հնազանդիք ձեր ամուսիններուն, եթէ նոյնիսկ մերժեն անոնք (Աստուծոյ) խօսքը, սակայն, նայելով իրենց կիներուն

օրինակին, եւ առանց ոչ մի խօսքի՝ անոնք կը սիրաշահուին, դիտելով ձեր պարկեշտ եւ յարգալիր ընթացքը:

Ձեր զարդարանքները միայն արտաքին չըլլան, մագերու հիւսքերով, ոսկեհուռ օղերով, վայելչագեղ արդուզարդով, այլ ըլլան ներքին, ձեր սրտին մէջ, քաղցրաբարոյ եւ խաղաղ հոգիի անկեղծութեամբ, որովհետեւ ա՛յս է ընտիրը՝ Աստուծոյ առջեւ:

Այսպէս կը զարդարուէին ատենօք սրբակենցաղ կիները, որ իրենց յոյսը դրած էին Աստուծոյ վրայ, եւ կը հպատակէին իրենց ամուսիններուն: Այսպէս, Սառա կը հնազանդէր Աբրահամի եւ գինք տէր կը կոչէր:

Դուք անոր զաւակներն էք, ուստի ուղիղ ընթացէք, առանց վախնալու եւ խռովելու: Նմանապէս դուք, ամուսիններ, իմաստութեամբ վարուեցէք ձեր կիներուն հետ, որովհետեւ անոնք աւելի դիւրաբեկ էակներ են: Յարգանքով վարուեցէք անոնց հետ, որովհետեւ անոնք այ ժառանգակիցներ են կեանքի շնորհքին: Այսպէսով, անոնք արգելք չեն ըլլար ձեր աղօթքներուն:

Ամէն բանէ առաջ, իրարու համամիտ եղէք, կարեկցող, եղբայրասէր, ազնուագութեւ խոնարհ: Չարը չարով մի՛ հատուցանէք, կամ բամբասանքը բամբասանքով. ընդհակառակն, օրհնեցէ՛ք, քանի որ կոչուած էք Աստուծոյ օրհնութիւնները ժառանգելու:

Բ.- ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Մատթեոսի Աւետարանէն, 7, 24-29

Այսպէս ուրեմն, ով որ լսէ խօսքերը զորս ըսի եւ զանոնք գործադրէ, նման է իմաստուն մարդուն, որ իր տունը կառոյց ժայռի վրայ: Անձրեւները տեղացին, գետերը յորդեցան, հովերը փչեցին ու մոլեզնեցան տան դէմ՝ որ չփլաւ, որովհետեւ հիմնուած էր ժայռի վրայ:

Իսկ ով որ կը լսէ խօսքերը զորս ըսի եւ զանոնք չի գործադրեր, նման է յիմար մարդուն՝ որ տուն չինեց աւազի վրայ: Անձրեւը տեղաց, գետերը յորդեցան, հովերը փչեցին ու եկան հարուածեցին տունը՝ որ փլաւ, եւ մեծ եղաւ անոր կործանումը:

Յիսուս երբ աւարտեց իր խօսքերը, ժողովուրդը հիացած էր անոր վարդապետութեան վրայ, որովհետեւ կը սորվեցնէր իշխանութեամբ, եւ ո՛չ դպիրներուն նման:

Յովհաննէսի Աւետարանէն, 2, 1-11

Երրորդ օրը հարսանիք մը կար Գալիլիոյ Կանաքաղաքին մէջ եւ Յիսուսի մայրը հրաւիրուած էր: Յիսուս եւ իր աշակերտներն ալ հրաւիրուեցան:

Գինին պակսեցաւ եւ Յիսուսի մայրը ըսաւ իրեն. «Գինի չունին»: Յիսուս պատասխանեց. «Ի՞նչ կ'ուզես ինձմէ, ո՛վ կին, քանի որ տակաւին ժամս չէ հասած:» Մայրն ըսաւ սպասաւորներուն. «Ըրէք ինչ որ հրամայէ ձեզի:»

Այնտեղ կային քարէ վեց թակոյկներ, իւրաքանչիւրը երկու կամ երեք մար տարողութեամբ եւ որոնք սահմանուած էին Հրեաներու լուսցումներուն: Յիսուս ըսաւ սպասաւորներու. «Թակոյկները ջուրով լեցուցէք:» Եւ լեցուցին զանոնք մինչեւ բերանը: «Հիմա, ըսաւ Յիսուս, առէք եւ տարէք սեղանապետին:» Առին եւ տարին:

Սեղանապետը, երբ ճաշակեց գինիի փոխուած ջուրը, շէր գիտեր թէ ուրկէ էր, - թէպէտ սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին, գիտէին - փեսային դիմեց եւ ըսաւ. «Ամէն մարդ նախ ընտիր գինին կը հրամցնէ եւ երբ հրաւիրեալները արբենան, այն ատեն կը հրամցնէ վատորակ գինին: Իսկ դուն, ընդհակառակը, ընտիր գինին մինչեւ հիմա պահեցիր»:

Ասիկա եղաւ սկիզբը Յիսուսի նշաններուն Գալիլիոյ Կանայի մէջ: Ան յայտնեց իր փառքը եւ աշակերտները հաւատացին իրեն:

Յովհաննէսի Աւետարանէն, 15, 9-13.

Ինչպէս Հայրը զիս սիրեց, այնպէս ալ ես ձեզ սիրեցի: Հաստատ մնացէք իմ սիրոյս մէջ:

Եթէ պահէք իմ պատուիրաններս, կը մնաք իմ սիրոյս մէջ, ինչպէս ես պահեցի Հօրս պատուիրանները եւ կը մնամ անոր սիրոյն մէջ:

Ասիկա ըսի ձեզի, որպէսզի ուրախութիւնս մնայ ձեր մէջ եւ ձեր ուրախութիւնը ըլլայ կատարեալ:

Ահա՛լատիկ իմ պատուիրանս. սիրեցէ՛ք զիրար, ինչպէս ե՛ս ձեզ սիրեցի: Չկայ աւելի մեծ սէր՝ քան իր կեանքը զոհել բարեկամներուն համար:

ԿԱՆՈՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Քահանան որ հաւատացեալներու խոստովանութիւնը լսելու իրաւասութիւն ունի, խոստովանարան կը նստի՝ ուրար հագած: Հաւատացեալը կը ծնրադրէ որոշուած տեղը եւ ինքզինքը կը խաշակնքէ:

Ապա կ'ըսէ.

Կը խոստովանիմ ամենակալ Աստուծոյ, երանուհի միշտ Կոյս Մարիամին, երանելի Միքայէլ հրեշտակապետին, երանելի Յովհաննէս Մկրտիչին, սուրբ Պետրոս եւ Պօղոս առաքեալներուն, եւ մեր սուրբ Հօր՝ Գրիգոր Լուսաւորչին եւ բոլոր սուրբերուն, նաեւ քո՛ւ առջեւդ, հա՛յր սուրբ, որովհետեւ շա՛տ մեղանչեցի՝ միտքով, խոսքով եւ գործով. վա՛յ ինծի, վա՛յ ինծի եւ յաւէտ վա՛յ ինծի:

Ապա զղջացեալ սրտով կը խոստովանի իր մեղքերը:

Իսկ քահանան, իր չորս պաշտօններուն շնորհիւ՝ իբր հայր, դատար, ուսուցիչ եւ բժիշկ, քաղցրութեամբ եւ մարդասիրութեամբ կը քննէ եւ կը դատէ, առանց ակնածութեան, կ'ուսուցանէ իմաստութեամբ եւ ճշտութեամբ, կը դարմանէ պէտքերուն համեմատ եւ խոհեմութեամբ:

Ասկէ ետք, հաւատացեալը կը կրկնէ իր զղջումը եւ

առաջադրությունը, ըսելով զղջման ներգործությունը (*): Այս քահանան մեղքերու արձակումը կու տայ ճետեւեալ բանաձեւով.

Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, խոստովանելոցդ եւ մոռացելոցդ: Եւ ես, կարգաւս քահանայական իշխանութեան եւ հրամանաւն աստուածային, թէ՛ զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս, նովին բանիւն ես արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց, ի խորհրդոց, ի բանից եւ ի գործոց, յանուն Հօր փառքի եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն:

Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդս սուրբ Եկեղեցւոյ, զի զոր ինչ գործեսցես բարիս՝ եղիցի քեզ ի բարեգործութիւն եւ ի փառս հանդերձեալ կենացն. ամէն:

Կամ՝ աշխարհաբար.

Մարդասէրն Աստուած թող ողորմի քեզի եւ թողութիւն շնորհէ՛ քու խոստովանած եւ մոռցուած բոլոր մեղքերուդ: Եւ ես, քահանայական կարգիս իշխանութեամբ եւ Աստուծոյ հրամանով՝ թէ՛ ինչ որ արձակէք երկրի վրայ, արձակուած պիտի ըլլայ երկինքի մէջ, նոյն խօսքով ես կ'արձակեմ քեզ մեղքի ամէն մասնակցութենէդ, մտածումներէդ, խօսքերէդ եւ գործերէդ, Հօր փառքի, Որդիին եւ սուրբ Հոգիին անունով. ամէն:

Դարձեալ, մասնակից կ'ընեմ քեզ սուրբ Եկեղեցւոյ խորհուրդներուն, որպէսզի ինչ բարիք որ գործես՝ համարուի քեզի իբր բարեգործութիւն եւ նկատուի գալիք կեանքին փառքին համար. ամէն:

Իսկ երբ ծանր պատճառ մը ստիպէ, ինչպէս մահուան պարագային, քահանան կրնայ կրճատել քանաձեւը՝ այս ձեւով.

Ես արձակեմ զքեզ յամենայն դատակնքոց եւ ի մեղաց, յանուն Հօր Ք եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն:

Կամ աշխարհաբար.

*Ես կ'արձակեմ քեզ բոլոր դատավճիռներէդ եւ մեղքերէդ, Հօր Ք, Որդիին եւ սուրբ Հոգիին անու-
նով. ամէն:*

Քահանան, եթէ անդրադառնայ որ ապաշխարողը դատավճիռի կամ վերապահութեան տակ կ'իյնայ, որոնց պատճառով ինքը չի կրնար արձակուիմ տալ, թող չարձակէ զայն՝ նախ քան անհրաժեշտ իշխանութիւնն ստանալը մեծատրներէն, բացի եթէ հիւանդը մահուան կէտին առջեւ կը գտնուի:

(*) Առ ի դիրութիւն, հոս կը դրուի զոջման ներգործութեան մէկ ձեւը. *Աստուած իմ, սաստիկ կը ցաւիմ քեզ վշտացնելուս համար, որովհետեւ անսահմանօրէն բարի ես եւ մեղքը կ'ատես: Քու սուրբ շնորհքովդ, կ'առաջադրեմ ասկէ ետք չմեղանչել եւ մեղքի առիթներէն փախչիլ:*

ՀԻՒԱՆԴՆԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Արկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ, կեցո եւ ողորմեա:

Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր Ք եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Տէ՛ր, քու զայրոյթիդ մէջ մի՛ յանդիմաներ զիս, եւ բարկութեանդ մէջ մի՛ սաստեր զիս:

Ողորմէ՛ ինձի, Տէ՛ր, որովհետեւ հիւնադ եմ ես, բժշկէ՛ հոգիս, որովհետեւ խռոված են ոսկորներս:

Արկ. Ալէլուիա օրթի:

Քհն. Խաղաղութիւն Ք ամէնուն:

Արկ. Նաեւ քու հոգիիդ հետ:

Երկիւղածութեամբ լսենք:

Քհն. Աւետարանը՝ ըստ Մատթէոսի (8, 5-17)

Արկ. Փառք քեզի, մեր Տէր Աստուածը:

Պռոսխումէ:

Աստուած կը խօսի:

Քհն. Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Երբ կափառնաում մտաւ, հարիւրապետ մը մօտեցաւ անոր, եւ աղաչելով կ'ըսէր. Տէ՛ր, մանուկս տու-

նը պառկած է անդամալոյծ եւ չարաչար կը տանջուի: Յիսուս ըսաւ անոր. «Ես կու գամ եւ կը բժշկեմ զինքը»: Հարիւրապետը պատասխանեց եւ ըսաւ. «Տէ՛ր, արժանի չեմ ես որ դուն իմ յարկիս տակ մտնես, այլ միայն խօսք մը ըսէ եւ մանուկս պիտի բուժուի: Որովհետեւ ես ալ իշխանութեան ենթակայ եմ, ձեռքիս տակ ունիմ զինուորներ. ասոր կ'ըսեմ զնա՛ եւ կ'երթայ, միւսին կ'ըսեմ՝ եկո՛ւր եւ կու գայ եւ ծառայիս՝ այս գործը ըրէ՛ եւ կ'ընէ»:

Յիսուս, երբ լսեց, հիացաւ եւ ըսաւ անոնց որ կը հետեւէին իրեն. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի մէջ անգամ այսպիսի հաւատք չգտայ երբեք: Կ'ըսեմ ձեզի, շատեր պիտի գան արեւելքէն եւ արեւմուտքէն եւ Աբբահամի, Սահակի եւ Յակոբի հետ պիտի բազմին Երկիրնքի Արքայութեան մէջ, իսկ Արքայութեան որդիները պիտի նետուին արտաքին խաւարին մէջ, հոն ուր լաց կայ եւ ակռաներու կըճտում»: Եւ ըսաւ հարիւրապետին. «Գնա՛, թող քեզի ըլլայ ինչպէս որ հաւատացիր»: Եւ նոյն օրը անոր մանուկը բուժուեցաւ:

Յիսուս Պետրոսի տունը եկաւ եւ տեսաւ անոր զոքանչը որ ջերմէ բռնուած կը պառկէր: Անոր ձեռքէն բռնեց եւ ջերմը թողուց զինքը, եւ ոտքի ելաւ ան եւ սկսաւ անոնց ծառայել:

Իրիկունը բազմաթիւ դիւահարներ բերին անոր եւ խօսքով մը միայն դեւերը կը հանէր եւ կը բուժէր բոլոր հիւանդները. որպէսզի կատարուի Եսայի մարգարէին խօսքը. «Ան մեր հիւանդութիւնները ջնջեց եւ մեր տկարութիւնները վրան առաւ»:

Արկ. Փառք քեզի, մեր Տէր Աստուածը:

ՔԱՐՈԶ

Աղաչենք մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի՝ հիւանդներուն եւ բոլոր վիշտերէ տառապողներուն համար, որ գլխայ իր մեծ ողորմութեամբը եւ բժշկէ իր ծառաներուն հոգիի եւ մարմնի հիւանդութիւնները, եւ կատարեալ առողջութեամբ հասցնէ ամէնքը մշտնջենաւոր եւ անապական կեանքին: Ինքը, Աստուծոյ միածին Որդին, որ Հօրմէն զրկուեցաւ՝ մարդկային ազգի բժշկութեան համար: Ո՛վ մեր Տէրն ու Փրկիչը, Յիսուս Քրիստոս, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛:

Քահանան, եթէ կ'ուզէ, կրնայ հիւանդին գլխուն վրայ դնել խաչափայտի կամ փշէ պսակի մասունք մը:

ԱՂՕԹՔ

Փարատէ ցաւերը եւ բժշկէ հիւանդութիւնները քու ժողովուրդիդ, մեր Տէր Աստուածը, եւ կատարեալ առողջութիւն շնորհէ ամէնուն քու ամենայաղթ խաչովդ, որու շնորհիւ մարդկային ազգի տկարութիւնը ջնջեցիր եւ մեր կեանքին ու փրկութեան թշնամին դատապարտեցիր: Դուն ես մեր կեանքն ու փրկութիւնը, բարերա՛ր եւ բազումողո՛րմ Աստուած, որ միայն ի՛նքդ կարող ես մեղքերը թողուլ եւ հեռացնել ախտերն ու հիւանդութիւնները մեր մէջէն. քեզի՛ յայտնի են մեր կարիքներուն պէտքերը: Բարիքներու

տուիչ, ըստ իւրաքանչիւրին պէտքերուն՝ առատօրէն պարզեւէ ողորմութիւնդ քու արարածներուդ, որոնցմէ տեւապէս կը փառաւորուի եւ կը գովուի Ամենասուրբ Երրորդութիւնդ. այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն՝

Քահանան, խաչը համբուրել տալով հիւանդին եւ շուրջիցներուն, կ'ըսէ.

Սուրբ խաչին զօրութեամբ, Տէրը թող պահէ քեզ հոգւոյ եւ մարմնոյ ամէն փորձութենէ:

Սրկ. Սուրբ խաչին շնորհիւ աղաչենք Տիրոջ, որ ասով փրկէ մեզ մեղքերէն եւ ազատէ՝ իր ողորմութեան շնորհիւ: Ամենակալ Տէր Աստուած մեր, փրկէ՛ եւ ողորմէ՛:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛:

Պահպանիչ եւ յոյս հաւատացեալներու, Քրիստո՛ս, Աստուած մեր, խաղաղութեամբ պահպանէ՛ այս ծառադ (կամ աղախինդ), եւ այս ժողովուրդդ՝ սուրբ եւ պատուական խաչիդ հովանիին տակ: Փրկէ՛ տեսանելի եւ անտեսանելի թշնամիէն, արժանի՛ ըրէ գոհութեամբ փառաւորելու քեզ՝ Հօր եւ Սուրբ Հոգիիդ հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քհն. Օրհնեալ ✠ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես, Սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի:

ՀԻՒԱՆԳՆԵՐՈՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Ձհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց. եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ:

Կամ աշխարհաբար՝

Հայր մեր, որ երկինքն ես, սուրբ ըլլայ քու անունդ, թող գայ թագաւորութիւնդ, թող ըլլայ քու կամքդ, ինչպէս երկինքի մէջ՝ նոյնպէս երկրի վրայ:

Մեր ամենօրեայ հացը տուր մեզի այսօր, եւ ներէ՛ մեզի մեր յանցանքները, ինչպէս որ մենք ալ կը ներենք՝ մեզի դէմ յանցանք գործողներուն:

Եւ մի՛ տանիր մեզ փորձութեան, այլ փրկէ՛ մեզ չարէն:

Որովհետեւ քո՛ւկդ է արքայութիւնը ✠ եւ զօրութիւնը եւ փառքը՝ յաւիտենապէս. ամէն:

Քհն. Ձի քո է արքայութիւն ✠ եւ զօրութիւն եւ փառք. յաւիտեանս. ամէն:

✠ ✠ ✠

ԿԱՐԳ ՀԻՒԱՆՔՆԵՐՈՒ ՕԾՈՒՄԻ

Քահանան, Հիւանդաց Իւղի սրուակը առած, կը բերէ հիւանդին տունը եւ կը գետեղէ գայն յատուկէն պատրաստուած սեղանի մը վրայ: Ապա խաչը համբուրել կուտայ հիւանդին եւ օրհնեալ ջուր կը սրսկէ խաչածեւ անոր, ինչպէս նաեւ ներկաներուն վրայ եւ սենեակին շուրջը, ըսելով.

Յօղէ զիս մշտիկով, որպէսզի մաքրուիմ. լուա զիս եւ ձիւնէն աւելի սպիտակ պիտի դառնամ:

Ապա հետեւեալ աղօթքներու կարգը կը կատարէ:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ, կեցո եւ ողորմեա:

Քին. Օրհնութիւն եւ փառք Հօր Ք եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

ԱՂՕԹՔ

Մեր նուաստ անձին հետ, թող Տէրը, հաճի մուտք գործել այս տան մէջ եւ պարգեւել անոր բնակիչներուն՝ յաւիտենական երանութիւն, անխառն ուրախութիւն, առատ սէր, մշտատեւ առողջութիւն:

Թող Տէրը հեռու պահէ այս տունէն՝ չար ոգիները եւ ամէն չարամիտ երկպառակութիւն.

Թող խաղաղութեան հրեշտակները գան ու տեւապէս բնակին այս տան մէջ:

Տէ՛ր, քու սուրբ անունդ թող փառաւորուի, քու օրհնութիւնդ թող իջնէ մեր հոգիներուն վրայ եւ քու շնորհքդ սրբացնէ մեր վարքը:

Որովհետեւ դո՛ւն ես միակ սուրբն ու գթածը, եւ կ'ապրիս յաւիտենապէս՝ Հօրդ եւ Սուրբ Հոգիիդ հետամէն:

Խաղաղութիւն ✕ ամէնուր:

Արկ. Նաեւ քո՛ւ Հոգիիդ հետ:

Քհն. Աստուծոյ երկրպագենք:

Արկ. Քո՛ւ առջեւդ, Տէ՛ր:

Քհն. Աղաչենք եւ խնդրենք մեր Տէր Յիսուս Քրիստոսէն, որ օրհնէ ✕ այս տունը եւ անոր բնակիչները: Թող զրկէ անոնց բարի հրեշտակը իբրեւ պահապան եւ պարգեւէ շնորհքը՝ իրեն ծառայելու, որպէսզի իր սքանչելի օրէնքները անոնց մտքին առջեւ ըլլան միշտ: Թող անոնցմէ հեռու պահէ բոլոր հակառակորդ զօրութիւնները, որպէսզի զերծ մնան ամէն վախէ ու խռովութենէ եւ ողջ առողջ ապրին այս բնակարանին մէջ:

Ինք՝ որ կենդանի է, Հօր եւ Սուրբ Հոգիին հետ, եւ կը թագաւորէ, մեր Աստուածը՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սաղմոս 2.

Կց. Ողորմէ՛ ինծի, Տէ՛ր, որովհետեւ հիւանդ եմ ես.

բժշկէ՛ զիս, որովհետեւ խռոված են ոսկորներս:

Փլս. Տէ՛ր, մի՛ յանդիմաներ զիս զայրոյթիդ մէջ եւ բարկութեանդ մէջ մի՛ սաստեր զիս:

Յակոբ առաքեալին թուղթէն է այս ընթերցուածը (5-14-16):

Եղբայրնե՛ր, եթէ ձեզմէ մէկը հիւանդանայ, թող կանչէ եկեղեցւոյ երէցները որ աղօթեն անոր վրայ եւ իւղով օծեն զինքը Տիրոջ անունով. եւ հաւատքով կատարուած աղօթքը պիտի ազատէ հիւանդը, եւ Տէրը առողջութիւն պիտի պարգեւէ անոր, եւ եթէ մեղք ալ գործած է՝ պիտի ներուի իրեն: Իրարու խոստովանեցէք ձեր մեղքերը եւ աղօթեցէք իրարու համար, որպէս՝ զի բժշկուիք:

Ալէլուիա, ալէլուիա: Մաքուր պահէ հոգիս, Տէր. ո՛վ Աստուած իմ. փրկէ՛ ծառադ, որ քու վրադ դրած է իր յոյսը:

Սրկ. *Ալէլուիա օրթի:*

Քհյ. *Խաղաղութիւն ջ ամէնուն:*

Դպր. *Նաեւ քո՛ւ հոգիիդ հետ:*

Սրկ. *Երկիւղածութեա՛մբ լսենք:*

Քհյ. *Սուրբ Աւետարանին՝ ըստ Մարկոսի (6, 7-13):*

Դպ. *Փառք քեզի, Տէ՛ր Աստուած մեր:*

Սրկ. *Պռոսխումէ:*

Դպ. Աստուծոյ խօսքն է այս:

Քհյ. Տէրն Ք մեր Յիսուս Քրիստոս

Իր մօտ կանչեց տասներկուքը եւ սկսաւ արաքելու-
թեան զրկել զանոնք երկու երկու, իշխանութիւն տալով
անոնց՝ պիղծ դեւերու վրայ:

Եւ պատուիրեց անոնց՝ ճամբու համար ուրիշ բան
չառնել եթէ ոչ գաւազան մը. ո՛չ պարկ, ո՛չ հաց, ո՛չ
մախաղ, ո՛չ ալ դրամ գօտիին մէջ. այլ հագուելի հողա-
թափ մը միայն եւ կրկին պարեգօտ չկրել:

«Ո՛ր տունն ալ մտնէք», ըսաւ անոնց, «հո՛ն բնակե-
ցէք, մինչեւ որ մեկնիք անկից: Եւ եթէ տեղ մը չընդու-
նին ձեզ եւ մտիկ չընեն ձեզի՝ անկէ մեկնելու ատեն
թօթափեցէք ձեր ոտքի փոշին՝ իբր վկայութիւն անոնց
դէմ»: Եւ անոնք ելլելով՝ կը քարոզէին մարդոց որպէս-
զի ապաշխարեն:

Շատ դեւեր կը հանէին եւ իւզով կ'օծէին բազմաթիւ
հիւանդներ եւ կը բժշկէին զանոնք:

Դպր. Փա՛ռք քեզի, մեր Տէ՛ր Աստուածը:

Եթէ ժամանակը ներէ եւ յարմարութիւն կայ՝ ըսել.

Արկ. Աղաչենք Տիրոջ՝ երկնատուր խաղաղութեան եւ
մեր հոգիներու փրկութեան համար:

Քհյ. Տէ՛ր, ողորմէ՛:

Արկ. Աղաչենք Տիրոջ՝ որպէսզի Տէր Աստուած լա՛ն
մեր աղօթքին ձայնը:

Քհյ. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Աղաչենք Տիրոջ՝ որպէսզի Աստուած քաւէ եւ ներէ մեր մեղքերը:

Քհյ. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Աղաչենք Տիրոջ՝ մեր կամայ եւ ակամայ բոլոր յանցանքներուն թողութեան համար:

Քհյ. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Աղաչենք Տիրոջ՝ որպէսզի արհամարհանքի առարկայ չըլլանք պատասխանատուութեան օրը:

Քհյ. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Աղաչենք Տիրոջ՝ հանգուցեալ հոգիներուն համար, որ ճշմարիտ եւ սուրբ հաւատքով ի Տէր ննջեցին:

Քհյ. Յիշէ՛ Տէ՛ր, եւ ողորմէ՛:

Սրկ. Դարձեալ, միաբան, Տիրոջ աղաչենք՝ մեր ճշմարիտ եւ սուրբ հաւատքին համար:

Քհյ. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Մեր անձերը եւ իրար զիրար ամենակալ Տէր Աստուծոյ յանձնենք:

Քհյ. Քեզի կը յանձնենք, Տէր, մեր հոգիները:

Սրկ. Ողորմէ՛ մեզի, մեր Տէր Աստուածը, մեծ ողորմութեամբդ. ամէնքս միասին ըսենք:

Քհյ. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛:

ԱՂՕԹՔ

*Տէ՛ր եւ ամենակալ Հա՛յր սուրբ,
յաւիտենական Աստուա՛ծ,
լսէ՛ մեզ, եւ զրկէ՛ երկինքէն քու սուրբ հրեշտակդ,
որպէ՛սզի գայ եւ պահպանէ՛ մեզ,
իմամէ՛ ու հովանաւորէ,
օգնէ՛ ու պատասպարէ
այս տան բոլոր բնակիչները,
չնորհիւ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի. ամէն:*

(Եթէ ժամանակը չի ներեր, քահանան կրնայ զանց ընել ամբոջովին կամ մասամբ վերեւ դրուած աղօթքները):

Կարգ Ապաշխարութեան

Եթէ հիւանդը կը փափաքի խոստովանիլ, քահանան կը լսէ անոր խոստովանանքը եւ արձակում կու տայ. իսկ եթէ հիւանդը չի գգար խոստովանելու հարկը, քահանային ու ներկաներուն հետ կ'ըսէ.

Կը խոստովանիմ ամենակալ Աստուծոյ, երանուհի միշտ Կոյս Մարիամին, երանելի Միքայէլ հրեշտակապետին, երանելի Յովհաննէս Մկրտիչին, սուրբ Պետրոս եւ Պօղոս առաքեալներուն, եւ մեր սուրբ Հօր՝ Գրիգոր Լուսաւորչին եւ բոլո՛ր սուրբերուն, նաեւ քո՛ւ առջեւդ, Հա՛յր սուրբ, որովհետեւ շա՛տ մեղանչեցի՝ միտքով, խօսքով եւ գործով. վա՛յ ինձի, վա՛յ ինձի եւ յաւէ՛տ վայ ինձի:

Քիչ. Թող ողորմի քեզի ✠ մարդասէր Աստուածը, թողու/թիւն թող շնորհէ՛ անցեալ ու ներկայ բոլո՛ր յանցանքներուդ, թող պահպանէ՛ քեզ գալիքներէն, հաս-

ՀԻՒԱՆԳՆԵՐՈՒ ՕԾՈՒՄ

տատո՛ւն պահէ քեզ բարի գործերուն մէջ եւ հանգիստ տայ քեզի՝ գալիք կեանքին մէջ:

Քահանան ձեռքը կը դնէ հիւանդին վրայ (կամ կը տա-րածէ ձեռքը անոր վրայ, եթէ փոխանցիկ ըլլայ անոր հիւանդութիւնը) եւ կ'ըսէ.

Յանուն Հօր ✠ եւ Որդւոյ ✠ եւ Հոգւոյն Սրբոյ ✠, մեր այս ձեռքերուն զրուժեամբ թող շիջանի քու մէջդ չար ոգիի ամէն զօրութիւն, բարեխօսութեամբ բոլոր սուրբ հրեշտակներուն, հրեշտակապետներուն, նահապետներուն, մարտիրոսներուն, խոստովանողներուն, կոյսերուն եւ համայն սուրբերուն. ամէն:

Ապա քահանան, թաթխելով աջ ձեռքին թթամաւր սուրբ Իւղին մէջ, խաչածեւ կ'օծէ հիւանդին անդամները՝ արտասանելով ստորեւ դրուածները, եւ ասոր հետ միասին ըսելով անոնցմէ իւրաքանչիւրին համար սեպիական ձեւը, հետեւեալ կերպով.

Աչքերուն.

Այս սուրբ օծումով եւ իր ամենագուլթ ողորմութեամբ, թող Տէրը ներէ քեզի՝ մեղքերը զորս գործած ես տեսանելիքովդ. ամէն:

Ականջներուն.

Այս սուրբ օծումով եւ իր ամենագուլթ ողորմութեամբ, թող Տէրը ներէ քեզի՝ մեղքերը զորս գործած ես լսելիքովդ. ամէն:

Քիթիմ.

*Այս սուրբ օծումով եւ իր ամենագուլթ
ողորմութեամբ, թող Տէրը ներէ քեզի՝
մեղքերը զորս գործած ես
հոտոտելիքովդ. ամէն:*

Բերանին, ամփոփուած շրթունքներով.

*Այս սուրբ օծումով եւ իր ամենագուլթ
ողորմութեամբ, թող Տէրը ներէ քեզի՝
մեղքերը զորս գործած ես
ճաշակելիքովդ եւ բերնիդ խօսքերով. ամէն:*

Զեռներուն.

*Այս սուրբ օծումով եւ իր ամենագուլթ
ողորմութեամբ, թող Տէրը ներէ քեզի՝
մեղքերը զորս գործած ես
շօշափելիքովդ. ամէն:*

Ծանօթ. Լաւ նկատի առնել թէ հիւանդ քահանային
ձեռները կ'օծուին դուրսէն, իսկ աշխարհականներունը՝
ներսէն, ամփոփում վրայ:

Ոտներուն.

*Այս սուրբ օծումով եւ իր ամենագուլթ
ողորմութեամբ, թող Տէրը ներէ քեզի՝
մեղքերը զորս գործած ես
ոտքերուդ գնացքով. ամէն:*

Կողին (կամ կուրծֆին)

*Այս սուրբ օծումով եւ իր ամենագուլթ
ողորմութեամբ, թող Տէրը ներէ քեզի՝
մեղքերը զորս գործած ես
հեշտասիրութեամբ. ամէն:*

Կողի – կամ կուրծֆի – այս օծութիւնը զանց կ'ըլլայ միշտ կիներու պարագային, առ ի պարկեշտութիւն. նաեւ այր մարդոց պարագային, երբ անոնք, հիւանդութեան պատճառով, հազիւ կրնան կամ անկարող են շարժելու առանց վտանգի:

Երբ ֆահանան ծանր հարկաւորութեան առջեւ գտնուի ուր, ըստ իր դատողութեան, կը վախճայ որ հիւանդը վախճանի նախ քան ամբողջ օծութեան կատարուիլը՝ այն ատեն ֆահանան կ'օժէ նակատը հիւանդին՝ ըսելով այս ձեւը.

*Այս սուրբ օծումով եւ իր ամենագուլթ
ողորմութեամբ, թող Տէրը ներէ քեզի՝
մեղքերը զորս գործած ես զգայարանքներովդ,
տեսանելիքովդ, լսելիքովդ, ճաշակելիքովդ,
հոտոտելիքովդ, շօշափելիքովդ, ոտքերուդ գնացքով
եւ հեշտասիրութեամբ. ամէն:*

Քահանան նկատի ունենայ՝ թէ կարելի չէ կատարել վերեւ նշանակուած մէկ տեսակ օծումի բանաձեւը, բացի այն պարագային, ուր իրական հարկաւորութիւն կայ. ապա թէ ոչ՝ զգայարանքներու լման օծումին սեպհական հինգ օծումներէն նոյնիսկ մէկ հատը զանց ընելը՝ մեղքէ գերծ չի կացուցաներ օծումը կատարողը:

ՀԻՒԱՆԳՆԵՐՈՒ ՕԾՈՒՄ

Իսկ եթե հիւանդը տակաւին կենդանի մնայ, քահանան թէական կերպով կը կատարէ իւրաքանչիւր օծումը առանձին առանձին, անոնց սեպհական ձեւով եւ մի առ մի, ինչպէս դրուած է վերեւ. պէտք է կատարուին նաեւ գեղջուած աղօթքները:

Ապաշխարութեան Սաղմոս (50)

Ողորմէ ինծի, Աստուած, քու անսահման ողորմութեամբդ, քու անհուն գթութեամբդ ներէ անօրէն գործերուս:

Ամբողջովին լուա զիս անօրէնութենէս եւ մաքրէ զիս մեղքերէս:

Ես լաւ կը ճանչնամ անօրէն գործերս, իսկ մեղքերս՝ դիմացս են շարունակ:

Քեզի դէմ միայն մեղանչեցի, Տէր, եւ չարիքը քու առջեւդ գործեցի:

Որպէսզի արդար ըլլաս խօսքերուդ մէջ եւ ուղիղ՝ դատաստանիդ մէջ:

Չարութեան մէջ յղացաւ զիս մայրս եւ մեղքի մէջ ան ծնաւ զիս:

Ճշմարտութիւնը կը սիրես, ինչ որ անյայտ է ու ծածուկ՝ իմաստութեամբդ կը յայտնես ինծի, Տէր:

Մշտիկով ցօղէ զիս որպէսզի մաքրուիմ, լուա զիս՝ որ ձիւնէն աւելի սպիտակ ըլլամ:

Ըրէ որ ցնծութեան եւ ուրախութեան ձայնը լսեմ, որպէսզի ցնծան տառապած ոսկորներս:

Դարձուր երեսդ իմ մեղքերէս եւ բոլոր չար գործերէս մաքրէ զիս:

Սուրբ սիրտ մը հաստատէ մէջս, Աստուած իմ, եւ ծոցիս մէջ՝ նոր եւ ուղիղ հոգի մը դիր:

Հեռու մի վաներ զիս երեսէդ, Տէր, եւ քու սուրբ Հոգիդ ետ մի առներ ինծմէ:

Տուր որ ցնծամ փրկութեամբս, եւ զօրութեանդ հոգիով հաստատէ զիս:

Քու ճանապարհդ պիտի սորվեցնեմ անօրէններուն, որպէսզի ամբարիշտները քեզի վերադառնան:

Փրկէ զիս արիւնէ, Աստուած, փրկութեա՛նս Աստուածը. եւ լեզուս պիտի ցնծայ արդարութեանդ մէջ:

Տէ՛ր, եթէ չըթունքս բանաս, բերանս օրհնութիւնդ պիտի երգէ:

Եթէ կամենայիր՝ զոհեր կը մատուցանէինք քեզի. բայց դուն չես ախորժիր ողջակէզներէն:

Աստուծոյ հաճելի զոհը՝ խոնարհ հոգին է. Աստուած չ'արհամարհեր սուրբ սիրտը եւ խոնարհ հոգին:

Քու կամքովդ բարիք ըրէ, Տէր, Սիրովին. եւ Երուսաղէմի պարիսպները պիտի կառուցուին:

Այն ատեն հաճելի պիտի ըլլան քեզի արդար զոհերը. քու խորանիդ վրայ ուխտի զուարակներ պիտի բերուին:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սրկ. Խնդրենք մեր Փրկիչէն որ իր գթասիրութեամբ՝ ողորմի մեր այս հիւանդ եղբօր (կամ քրոջ) եւ աշխարհի բոլո՛ր հիւանդներուն, որ բժշկէ զանոնք հոգեկան եւ մարմնական հիւանդութիւններէն, քաջա-

ուող պահէ եւ առաջնորդէ զանոնք՝ մշտնջենաւոր այն կեանքին ուր զերծ պիտի ըլլան ամէն հիւանդութենէ:

Քահանան ձեռքը կը դնէ հիւանդին գլուխը եւ կ'ըսէ.

ԱՂՕԹՔ

Տէ՛ր Աստուած, որ Յակոբ Առաքեալին բերնով ըսիր. «Եթէ ձեզմէ մէկը հիւանդանայ, թող կանչէ եկեղեցւոյ երէցները որպէսզի աղօթեն անոր վրայ եւ սուրբ իւզով օծեն զայն Տիրոջ անունով», եւ վստահեցուցիր զանոնք որ «հաւատքով կատարուած աղօթքը պիտի փրկէ հիւանդը եւ Տէրը առողջութիւն պիտի տայ անոր, եւ եթէ մեղք ալ գործած է ան՝ պիտի ներուի իրեն»։ Կը խնդրենք քեզմէ, ո՛վ մեր Փրկիչը, Սուրբ Հոգիին շնորհքով՝ փարատէ՛ ծառայիդ (կամ աղախինիդ) հիւանդութիւնը, բուժէ՛ անոր վէրքերը, ներէ՛ անոր մեղքերը, հեռացո՛ւր իրմէ հոգիի եւ մարմնի բոլո՛ր ցաւերը, եւ քու մարդասէր գթութեամբդ՝ կատարեալ առողջութիւն շնորհէ իրեն, որպէսզի, շնորհիւ քու բարեգթութեանդ, ան վերադառնայ իր նախկին վիճակին:

Դո՛ւն որ Հօր եւ Սուրբ Հոգիին հետ կենդանի ես եւ յաւիտենապէս կը թագաւորես. ամէն:

Կը խնդրենք քեզմէ, Տէ՛ր, գթութեամբ նայէ (Ա. Ա.) այս ծառայիդ (կամ աղախինիդ), որ մարմնոյ հիւանդութեամբ կը տառապի, եւ իննամէ իր հոգին, զոր Դուն ստեղծեր ես, որպէսզի առաջնորդուած խրատներէ, քեզմէ բուժուելով ճանչնայ թէ ազատուած է Քրիստոսիւ Տէրամբ մերով. ամէն:

Տէ՛ր, Հայր սուրբ, ամենակալ, յաւիտենական Աստ-

ուած, որ շնորհաբեր օրհնութիւնդ մեր տկար մարմիններուն վրայ տարածելով բազմապատիկ զթուլթեամբ կը պահպանես արարածներդ, մարդասիրութեամբդ օգնութեան հասիր մեզի, երբ քեզի կը դիմենք, որպէսզի այս ծառադ (կամ աղախինդ) հիւանդութենէ ազատած եւ քու աջովդ առողջացած՝ ոտքի հանես, զօրութեամբդ ամրացնես, կարողութեամբդ պատսպարես ու ամէն փափաքելի բարեբախտութեամբ վերադարձնես քու սուրբ Եկեղեցիիդ, Քրիստոսիւ Տէրամբ մերով. ամէն:

Քիյ. Այս իւղին օրհնութեամբ եւ յանուն ամենակալ Հայր Աստուծոյ եւ իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի մեր Տիրոջ եւ Սուրբ Հոգիին, թող ասոր չմօտենայ անսուրբ հոգին, ոչ ասոր անդամներու մասերուն, ոչ ալ անոր մտածումներուն, այլ Բարձրեալին զօրութիւնը բնակի ասոր մէջ. եւ շնորհիւ այս աղօթքին եւ այս իւղին օծութեան, արժանի ըլլայ ան ստանալու իրեն համար պատրաստուած առողջութիւնը՝ շնորհքով մեր Տէր Յիսուս Քրիստոսի. փառք անոր՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սրկ. Այս սուրբ խաչով աղաչենք Տիրոջ՝ որպէսզի ասով փրկէ մեզ մեղքերէն եւ ազատէ մեզ՝ շնորհիւ իր ողորմութեան: Ամենակալ Տէր, Աստուած մեր, փրկէ մեզ եւ ողորմէ մեզի:

Քիյ. Պահպանիչ եւ յոյս հաւատացեալներու, Քրիստոս, մեր Աստուածը, պահպանէ ծառաներդ խաղաղութեամբ՝ սուրբ եւ պատուական խաչիդ հովանիին տակ: Փրկէ տեսանելի եւ անտեսանելի թշնամիէն, արժանի

ըրէ մեզ՝ գոհուլթեամբ փառաւորելու քեզ Հօր եւ Սուրբ Հոգիին հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից·
ամէն:

Քնյ. Օրհնեալ Ճ Տէր մեր Յիսուս Քրիստոս· ամէն:

Հայր մեր, որ յերկինս ես...

Կամ աշխարհաբար՝

Հայր մեր, որ երկինքն ես, սուրբ ըլլայ քու ա-
նունդ, թող գայ թագաւորութիւնդ, թող ըլլայ քու
կամքդ, ինչպէս երկինքի մէջ՝ նոյնպէս երկրի վրայ:

Մեր ամենօրեայ հացը տուր մեզի այսօր, եւ ներէ՛
մեզի մեր յանցանքները, ինչպէս որ մենք ալ կը նե-
րենք՝ մեզի դէմ յանցանք գործողներուն:

Եւ մի՛ տանիր մեզ փորձութեան, այլ փրկէ՛ մեզ
չարէն:

Որովհետեւ քո՛ւկդ է արքայութիւնը Ճ եւ զօրու-
թիւնը եւ փառքը՝ յաւիտենապէս· ամէն:

Քահանան հիւանդին համբուրել կու տայ Աւետարանը
եւ սուրբ Խաչը, եւ կամ գլխուն վրայ կը դնէ գայն, ըսե-
լով.

Օրհնեալ Ճ ըլլաս Սուրբ Հոգիին շնորհքներովը, եւ
Տէրը ըլլայ քեզի ու բոլորիդ հետ· ամէն:

✠ ✠ ✠

**ԿԱՐԳ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ՈՐՈՎ ԼԻԱԿԱՏԱՐ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ
ԿԸ ՇՆՈՐՀՈՒԻ ՀԻՒԱՆԳՆԵՐՈՒՆ**

Քահանան, մտնելով հիւանդին սենեակը, կ'ըսէ.

Խաղաղութի՛ւնն այս տան:

Դպ. *Եւ անոր բոլոր բնակիչներուն:*

Քհն. *Յօղէ՛ զիս մշտիկով, եւ պիտի մաքրուիմ:
Լուս, եւ ձիւնէն աւելի սպիտակ պիտի ըլլամ:*

Սրկ. *Եւ եւս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք.
ընկալ, կեցո եւ ողորմեա:*

Քհն. *Օրհնութիւնն Ռ եւ փառք՝ Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն:*

Տիրոջ անունը օգնական ըլլայ մեզի:

Սրկ. *Անոր՝ որ երկինքն ու երկիրը ստեղծեց:*

Քհն. *Մի՛ յիշեր, Տէ՛ր, ծառայիդ (կամ աղախինիդ)
մեղքերը:*

Սրկ. *Եւ վրէժխնդիր մի՛ ըլլար անոր մեղքերուն
փոխարէն:*

Քհն. *Պահպանէ՛ քու ծառադ (կամ աղախինիդ):*

Սրկ. *Աստուած՝ իմ, քու վրադ դրած եմ ես իմ
յոյսս:*

Քհն. Տէ՛ր, լսէ՛ աղօթքս:

Արկ. Եւ աղաղակս դէպի քեզ պիտի բարձրանայ:

Քհն. Խաղաղութիւն թ՛ ամէնուն:

Արկ. Նաեւ քու հոգիիդ հետ:

Քհն. Աստուծոյ երկրպագենք:

Արկ. Քու առջեւդ, Տէ՛ր:

Քհն. Տէր, ողորմէ՛. Տէր, ողորմէ՛. Տէր, ողորմէ՛:

ԱՂՈԹՔ

Բազմագո՛ւլթ Տէր, Հայր գթած եւ Աստուած բոլոր մխիթարութիւններու, որ չես ուզեր կորուստը անոնց որ քեզի կը հաւատան եւ կը յուսան, քու մեծ գթութեամբդ եւ առատ ողորմութեամբդ նայէ՛ այս (Ա. Ա.) ծառայիդ (կամ աղախինիդ) որ քրիստոնէական ճշմարիտ հաւատք եւ յոյս ունի քեզի հանդէպ. այցելէ՛ անոր եւ փրկէ՛ զինք քու Որդւոյդ չարչարանքներուն եւ մահուան շնորհիւ: Քու գթութեամբդ եւ ողորմութեամբդ, շնորհէ՛ ասոր՝ բոլոր մեղքերուն քաւութիւնն ու թողութիւնը, որպէսզի անոր հոգին, երբ մեկնի այս երկրաւոր կեանքէն, ներողամիտ դատաւոր մը գտնէ քու մէջդ: Մաքրէ՛ անոր հոգին մեղքի ամէն արատէ՛ քու միածին Որդւոյդ արիւնով, որպէսզի արժանի ըլլայ հասնելու յաւիտեանական կեանքին, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհիւ. ամէն:

Հայր մեր, որ յերկինս ես...

Կը խոստովանիմ ամենակալ Աստուծոյ, երանուհի միշտ Կոյս Մարիամին, երանելի Միքայէլ հրեշտակապետին, երանելի Յովհաննէս Մկրտիչին, սուրբ Պետրոս եւ Պօղոս առաքեալներուն, եւ մեր սուրբ Հօր՝ Գրիգոր Լուսաւորչին եւ բոլոր սուրբերուն, նաեւ քո՛ւ առջեւդ, հա՛յր սուրբ, որովհետեւ շա՛տ մեղանչեցի՝ միտքով, խօսքով եւ գործով. վա՛յ ինծի, վա՛յ ինծի եւ յաւէ՛տ վայ ինծի:

Ամենակարողն Աստուած թող ողորմի քեզի եւ թողութիւն շնորհէ բոլոր յանցանքներուդ, եւ ընդունի քեզ յաւիտենական կեանքին մէջ. ամէն:

Ամենակարող եւ ողորմածն Աստուած թող ներէ եւ թողութիւն շնորհէ քեզի եւ արձակէ քեզ բոլոր մեղքերէդ. ամէն:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս, Որդի կենդանի Աստուծոյ, որ երանելի Պետրոս առաքեալին տուաւ իշխանութիւնը կապելու եւ արձակելու, ըստ իր անսահման գթութեան եւ ողորմութեան՝ թող ընդունի քու խոստովանութիւնդ եւ վերստին դարձնէ քեզի պատմուճանը զոր ստացար Մկրտութեամբ:

Եւ ես, այն իշխանութեամբ որ տրուած է ինծի առաքելական Աթոռէն, կը շնորհեմ քեզի լիակատար ներողութիւնը եւ բոլոր մեղքերուդ թողութիւնը. յանուն Հօր Ք եւ Որդւոյ Ք եւ Հոգւոյն Ք սրբոյ. ամէն:

Փրկագործ տնօրէնութեան ամենասուրբ խորհուրդին զօրութեամբ, ամենակարողն Աստուած թողու-

ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ՀԻՒԱՆԳՆԵՐՈՒՆ

Թիւն թող շնոհէ բոլոր պատիժներուդ՝ այժմ եւ հանդերձեալ կեանքին մէջ, արքայութեան դուռը թող բանայ քու առջեւ եւ մտցնէ քեզ յաւիտենական ուրախութեան մէջ. ամէն:

Թող օրհնէ քեզ ամենակարողն Աստուած՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին. ամէն:

✠ ✠ ✠

ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՆՆՁԵՑԵԱԼՆԵՐՈՒ

ՏԱՆ ԿԱՐԳ

Քահանան, ուրար հագած, եւ աւելի հանդիսաւոր առիթներուն՝ նաեւ շուրջառ, խաչը ձեռքին, պաշտօնեաներն ու դպիրները իրենց կարգին համեմատ զգեստաւորուած, կը կանգնին ննջեցեալին շուրջը:

Ապա այս կարգը կը կատարուի.

Սրկ. Եւ եւս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք, ըն-կա՛լ, կեցո՛ր եւ ողորմեա՛:

*Քհն. Օրհնութիւն եւ փառք՝ Հօր Ք եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւ-
ւիտենից. ամէն:*

Սարկաւագը կը խնկարկէ նախ սուրբ խաչին, յետոյ ննջեցեալին եւ քահանային, պաշտօնեաներուն, դպիրներուն եւ ժողովուրդին:

Կանոնագլուխը (ձայնի)

*Դատեա, Տէր, զայնոսիկ որ դատին զիս. ալէլուիա:
Մարտիր ընդ այնոսիկ որ մարտնչին ընդ իս. ալէ-
լուիա:*

*Ա՛ռ զզէն եւ զասպար քո, եւ արի յօգնել ինձ, հա՛ն
զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց. արգել զնոսա եւ
ասա դու ցանձն իմ, թէ փրկութիւն քո ես եմ. ալէլուիա:*

Մագեա՛ զողորմութիւնս քո ոյք ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո որք ուղիղ են սրտիւք. այլելուիա, այլելուիա:

Փառք Հօր Ք եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:
Այժմ՛ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սրկ. Երկնային խաղաղութեան եւ մեր հոգիներու փրկութեան համար, Տիրոջ աղաչենք:

ՔՌՆ. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Որպէսզի մեր աղաչանքի ձայնը լսելի ըլլայ Տէր Աստուծո՛ւմէ, Տիրոջ աղաչենք:

ՔՌՆ. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Հանգուցեալ հոգիներուն համար, որոնք ճշմարիտ եւ ուղիղ հաւատքով Տիրոջ մէջ ննջեցին, Տիրոջ աղաչենք:

ՔՌՆ. Տէ՛ր, ողորմէ՛, Տէ՛ր, ողորմէ՛, Տէ՛ր, ողորմէ՛:

ԱՂՈԹՔ

ՔՌՆ. Հոգիներու Աստուած եւ մարմիններու ստեղծող, որ մահը խափանեցիր, սատանան ոտնակոխ ըրիր եւ աշխարհի կեանք պարզեցիր, հանգչեցուր այս ծառայիդ/աղախինիդ հոգին, լոյսի եւ հանգիստի վայրը, ուր չկայ ոչ ցաւ, ոչ տրտմութիւն, ոչ յոգնութիւն, ոչ հեծութիւն:

Դուն, իբրեւ բարերար, մարդասէր եւ ողորմած Աստուած, ներում շնորհէ անոր մեղքերուն, որ գործած է խօսքով, գործով կամ մտածութեամբ. որով-

հետեւ չկայ մարդ որ ապրի ու չմեղանչէ:

Որովհետեւ դո՛ւն միայն առանց մեղքի ես եւ քու արքայութիւնդ յաւիտենական ու անվերջ է, եւ խօսքերդ ճշմարիտ են:

Որովհետեւ դո՛ւն ես կեանքն ու յարութիւնը բոլո՛ր ննջեցեալներուն. եւ քեզի՛ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ✕ ամէնուն:

Դպիր. Նաեւ քու հոգիիդ հետ:

Սրկ. Աստուծոյ երկրպագենք:

Դպիր. Քու առջեւդ, Տէր:

Քհն. Ամենակալ Տէր Աստուած մեր, որ քու բարերարութեամբդ աշխարհը ստեղծեցիր, մարդը հողէ կազմեցիր, գինք կեանքի եւ փառաւորութեան մէջ դրիր, լեցուցիր բարի պարգեւներով եւ քու առատ ողորմութեամբդ վերստին քեզի դարձուցիր ու հանգիստ պարգեւեցիր քու սուրբ կամքիդ անդորրութեան մէջ, կ'աղաչենք, երկնաւո՛ր Հայր, բոլոր ննջեցեալներուն, մանաւանդ ա՛յս հանգուցեալիս համար. ընդունէ՛ անոր հոգին խաղաղութեամբ եւ սուրբերուդ հետ հանգչեցուր արքայութեան մէջ:

Իսկ մեզ՝ արժանի ըրէ գոհանալով փառաւորելու Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դպիր. Պօղոս Առաքեալին Կորնթացիներուն ուղ-

դուած Երկրորդ Թուղթէն Է այս Ընթերցուածը. Բ 1, 3-7

Օրհնեա՛լ է Աստուած, Հայրը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի, Հայր՝ բոլոր գթութիւններու եւ Աստուածամէն մխիթարութեան, որ մեզ կը մխիթարէ մեր նեղութիւններուն մէջ, որպէսզի նոյն մխիթարութեամբ զոր մենք կ'ընդունինք Աստուծոմէ՝ մխիթարենք ուրիշները որ նեղութեան մէջ են:

Ինչպէս որ Քրիստոսի չարչարանքները առատացան մեր մէջ, այնպէս ալ Քրիստոսով՝ պիտի առատանայ մեր մխիթարութիւնը:

Եթէ նեղութեան մէջ ենք՝ ձեր մխիթարութեան եւ փրկութեան համար է:

Եթէ մխիթարուած ենք՝ ձեր սփոփանքին համար է, որով դուք կ'ունենաք կորով՝ տանելու բոլոր նեղութիւնները զորս մենք կը կրենք:

Մեր վստահութիւնը ձեր վրայ հաստատ է, քանի որ գիտենք թէ ինչպէս մասնակից էք մեր չարչարանքներուն՝ այնպէս ալ մխիթարութեան:

Սրկ. Ալէլուիա, Օրթի:

Քճճ. Խաղաղութիւն ջ ամենեցուն:

Դպիր. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Երկիւղածութեամբ լուարուք:

Քճճ. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու. 5, 21-24

Դպիր. Փառք քեզ, Տէր Աստուած մեր:

Սրկ. Պռոսպերուսէ:

Դպիր. Ասէ Աստուած:

Քհն. Տէրն Ք մեր Յիսուս Քրիստոս կ'ըսէ.

Ինչպէս որ Հայրը մեռեալները կը յարուցանէ եւ անոնց կեանք կու տայ, այնպէս ալ Որդին՝ կեանք կու տայ որուն որ ուզէ:

Հայրը մարդ չի դատեր, այլ ամէն դատաստան տուաւ Որդիին որպէսզի ամէնքը պատուեն Որդին ինչպէս կը պատուեն Հայրը:

Ով որ Որդին չի պատուեր, չի պատուեր նաեւ Հայրը որ զինք զրկեց:

Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ով որ իմ խօսքս լսէ եւ հաւատայ Անոր որ զիս զրկեց, կ'ընդունի յաւիտենական կեանքը, եւ դատաստանի չ'ենթարկուիր, այլ կ'անցնի մահէն դէպի կեանք:

ՄԱՂԹԱՆՔ

Քհն. Քրիստոս'ս Աստուած, հանգիստ եւ ողորմութիւն պարգեւէ այս հանգուցեալին հոգիին, եւ մեզի՝ մեղաւորներուս՝ մեր յանցանքներուն թողութիւն շնորհէ:

ՔԱՐՈՋ

Սրկ. Դարձեալ խաղաղութեամբ Տիրոջ աղաչենք:

Այս հանգուցեալ հոգիին համար աղաչենք մեր Փրկչին, Յիսուս Քրիստոսի, որ զայն արդարներուն հետ դասէ, եւ մեզ ալ փրկէ՝ շնորհիւ իր ողորմու-

Թեան. ամենակալ՝ Տէր, Աստուած մեր, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Քհն. Քրիստոս, Որդի՛ Աստուծոյ, անոխակալ եւ բարեգուլթ, գլթա՛ քու արարչական սիրովդ հանգուցեալ ծառայիդ/աղախինիդ Ա. Ա.ի հոգիին:

Յիշէ՛ զայն քու թագաւորութեանդ մեծ Գալուստին օրը:

Արժանի՛ ըրէ ողորմութեան, քաւութեան եւ մեղքերու թողութեան:

Պայծառացու՛ր զայն, դասաւորելով սուրբերուդ հետ՝ աջակողմեան դասին մէջ:

Որովհետեւ դու՛ն ես Տէրն ու Արարիչը ամէնուն, դատաւորը կենդանիներուն եւ մեռեալներուն, եւ քեզի՛ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ՝ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն

Քհն. Օրհնեալ ✠ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Դպ. Ձայնի. Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեցցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս՝ եւ յերկրի:

Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց:

Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեալ զմեզ ի չարէն:

Քահանան օրհնեալ ջուր կը սրսկէ եւ կը խնկարկէ դէպի ննջեցեալը: Ապա կ'ըսէ.

*Զի քո է արքայուլթիւն եւ զօրուլթիւն եւ փառք՝
յաւիտեանս. ամէն:*

ՃԱՄԲՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ

*Աշխարհ ամենայն, առ իս նայեցեալք, ախտակից
լերուք: Բանամ զչրլթունս, բարբառիմ լեզուաւս, բո-
ղոքեմ զանձնէ:*

Տէր ողորմեա, Տէր, ողորմեա: Տէր, ողորմեա:

*Գող եղէ մեղաց, գտող կորստեան, գուբ ինձ փո-
րեցի: Դաւեցի զանձն իմ, դաւաճանեցի, դարան գոր-
ծեցի: Տէր ողորմեա...:*

*Երբեմն էի լոյս, եւ այժմ եմ խաւար, եւ ըստուեր
մահու: Զիարդ պատմեցից զլթիւ մեղաց իմոց, զի բա-
զում են յոյժ: Տէր, ողորմեա...:*

*Էրկինք եւ երկիր, էկայք ողբացէք էղկելի զանձն
իմ: Ընտրեցի ըզչարն, ընկալայ կամաւ, ըզհոյլըս մե-
ղաց: Տէր, ողորմեա...:*

*Թաթաւիմ տըղմով, թաւալիմ ի մեղս, թօթափել
չկարեմ: Ժանտ ախտիւ լըցեալ, ժահահոտ եղէ ժամա-
նակ բազում: Տէր, ողորմեա:*

*Ի բաց մեկնեցայ ի սուրբ խորհրդոց, ի բարեաց
գործոց: Լաւ վարկաւ անձն իմ, լուսոյն հեռանալ,
լինել ընդ խաւար: Տէր ողորմեա...:*

*Խորհուրդըք չարին, խաբեն ըզհոգիս, խորասոյգ
առնեն: Մածկեն անդընդօք, ծիծաղին գլորմամբս,
ծանակ զիս առնեն: Տէր, ողորմեա...:*

ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ

Կամաւ կորացայ, կարկամեալս անձամբ, կանգնել ոչ կարեմ: Հուր մեղաց կիզող, հրդեհեաց որ յիս հոգեւոր բարիս: Տէր ողորմեա...:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱՐԳ

Երբ եկեղեցի կը հասնին, անջեցեալը կը դնեն մէջտեղ, գլուխը դէպի դուռ եւ դէմքը դէպի խորան:

Քահանան կը կանգնի բեմին վրայ, շրջապատուած պաշտօնեաներու եւ դպիրներու դասով:

Իսկ խաչակիրն ու երկու ջահակիր դպիրները անջեցեալին գլխուն կողմը, երեսնին դէպի աւագ խորան:

Սրկ. Եւ եւս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք ընկալ, կեցր եւ ողորմեա:

Քհն. Օրհնութիւն եւ փառք, Հօր Ք եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սարկաւագը կը խնկարկէ անխ խորանին, ապա քահանաներուն, պաշտօնեաներուն, դպիրներուն, ժողովուրդին եւ անջեցեալին:

Դպիրները կ'երգեն Ծարականը (ԳԿ)

Բանդ Աստուած որ ի ծոց Հօր. վասն մերոյ փրկութեան ի յերկնից խոնարհեցար. զի ըզմեզ նորոգեսցես ի կեանս. Աստուած հարցըն մերոց:

Որ հանդերձեալ ես գալ փառօք Հօր. զարթուցանել ըզնրնջեցեալսն ի սուրբ անունըդ քո. նորոգեա եւ

ըզմեր ննջեցեալսն. Աստուած հարցն մերոց:

Անմահութեանց տուող Քրիստոս եւ պարգեւիչ կենդանութեան. ի միւս անգամ գալստեանն եւ յաշխարհական ատենին. թողութիւն շնորհեա մեր նրնջեցելոց. Աստուած հարցն մերոց:

Լեառըն վիմածին՝ աղբիւր յորդառատ, բարունակ ծաղկեալ, այգի վայելուչ, սրովբէ հողեղէն. լաբուննոյ Բանին տուն տնօրէնութեան, տաղաւար Հոգւոյն. առ ծնեալն ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ. շնորհել զթողութիւն մեր նրնջեցելոցն:

Ով պահապան, որ ծագեցար յԵդեմայ. նըշան յողթութեան ընդդէմ աներեւոյթ թըշնամւոյն:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քեւ ցընծան ըստորայինքս ամենայն ի միւսանգամ քո գալստեանն. եւ յաւէժ զուարճանան դասք անմարմնոց առ էիցս:

Սաղմոս 83

Ալէլուիա, ալէլուիա:

Երանի՛ բոլոր անոնց որ կը բնակին Տիրոջ տան մէջ. անոնք յաւիտենապէս պիտի օրհնեն քեզ:

Որքա՛ն սիրելի է քու բնակարանդ, Տէ՛ր զօրութիւններու. քու գաւիթներուդ կը ցանկայ ու կը փափաքի հոգիս:

Ծանօթ. Կարելի է նախապէս առաջարկել հանգուցեալին ընտանիքէն կամ բարեկամներէն մէկուն որ առաջին ընթերցումը կատարէ:

Պօղոս առաքեալին Թեսաղոնիկեցիներուն ուղ-
ղուած Առաջին Թուղթէն է այս ընթերցուածը. 4, 12-17

*Չեմ ուզեր, եղբայրներ, որ տգէտ ըլլաք ննջե-
ցեալներուն մասին, որպէսզի չտրտմիք ինչպէս ու-
րիշները՝ որոնք յոյս չունին:*

*Եթէ կը հաւատանք որ Յիսուս մեռաւ եւ յարու-
թիւն առաւ, նմանապէս՝ Աստուած ննջեցեալները պի-
տի տանի Յիսուսի միջոցաւ եւ անոր հետ:*

*Ուստի հետեւելով Տիրոջ խօսքին, այս կ'ըսենք. թէ
մենք՝ որ Տիրոջ գալուստին ժամանակ դեռ կենդանի
մնացած պիտի ըլլանք, պիտի չհասնինք ննջեցեալ-
ներու վիճակին: Որովհետեւ նոյնինքն Տէրը, հրեշտա-
կապետին ձայնին հրամանով եւ Աստուծոյ փողին
հնչումով, պիտի իջնէ երկինքէն, եւ անոնք որ Քրիս-
տոսի մէջ ննջեցին, կանխաւ յարութիւն պիտի առնեն:*

*Որմէ ետք, մենք ալ, որ կենդանի մնացած պիտի
ըլլանք, անոնց հետ միասին պիտի յափշտակուինք
ամպերու վրայ, օդին մէջ՝ դիմաւորելու համար Տէրը:
Եւ այսպէս յաւիտենապէս Տիրոջ հետ պիտի ըլլանք:
Այսուհետեւ զիրար մխիթարեցէք այս խօսքերով:*

Ալէլուիա, ալէլուիա:

*Բարձր առնեմ զքեզ, Տէր, զի ընկալար զիս. եւ ոչ
ուրախ արարեր զթշնամին իմ յիս:*

Սրկ. Ալէլուիա, օրթի

Քհն. Խաղաղութիւն Ք ամենեցուն:

Դպիր. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Երկիրը զածութեամբ լուարուք:

Քհն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու. 12, 24 – 26:

Դպիր. Փառք քեզ, Տէր Աստուած մեր:

Սրկ. Պռոսիտումէ:

Դպիր. Ասէ Աստուած:

Քհն. Տէրն մեր Յիսուս ✠ Քրիստոս ասէ.

Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ ցորենի հատիկը հողին մէջ չիյնայ ու չմեռնի՝ ինք մինակ կը մնայ. իսկ եթէ մեռնի՝ շատ արդիւնք կու տայ:

Ով որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն. եւ ով որ կ'ատէ իր անձը այս աշխարհիս մէջ՝ յաւիտեանական կեանքին համար պիտի պահէ զայն:

Եթէ մէկը կ'ուզէ ինծի ծառայել՝ իմ ետեւէս թող զայ, եւ ուր որ ես եմ՝ իմ ծառաս ալ հոն պիտի ըլլայ:

Եթէ մէկը ծառայէ ինծի՝ Հայրս պիտի պատուէ զայն:

Դպիր. Փառք քեզ, Տէր Աստուած մեր:

Սուրբ Գրային այլ Ընթերցումներ
(Տես Յաւելուած, էջ 127)

Սրկ. Աշխարհէս մեկնող ննջեցեալներուն համար Տիրոջ աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Այս անցաւոր կեանքը լքողներուն եւ երկ-

ինքի բնակարանը մեկնող հոգիներուն համար Տիրոջ աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Հանգուցեալիս եւ մեր ամէնուս մեղքերուն քաւութեան համար Տիրոջ աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Որպէսզի ան ընդունուի լուսեղէն բնակարանները զորս Միածին Որդին պատրաստած է իր Հօր տան մէջ. Տիրոջ աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Որպէսզի ան լսէ կենսատու փողին ձայնը եւ ներկայանայ Տիրոջ առջեւ, Տիրոջ աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Որպէսզի ան արժանի ըլլայ դասուելու Տիրոջ աջ կողմը, Տիրոջ աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Հանգուցեալ հոգիներուն համար որոնք ճշմարիտ եւ ուղիղ հաւատքով Քրիստոսի մէջ հանգչեցան, Տիրոջ աղաչենք:

Քհն. Յիշէ՛, Տէ՛ր, եւ ողորմէ՛:

Սրկ. Մեր ճշմարիտ եւ սուրբ հաւատքին համար, Տիրոջ աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Մեր անձերը եւ զիրար Ամենակալ Տիրոջ
յանձնենք:

Քհն. Քեզի՛, Տէ՛ր, կը յանձնենք մեր անձերը:

Սրկ. Քու մեծ ողորմութեամբդ ողորմէ՛ մեզի, Տէ՛ր,
Աստուած մեր: Ամէնքս միաբան ըսենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛. Տէ՛ր, ողորմէ՛:

Քրիստոս Աստուած, յաւիտենակա՛ն թագաւոր, որ
ամէն ինչ կը կատարես ողորմութեամբ՝ աւելի քան
ինչ որ մե՛նք կը խնդրենք եւ կ'իմանանք. որ ամէն
ինչ մարդոց բարիքին համեմատ կը կատարես, ըն-
դունէ՛ այս ծառայիդ/աղախինիդ հոգին, եւ հանգիստ
պարգեւէ անոր՝ սուրբերուդ հետ որոնք սկիզբէն
քեզի հաճելի եղած են:

Ընդունէ՛ զինք քու արդարներուդ հետ եւ ըրէ՛ որ
բնակի քեզ սիրողներուն բնակարաններուն մէջ:

Եւ եթէ՛ մարդկային տկարութեամբ յանցանք գոր-
ծած է՝ խօսքով, գործով կամ մտածութեամբ, Դո՛ւն,
մարդասէ՛ր ու բարերա՛ր Աստուած, ներէ՛ իրեն:

Եւ ըրէ՛ որ մենք եւս յաջողինք խաղաղութեամբ
մեկնիլ այս աշխարհէն, որպէսզի երկինքի արքայու-
թիւնդ ժառանգենք:

Եւ ամէն բանի մէջ փառաւորենք Քեզ՝ Հօրդ եւ
Սուրբ Հոգիիդ հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ջ ամէնուն:

Դպիր. Նաեւ քու հոգիիդ հետ:

Սրկ. Աստուծոյ երկրպագենք:

Դպիր. Քու առջեւդ, Տէր:

ՔՈՆ. Գթա՛ծ եւ մարդասէ՛ր Աստուած, հանգիստ պարգեւէ քու այս ծառայիդ/աղախինիդ հոգիին՝ արդարներու բնակարաններուն մէջ, եւ շնորհէ՛ մեզի՝ որ մեր քրիստոնէական հաւատքը ապրինք առանց մեղքի. հաստատէ՛ մեզ ամէն տեսակ բարի գործերու մէջ, շնորհքով եւ մարդասիրութեամբ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի, որուն կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ՝ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դպիրները կ'երգեն.

Փառաց ի փառս բարձրանան, աջակողմեանքն վերանան. յորժամ լսեն զերանական ձայն օրհնութեան ի քէն կոչման, ննջեցելոյս մեր լսեցո զաստուածային բարբառդ քո. դասաւորեա ըզսա վերնոց երգել քեզ փառս ընդ զուարթնոց:

Քահանայք եւ ժողովուրդք հայցեմք ի քէն, Տէր բարեգութ. ընդ ննջեցեալսն հաւատով ընկալ զմեզ նովին յուսով. յՆրուսաղէմ քաղաք վերին, յորում արդարքն ժողովին. փառս երգել միշտ ընդ նոսին Երրորդութեանդ երբեակ անձին:

Ի վերին Երուսաղէմ, ի բնակարանս հրեշտակաց, ուր Ենովք եւ Եղիաս կան ծերացեալ աղաւնակերպ ի դրախտին եդեմական, պայծառացեալ արժանապէս.

ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ

ողորմած Տէր, ողորմեա հոգւոցն մեր ննջեցելոց:

Ահեղ խորհուրդ քահանային բազկատարած կայր ի բեմին առաջի սուրբ սեղանոյս. հուր շիջանի, խաւար մերժի, տրտեալ հոգիք ուրախանան. զի թողութիւն մեղաց լինի: Ողորմած Տէր, ողորմեա հոգւոցն մեր ննջեցելոց:

ՄԱՂԹԱՆՔ

Քհն. Քրիստո՛ս Աստուած, հանգիստ եւ ողորմութիւն պարգեւէ այս հանգուցեալին հոգիին, եւ մեզի՝ մեղաւորներուս՝ մեր յանցանքներուն թողութիւն շնորհէ:

ՔԱՐՈՋ

Սրկ. Դարձեալ խաղաղութեամբ Տիրոջ աղաչենք:

Այս հանգուցեալ հոգիին համար աղաչենք մեր Փրկչին, Յիսուս Քրիստոսի, որ արդարներուն հետ դասէ զայն, եւ մեզ ալ փրկէ՝ շնորհիւ իր ողորմութեան. ամենակալ Տէր Աստուած՝ մեր, փրկէ՝ մեզ եւ ողորմէ՝ մեզի:

ԱՂՈԹՔ

Քհն. Քրիստո՛ս, Որդի՛ Աստուծոյ, անոխակալ եւ բարեգութ, զԹա՛ քու արարչական սիրովդ հանգուցեալ ծառայիդ/աղախինիդ Ա. Ա.ի հոգիին:

Յիշէ՛ զայն քու թագաւորութեանդ մեծ գալուստին օրը:

Արժանի՛ ըրէ ողորմութեան, քաւութեան եւ մեղքերու թողութեան:

ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ

Պայծառացու՛ր զայն, դասաւորելով սուրբերուդ հետ՝ աջակողմեան դասին մէջ:

Որովհետեւ դու՛ն ես Տէրն ու Արարիչը ամէնուն, դատաւորը կենդանիներուն եւ մեռեալներուն, եւ քեզի՛ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ ✨ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Դպ. Զայնի. Հայր մեր որ յերկինս ես ... (ձայնի)

Քահանան օրհնեալ ջուր կը սրսկէ եւ կը խնկարկէ դէպի ննջեցեալը: Ապա կ'ըսէ.

Քհն. Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք, յաւիտեանս. ամէն:

Քրիստոս, Աստուած մեր, ողորմէ՛ համայն հաւատացեալ ննջեցեալներուն հոգիներուն:

ԳԵՐԵԶՄԱՆԻ ԿԱՐԳ

Ապա ննջեցեալը կը տանին գերեզման՝ նոյն ձեւով որ բերին եկեղեցի: Եւ ճամբու վրայ կ'ըսեն վերեւ յիշուած Ծարականները (Աշխարհ ամենայն, էջ 108) մինչ մատուոր կ'ուղղուին:

Երբ գերեզման կը մօտենան, կ'երգեն.

Ծարական (ԴՉ)

Մերձեցայ ես ի դուռըն գերեզմանին, եւ եհաս ինձ ժամանակ մըտանել ի յարգանդ երկրի, յորմէ ստեղծեալ եմք ամենեքեան:

*Բըժիշկ իմաստուն եւ ճարտարապետ, բժշկեա
զհոգևոյ իմ զհիւանդութիւն, արարող եւ յոյս փրկու-
թեան մերոյ:*

Քահանան կը կատարէ ճանապարհի աղօթքները
(գրաբար Մաշտոց՝ էջ 363-370) եւ թաղումի տեղը
հասնելով՝ կը դնեն ննջեցեալը գերեզմանի եզերքը:

Սրկ. *Եւ եւս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք
ընկալ, կեցո եւ ողորմեա:*

Քհն. *Օրհնութիւն Ք եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն:*

Սաղմոս 114

*Դարձի՛ր քու հանգիստիդ, հոգի՛ իմ, որովհետեւ
Տէրը կը կանչէ քեզ:*

*Ուրախ եմ որ Տէրը կը լսէ աղօթքիս ձայնը, ան կը
խոնարհեցնէ իր ականջը դէպի ինձի, երբ կեանքիս
բոլոր օրերուն կը կանչեմ զինքը:*

*Մահուան տառապանքները կը պաշարեն զիս, եւ
դժոխքի վիշտերը կը խուժեն իմ վրաս:*

*Երբ նեղութեան եւ անձկութեան մէջ էի, Տիրոջ
անունը կանչեցի. Ո՛վ Տէր, փրկէ՛ իմ հոգիս:*

*Ողորմած է մեր Տէր Աստուածը. ան կ'ողորմի եւ
կը պահպանէ իր զաւակները:*

Ես տկարացայ, եւ Տէրը փրկեց զիս:

*Դարձի՛ր քու հանգիստիդ, հոգի՛ իմ, որովհետեւ
Տէրը կը կանչէ քեզ:*

Արկ. Օրթի:

ՔՌՈՒ. Խաղաղութիւն թ ամենեցուն:

Դպիր. Եւ ընդ հոգւոյդ քում:

Արկ. Երկիւղածութեամբ լուարուք:

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու. 5, 24-30

Դպիր. Փա՛ռք քեզ, Տէր Աստուած մեր:

Արկ. Պռոսխումէ:

Դպիր. Ասէ Աստուած:

ՔՌՈՒ. Տէրն մեր թ Յիսուս Քրիստոս ասէ.

Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ով որ լսէ իմ
խօսքս եւ հաւատայ Անոր որ զիս ղրկեց, կ'ընդունի
յաւիտենական կեանքը եւ դատաստանի չենթարկ-
ուիր, այլ կ'անցնի մահէն ղէպի կեանք:

Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, կու գայ ժա-
մը, եւ արդէն իսկ հասած է, երբ մեռեալները պիտի
լսեն Աստուծոյ Որդիին ձայնը եւ լսողները՝ պիտի
փրկուին:

Որովհետեւ, ինչպէս որ Հայրը կեանք ունի ինքն
իր մէջ, այնպէս ալ տուաւ Որդիին՝ կեանք ունենալ
ինքնիր մէջ:

Իշխանութիւն տուաւ անոր՝ ղատելու, որովհետեւ
Մարդու Որդին է:

Արկ. Փառք քեզ, Տէր Աստուած մեր:

Սրկ. Որպէսզի գտնենք մեր բարերար Տիրոջ շնորհքը եւ ողորմութիւնը. Տիրոջ աղաչենք:

Քհն. Տէ՛ր, ողորմէ՛:

Սրկ. Հանգուցեալ հոգիներուն համար որ ճշմարիտ եւ ուղիղ հաւատքով Քրիստոսի մէջ ննջեցին, Տիրոջ աղաչենք:

Քհն. Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ՛:

ԱՂՕԹՔ

Քհն. Ո՛վ Աստուած, մեր ամէնուս յո՛յսը, քու ողորմութեանդ արժանի՛ ըրէ այս ծառադ/աղախինդ, զոր այժմ քեզի կանչեցիր, եւ ներէ՛ անոր բոլոր մեղքերը զոր ան գործած է, կամայ թէ սկամայ:

Խաղաղութեամբ ընդունէ անոր հոգին երկինքի արքայութեանդ մէջ՝ քու սուրբերուդ հետ:

Եւ մեզ ալ արժանի ըրէ գոհանալով փառաւորելու Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին. ամէն:

Սրկ. Եւ եւս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:

Դպիրներէն մէկը քահանայիցն կը ներկայացնէ մօտաւորապէս երեք ափ հող, զոր քահանան կ'օրհնէ խաչակնքելով եւ այսպէս ըսելով.

Քհն. Օրհնէ՛ Ք Տէր, քու ողորմութեամբդ այս քու ծառայիդ/աղախինիդ հողը, եւ յիշէ՛ զայն, որովհետեւ հող էր եւ քու հրամանիդ համաձայն կրկին հող դարձաւ:

Ապա աջ ձեռքով կ'առնէ օրհնուած հողէն եւ խաշաձե կը նետէ գերեզմանին վրայ՝ ըսելով.

Քհն. Թող իջնէ աստուածային օրհնութիւնը ասոր մահուան հողին վրայ, եւ զայն յարուցանէ վերջին օրը, Հօր, Ռոզիին եւ Սուրբ Հոգիին անունով. ամէն:

Յետոյ կ'իջեցնեն ննջեցեալին մարմինը գերեզմանին մէջ: Քահանան, դարձեալ առնելով օրհնուած հողէն, խաշաձե կը նետէ ննջեցեալին վրայ՝ ըսելով.

Քհն. Թող իջնէ օրհնեալ հողը ասոր գերեզմանին վրայ, եւ յարուցանէ զինք վերջին օրը՝ Հօր, Ռոզիին եւ Սուրբ Հոգիին անունով. ամէն:

Ապա դագաղը կը ծածկեն հողով, մինչ դպիրները կ'ըսեն բարձր ձայնով.

Քհն. Ողորմա՛ծ Աստուած, քաւէ՛ անօրհնութիւններս:

Հաւատք ունենալով, հոգի՛ խաղաղութեան, գնա՛ Արարիչիդ մօտ, հայցելով. Աստուա՛ծ իմ, հանգիստ պարգեւէ՛:

Փառք Հօր Ք եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ընդ Քրիստոսի պահելով յաղթող լիցուք փորձողին. եւ ընդ հրեշտակս երգեսցուք՝ փառք ի բարձունս Աստուծոյ:

Եւ ամէնքը միաբան կ'ըսեն.

Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղա-

դուլթիւն, ի մարդիկ հաճուլթիւն:

Եւ օրհնուլթիւն քեզ ի բարձունս. օրհնեալ ես Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ եւ գովեմք զքեզ:

Խոստովանիմք, Տէր, զքեզ եւ երկիր պագանեմք քեզ:

Փառաւորեմք զքեզ. գոհանամք, Տէր, զքէն վասն մեծի փառաց քոց:

Տէ՛ր թագաւոր, Սո՛ւրբդ երկնային, Աստուա՛ծ եւ Հայր ամենակալ:

Տէ՛ր եւ Որդի Հօր միածին՝ Յիսուս Քրիստոս եւ Սուրբ Որդի:

Տէ՛ր Աստուած՝ Գառն Աստուծոյ եւ Որդի Հօր, որ առեր զմերս ի Կոստէն, ողորմեցար, բարձեր զմեզս աշխարհի:

Եւ արդ, ընկալ զաղաչանս մեր, սո՛ւրբդ՝ որ նստիս ընդ աջմէ Հօր, ողորմեա՛ց մեզ:

Զի դու միայն սուրբ, դո՛ւ միայն բարձրեալ ես, դո՛ւ միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Տէ՛ր եւ Հոգիդ սուրբ, որ ի փառս Աստուած ընդ Հօր. ամէն:

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ, Տէ՛ր եւ գովեմք զանուն սուրբ քո յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտեանից:

Արժանի արա, Տէ՛ր, զօրս զայս խաղաղուլթեամբ, եւ առանց մեղաց պահեա զմեզ:

Օրհնեալ ես, Տէ՛ր Աստուած հարցն մերոց, գովեալ եւ փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս. ամէն:

*Օրհնեա՛լ Տէ՛ր, ուսո՛ր ինձ գարդարութիւնս քո (երի-
ցս):*

Տէ՛ր, ապաւէն եղեր մեր յագգէ ազգ:

*Ես աղաչեմ, Տէ՛ր, ողորմեա՛ ինձ եւ բժշկեա՛ զանձն
իմ. ես մեղայ քեզ:*

*Յո՛յց մեզ, Տէ՛ր, զողորմութիւնս քո եւ զփրկու-
թիւնս քո տուր մեզ:*

*Տէ՛ր, ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց
քոց մի՛ անտես առներ:*

*Տէ՛ր իմ, զքեզ ապաւէն ինձ արարի. ուսո՛ր ինձ
առնել զկամս քո, զի դո՛ւ ես Աստուած իմ:*

*Ի քէն է, Տէ՛ր, աղբիւր կենդանութեան, եւ լուսով
երեսաց քոց տեսանեմք զլոյս:*

*Ծագեա՛ զողորմութիւնս քո, որք ճանաչեն զքեզ,
Տէ՛ր:*

Ապա քահանան կ'ըսէ.

*Փառք, պատիւ եւ երկրպագութիւն ի բարձունս
Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

ՄԱՂԹԱՆՔ

*Քհն. Քրիստո՛ս Աստուած, հանգիստ եւ ողորմու-
թիւն պարգեւէ այս հանգուցեալին հոգիին, եւ մեզի՛
մեղաւորներուս՝ մեր յանցանքներուն թողութիւն
չնորհէ:*

ՔԱՐՈՉ

Արկ. Դարձեալ խաղաղութեամբ Տիրոջ աղաչենք:

Այս հանգուցեալ հոգիին համար աղաչենք մեր Փրկիչը, Յիսուս Քրիստոս, որ զայն արդարներուն հետ դասէ, եւ մեզ ալ փրկէ՝ շնորհիւ իր ողորմութեան. ամենակա՛լ Տէր, Աստուա՛ծ մեր, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Քհն. Տէ՛ր ողորմէ, Տէ՛ր ողորմէ, Տէ՛ր ողորմէ:

ԱՂՈԹՔ

Քհն. Քրիստո՛ս, Որդի՛ Աստուծոյ, անոխակալ եւ բարեգութ, գլթա՛ քու արարչական սիրովդ հանգուցեալ ծառայիդ/աղախինիդ Ա. Ա.ի հոգիին:

Յիշէ՛ զայն քու թագաւորութեանդ մեծ Գալուստին օրը:

Արժանի՛ ըրէ՛ ողորմութեան, քաւութեան եւ մեղքերու թողութեան:

Պայծառացու՛ր զայն, դասաւորելով սուրբերուդ հետ՝ աջակողմեան դասին մէջ:

Որովհետեւ դու՛ն ես Տէրն ու Արարիչը ամէնուն, դատաւորը կենդանիներուն եւ մեռեալներուն, եւ քեզի՛ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ՝ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սրկ. Եւ եւս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:

Քահանան կ'օրհնէ գերեզմանը ըսելով.

Քհն. Թող օրհնուի Ռ եւ կնքուած պահուի գերեզմանն ու ոսկրները Աստուծոյ այս ծառային (կամ աղախինին), սուրբ խաչին նշանով եւ սուրբ Աւետարանին խօսքով,

Հօր Ֆ, Որդիին եւ սուրբ Հոգիին անունով, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Արկ. Եւ եւս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛՛ եւ ողորմեա՛:

Քհն. Թող օրհնուի Ֆ եւ կնքուած պահուի շիրիմը եւ ոսկրները Աստուծոյ այս ծառային (կամ աղախինին), սուրբ խաչին նշանով եւ սուրբ Աւետարանին խօսքով, Հօր Ֆ, Որդիին եւ սուրբ Հոգիին անունով, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Արկ. Եւ եւս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛՛ եւ ողորմեա՛:

Քհն. Թող օրհնուի Ֆ եւ կնքուած պահուի դամբարանն ու ոսկրները Աստուծոյ այս ծառային (կամ աղախինին), սուրբ խաչին նշանով եւ սուրբ Աւետարանին խօսքով, Հօր Ֆ, Որդիին եւ սուրբ Հոգիին անունով, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Արկ. Եւ եւս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛՛ եւ ողորմեա՛:

Քհն. Թող անշարժ մնայ կնիքը Ֆ տէրութեան Աստուծոյ այս ծառային (կամ աղախինին), Ա.Ա. գերեզմանին վրայ մինչեւ գալուստը Քրիստոսի, որ իր յաջորդ գալստեան օրը պիտի նորոգէ ամէն բան իր փառքով. ամէն:

Քհն. Օրհնեալ Ֆ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ

Դպիր. (ձայնիւ) *Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս՝ եւ յերկրի:*

Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, եւ թող մեզ զպարտիս մեր որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց:

Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն:

Քահանան օրհնեալ ջուր կը սրսկէ եւ կը խնկարկէ
դէպի ննջեցեալը: Ապա կ'ըսէ.

*Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք՝
յաւիտեանս. ամէն:*

*Քրիստոս, Աստուած մեր, ողորմէ համօրէն հաւա-
տացեալ ննջեցեալներու հոգիներուն:*

✠ ✠ ✠

ՅԱԻԵԼՈՒԱԾ ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ա.-ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԹՈՒՂԹԵՐ

Պօղոս Առաքեալին Հոռոմայեցիներուն ուղղուած Թուղթէն է այս ընթերցուածը. 8, 18 -23

Քանի որ բաժնեկից ենք Քրիստոսի չարչարանքին, այնպէս ալ մասնակից պիտի ըլլանք անոր փառքին:

Ինծի այնպէս կը թուի թէ ներկայ ժամանակի չարչարանքները համեմատութիւն չունին փառքին հետ որ պիտի յայտնուի մեր մէջ:

Որովհետեւ արարածները անհամբեր կը սպասեն Աստուծոյ որդիներու յայտնութեան:

Մենք գիտենք թէ բոլոր արարածները մինչեւ այսօր կը հեծեն երկունքի տառապանքներու մէջ:

Ո՛չ միայն արարածները, այլ նաեւ մենք՝ որ ունինք Սուրբ Հոգիին երախայրիքը, կը հեծենք մեր հոգիին մէջ, սպասելով որդեգրութեան եւ մեր մարմինին փրկութեան:

Պօղոս Առաքեալին Հոռոմայեցիներուն ուղղուած Թուղթէն է այս ընթերցուածը. 8, 31 – 39

Իսկ արդ, ի՞նչ ըսենք ասկէ ետք. Եթէ Աստուած մեզի հետ է, ո՞վ մեզի հակառակ է:

Ինք որ չիւնայեց իր Որդիին, այլ մատնեց զայն մեզի համար, ինչպէ՞ս անով պիտի չչնորհէ մեզի ամէն բան:

Ո՞վ պիտի ամբաստանէ Աստուծոյ ընտրեալները:
Եթէ Աստուած կ'արդարացնէ զանոնք՝ ո՞վ ուրեմն
պիտի դատապարտէ. Յիսուս Քրիստոս, որ մեռաւ,
ի՞նչ կ'ըսեմ, յարութիւն իսկ առաւ, բազմեցաւ Աս-
տուծոյ աջ կողմը եւ կը միջնորդէ մեզի համար:

Ո՞վ պիտի բաժնէ մեզ Քրիստոսի սէրէն. նեղու-
թի՞ւնը, անձկութի՞ւնը, հալածա՞նքը, անօթութի՞ւնը,
չքաւորութի՞ւնը, վի՞շտը, սո՞ւրը:

Այս բոլորին մէջ յաղթական ենք անով որ մեզ
սիրեց:

Այո՛, վստահութիւն ունիմ թէ ո՛չ մահը, ո՛չ կեան-
քը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանութիւնները, ո՛չ ներ-
կան եւ ո՛չ ապագան, ո՛չ զօրութիւն, ո՛չ բարձ-
րութիւն, ո՛չ խորութիւն եւ ո՛չ ալ ուրիշ որեւիցէ
արարած կարող է բաժնել մեզ Աստուծոյ սէրէն, որ
յայտնուեցաւ՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

Պօղոս Առաքեալին Հռոմայեցիներուն ուղղուած
Թուղթէն է այս ընթերցումածը. 14, 7 - 12

Մեզմէ ո՛չ ոք կ'ապրի ինքիրեն համար եւ ո՛չ ոք
կը մեռնի ինքիրեն համար:

Եթէ կ'ապրինք՝ Տիրոջ համար կ'ապրինք, եթէ կը
մեռնինք՝ Տիրոջ համար կը մեռնինք:

Ուրեմն թէ՛ կեանքով եւ թէ՛ մահով մենք Տիրոջ
կը պատկանինք:

Եթէ Քրիստոս մեռաւ եւ յարութիւն առաւ, թէ՛
մեռեալներուն թէ՛ ողջերուն վրայ տիրելու համար է:

Ամէնքս ալ պիտի ելլենք Աստուծոյ ատեանին
առջեւ:

Որովհետեւ գրուած է. "Որքան որ ես կ'ապրիմ, կ'ըսէ Տէրը, ամէն ծունկ պիտի խոնարհի իմ առջեւ եւ ամէն լեզու Աստուծոյ փառք պիտի տայ":

Այսպէս ուրեմն, մեզմէ իւրաքանչիւրը ինք իր անձին համար հաշիւ պիտի տայ Աստուծոյ:

Պօղոս Առաքեալին Կորնթացիներուն ուղղուած Առաջին Թուղթէն է այս ընթերցուածը. 15, 12 - 16, 20

Քանի որ ձեզի քարոզուեցաւ թէ Քրիստոս յարութիւն առած է, ինչպէ՞ս ձեզմէ ոմանք կը համարձակին ըսել թէ մեռեալներու յարութիւն չկայ:

Եթէ մեռեալներու յարութիւն չկայ, ուրեմն Քրիստոս ալ յարութիւն չառաւ:

Եթէ Քրիստոս յարութիւն չառաւ՝ մեր քարոզութիւնը դատարկ է, դատարկ՝ նաեւ ձեր հաւատքը:

Եթէ այդպէս ըլլար, մենք Աստուծոյ դէմ սուտ վկաներ կ'ըլլայինք, քանի որ մենք, Աստուծոյ հակառակ՝ վկայած կ'ըլլայինք թէ ան Քրիստոսի յարութիւն տուած է մինչդեռ յարութիւն չէ տուած, եթէ ճիշդ է՝ թէ մեռեալները յարութիւն չեն առներ: Հետեւաբար, կորսուեցան անոնք որ ննջեցին Քրիստոսի մէջ:

Եթէ մեր յոյսը Քրիստոսի վրայ՝ մի'այն այս կեանքին համար է, մենք բոլոր մարդոց մէջ ամէնէն ողորմելիներն ենք:

Բայց ո՛չ. Քրիստոս յարութիւն առաւ:

Անիկա առաջին պտուղն է ննջեցեալներուն:

Պօղոս Առաքեալին Կորնթացիներուն ուղղուած Առաջին Թուղթէն Է այս ընթերցուածը. 15, 51-57

Խորհուրդ մը պիտի յայտնեմ ձեզի. ամէնքս պիտի չմեռնինք, բայց ամէնքս պիտի վերանորոգուինք, եւ այս՝ յանկարծ, ակնթարթի մը մէջ, երբ հնչէ փողին ձայնը:

Որովհետեւ նախ փողը պիտի հնչէ եւ ապա մեռեալները յարութիւն պիտի առնեն, անաղարտ, եւ մենք ալ պիտի կերպարանափոխուինք:

Հարկ է որ ապականացու արարածը դառնայ անապական, եւ մահուան դատապարտուած հակը՝ դառնայ անմահական:

Իսկ երբ ապականացու մարմինը զգենու անապականութիւնը եւ մահականացուն՝ անմահութիւնը, այն ատեն պիտի կատարուի Սուրբ Գիրքին խօսքը. «Մահը ընկղմեցաւ յաղթութեան մէջ: ո՛վ մահ, ո՞ր է յաղթանակդ»:

Շնորհակալ ըլլանք Աստուծոյ որ յաղթանակ կու տայ մեզի Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

Բ. ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Աւետարան ըստ Մատթէոսի. 25, 31 - 40

Մարդու Որդին պիտի գայ իր փառքով եւ իր բոլոր հրեշտակներուն հետ եւ պիտի բազմի փառքի աթոռին վրայ:

Եւ բոլոր ազգերը պիտի հաւաքուին անոր առջեւ:

Պիտի գատէ գանոնք իրարմէ, ինչպէս հովիւը կը գատէ ոչխարները այծերէն: Ոչխարները պիտի դնէ իր աջ կողմը, իսկ այծերը՝ ձախ կողմը:

Այն ատեն թագաւորը պիտի ըսէ իր աջ կողմը եղողներուն. «Եկէ՛ք, Հօրս օրհնեալները, առէք իբր ժառանգութիւն՝ արքայութիւնը որ աշխարհի սկիզբէն ի վեր պատրաստուած է ձեզի համար: Որովհետեւ անօթի էի եւ դուք կերակրեցիք ծարաւի էի եւ դուք խմելիք տուիք ինծի, թափառական էի եւ դուք ընդունեցաք զիս, մերկ էի եւ զգեստ տուիք ինծի, հիւանդ էի եւ այցելեցիք ինծի, բանտն էի եւ տեսութեան եկաք ինծի»:

Այն ատեն արդարները պիտի պատասխանեն. «Տէ՛ր, ե՞րբ անօթի տեսանք եւ կերակրեցինք քեզ, ծարաւի՞ եւ խմելիք տուինք քեզի»:

Ե՞րբ թափառական տեսանք եւ ընդունեցանք քեզ, կամ մերկ՞ եւ զգեստ տուինք քեզի»:

Ե՞րբ հիւանդ տեսանք քեզ կամ բանտի մէջ՞ եւ այցելութեան եկանք քեզի»:

Եւ թագաւորը պիտի պատասխանէ անոնց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ամէն անգամ որ բարիք մը ըրիք այս փոքրիկներէն մէկուն որ եղբայրներս են՝ զայն ինծի ըրած եղաք»:

Աւետարան ըստ Ղուկասու. 12, 32 – 40

Մի՛ վախնար, փոքրի՛կ հօտ, որովհետեւ ձեր Հայրը հաճեցաւ տալ ձեզի Արքայութիւնը:

Ծախեցէ՛ք ձեր ինչքերը եւ բաժնեցէ՛ք իբրեւ ողոր-

մուլթիւն:

Շինեցէ՛ք ձեզի անմաշ քսակներ եւ անսպառ գանձ՝ երկինքի մէջ, ուր ո՛չ գողը կը մօտենայ, ոչ ալ ցեցը կը կրծէ:

Որովհետեւ հոն ուր է ձեր գանձը, հոն պիտի ըլլայ նաեւ ձեր սիրտը:

Եղէ՛ք միշտ պատրաստ, գօտիները կապուած մէջքին եւ ճրագները վառուած:

Նմանեցէ՛ք մարդոց՝ որոնք կը սպասեն իրենց տիրոջ՝ թէ երբ պիտի դառնայ, որպէսզի հազիւ հասնի եւ դուռը բախէ՝ իսկոյն բանան անոր:

Երանի՛ այդ ծառաներուն, եթէ տէրը, վերադարձին, արթուն գտնէ զանոնք:

Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ի՛նք գօտի պիտի կապէ, սեղան պիտի բազմեցնէ զանոնք եւ պիտի ծառայէ անոնց:

Դե՛ռ աւելի երանի՛ անոնց՝ եթէ տէրը գայ երկրորդ կամ երրորդ ժամուն եւ այնպէս պատրաստ գտնէ զանոնք:

Լաւ իմացէ՛ք ասիկա. եթէ տանտէրը գիտնար ժամը երբ գողը կու գայ, չէր թողուր որ ան իր տունը կողոպտէ:

Դուք ալ ուրեմն պատրաստ եղէ՛ք, որովհետեւ ձեր չսպասած ժամուն պիտի գայ Մարդու Որդին:

Աւետարան ըստ Յովհաննու. 5, 24-30

Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ով որ լսէ իմ խօսքս եւ հաւատայ Անոր որ զիս զրկեց՝ կ'ընդունի

յաւիտենական կեանքը եւ դատաստանի չ'ենթարկուիր, այլ կ'անցնի մահէն՝ դէպի կեանք:

Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, կու գայ ժամը, եւ արդէն իսկ հասած է, երբ մեռեալները պիտի լսեն Աստուծոյ Որդիին ձայնը եւ լսողները՝ պիտի ապրին:

Որովհետեւ, ինչպէս որ Հայրը կեանք ունի ինքնիր մէջ, այնպէս ալ տուաւ Որդիին՝ կեանք ունենալ ինքնիր մէջ:

Իշխանութիւն տուաւ անոր՝ դատելու, որովհետեւ մարդու Որդին է:

Մի՛ գարմանաք, կու գայ ժամը, երբ ամէնքը որ գերեզմանի մէջ են, պիտի լսեն անոր ձայնը եւ պիտի ելլեն:

Անոնք որ բարիք ըրած են՝ յարութիւն պիտի առնեն կեանքի համար, իսկ անոնք որ չարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն դատաստանի համար:

Ես ինձմէ ոչինչ կրնամ ընել:

Կը դատեմ ինչպէս որ կը լսեմ, եւ դատաստանս արդար է, որովհետեւ ես իմ կամքս չեմ փնտուեր, այլ՝ կամքն Անոր որ զիս ղրկեց:

Աւետարան ըստ Յովհաննու. 6, 37- 40

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ըսաւ. Ամէն անոնք զորս Հայրը ինծի կու տայ, ինծի կու գան. եւ ով որ ինծի գայ, դուրս չեմ հաներ զինքը, որովհետեւ երկինքէն իջած եմ ո՛չ թէ իմ կամքս կատարելու այլ կամքն Անոր՝ որ զիս ղրկեց:

Արդ, ա՛յս է կամքը Հօրս որ գիս զրկեց՝ որ չկորսնցնեմ իր տուածներէն եւ ոչ մէկը, եւ յարութիւն տամ անոնց վերջին օրը:

Ա՛յս է Հօրս կամքը. ով որ տեսնէ Որդին եւ հաւատայ անոր՝ ընդունի յաւիտենական կեանքը, եւ ես յարութիւն տամ անոր վերջին օրը:

✠ ✠ ✠

ԿԱՆՈՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ

Յաւարտ սուրբ Պատարագի

Սրկ. Եւ եւս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք.
ընկալ կեցո եւ ողորմեա:

Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր Ճ եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն:

Շարական

Որ յանէից Ստեղծող գոյից, Արարչակից Հօր, Բանդ
Աստուած, թողութիւն շնորհեա ննջեցելոց քոց ծա-
ռայից, յորժամ դաս դատել զոր անարատ ձեռօք
ստեղծեր:

Որ ի խաչին անշնչացար, զմահու լուծեր զիշխանու-
թիւն, թողութիւն շնորհեա ննջեցելոց քոց ծառայից,
յորժամ դաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր:

Որ պսակիչդ ես քոց սրբոց եւ անվախճան բարեաց
բաշխող, թողութիւն շնորհեա ննջեցելոց քոց ծառայից,
յորժամ դաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր:

Ալէլուիա, ալէլուիա:

Սղմ. 129

Կց. Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց:

Փխ. Ի խորոց կարդացի առ քեզ, Տէր, Տէր, լուր
ձայնի իմում:

*Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց:
Թէ զանօրէնութիւնս քննես, Տէր, Տէր, ո՞ կարէ կալ
առաջի քո, զի ի քէն է քաւութիւն:*

*Վասն անուան քո համբերի, Տէր, համբեր անձն իմ
ի բանի քում, յուսացաւ անձն իմ ի Տէր:*

*Ի պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ, ի պահէ առաւօ-
տու յուսացաւ Իսրայէլ ի Տէր:*

*Ի Տեառնէ է ողորմութիւն բազում, եւ ի նմանէ է
փրկութիւն, եւ նա փրկեաց զԻսրայէլ յամենայն նե-
ղութեանց նորա:*

Սրկ. Ալէլուիա օրթի:

Քհն. Խաղաղութիւն ջ ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Երկիւղածութեամբ լուարուք:

Քհն. Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու (Ժբ.
24-26)

Դպ. Փառք քեզ, Տէր Աստուած մեր:

Սրկ. Պռոսխումէ:

Դպ. Ասէ Աստուած:

Քհն. Տէրն մեր Յիսուս ջ Քրիստոս ասէ.

*Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ ցորենի հա-
տիկը հողին մէջ չիյնայ ու չմեռնի՝ ինք մինակ կը
մնայ. իսկ եթէ մեռնի՝ շատ արդիւնք կու տայ:*

Ով որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն. եւ

ով որ կ'ատէ իր անձը այս աշխարհիս մէջ՝ յաւիտեանական կեանքին համար պիտի պահէ զայն:

Եթէ մէկը կ'ուզէ ինծի ծառայել՝ իմ ետեւէս թող զայ, եւ ուր որ ես եմ՝ իմ ծառաս ալ հոն պիտի ըլլայ:

Եթէ մէկը ծառայէ ինծի՝ Հայրս պիտի պատուէ զայն:

Դպիրները կ'երգեն

Փառաց ի փառս բարձրանան, աջակողմեանքըն վերանան. յորժամ լսեն զերանական ձայն օրհնութեան ի քէն կոչման, նընջեցելոյս մեր լսեցո զաստուածային բարբառը քո. դասաւորեա ըզսա վերնոց երգել քեզ փառս ընդ զըռարթնոց:

Քահանայք եւ ժողովուրդք հայցեմք ի քէն, Տէր բարեգուլթ. ընդ նընջեցեալսըն հաւատով ընկալ ըզմեզ նովին յուսով. յերուսաղէմ քաղաք վերին, յորում արդարքըն ժողովին, փառս երգել միշտ ընդ նոսին Երրորդութեանդ երրեակ անձին:

Ահեղ խորհուրդ քահանային բազկատարած կայր ի բեմին առաջի սուրբ սեղանոյս. հուր շիջանի, խաւար մերժի, տրտմեալ հոգիք ուրախանան. զի թողուլիւն մեղաց լինի: Ողորմած Տէր, ողորմեա հոգւոցն մեր ննջեցելոց:

ՄԱՂԹԱՆՔ

Այս հանգուցեալ հոգիին համար աղաչենք մեր Փրկչին, Յիսուս Քրիստոսի, որ արդարներուն հետ

դասէ գայն, եւ մեզ ալ փրկէ՝ շնորհիւ իր ողորմութեան. ամենակալ Տէր Աստուած մեր, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

ԱՂՕԹՔ

Քհն. Քրիստո՛ս, Որդի՛ Աստուծոյ, անոխակալ եւ բարեգութ, գլթա՛ քու արարչական սիրովդ հանգուցեալ ծառայիդ/աղախինիդ Ա. Ա.ի հոգիին:

Յիշէ՛ գայն քու թագաւորութեանդ մեծ գալուստին օրը:

Արժանի՛ ըրէ՛ ողորմութեան, քաւութեան եւ մեղքերու թողութեան:

Պայծառացու՛ր գայն, դասաւորելով սուրբերուդ հետ՝ աջակողմեան դասին մէջ:

Որովհետեւ դու՛ն ես Տէրն ու Արարիչը ամէնուն, դատաւորը կենդանիներուն եւ մեռեալներուն, եւ քեզի՛ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ Ճէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Դպ. Չայնի. Հայր մեր որ յերկինս ես...

Քհն. Ձի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք, յաւիտեանս. ամէն:

Քրիստոս, Աստուած մեր, ողորմէ՛ համայն հաւատացեալ ննջեցեալներուն հոգիներուն:

✠ ✠ ✠

ԿԱՆՈՆ ՏՆՕՐՀՆԷՔԻ **Քրիստոսի Սուրբ Ծննդեան փոսին**

Քահանան, ուրար հագած եւ ձեռքը խաչ առած,
կը կատարէ հետեւեալ օրհնութիւնը:

Արկ. **Եւ եւս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք,
ընկալ, կեցո եւ ողորմեա:**

Քհն. **Օրհնութիւն եւ փառք՝ Հօր Ք եւ Որդւոյ եւ
Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն:**

ԾԱՐԱԿԱՆ ԴԿ.

**Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր
յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան
աւետիս աշխարհի:**

**Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհեմ քաղաքի. որդիք
մարդկան օրհնեցէք, զի վասըն մեր մարմնացաւ:**

**Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս
պատեցաւ. ոչ մեկնելով ի Հօրէ, ի սուրբ այրին բազ-
մեցաւ:**

Ալէլուիա. ալէլուիա:

**Տուն Իսրայէլի, օրհնեցէք զՏէր. տուն Ահարոնի,
օրհնեցէք զՏէր. տուն Ղեւեայ, օրհնեցէք զՏէր. եր-
կիւղածք Տեառն, օրհնեցէք զՏէր:**

Արկ. **Ալէլուի. օրթի:**

Քհն. *Խաղաղութիւն թ ամէնուն:*

Սրկ. *Երկիրաճութեամբ լսենք:*

Քհն. *Սուրբ Աւետարանը ըստ Ղուկաս (2, 8-14):*

Սրկ. *Պռոսպոստմէ : Ասէ Աստուած:*

Քհն. *Վասն ծննդեան թ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:*

Այն կողմերը հովիւներ կային, որոնք բացօթեայ կ'ապրէին դաշտերուն մէջ եւ գիշերը իրենց հօտերուն պահպանութիւն կ'ընէին: Տիրոջ հրեշտակը երեւցաւ անոնց, Տիրոջ փառքը շրջապատեց զանոնք եւ սաստիկ վախցան: Հրեշտակը ըսաւ անոնց. «Մի՛ վախնաք, որովհետեւ ասա կ'աւետեմ ձեզի մեծ ուրախութիւն մը, որ պիտի ըլլայ նաեւ ամբողջ ժողովուրդինը: Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ, Փրկիչ մը ծնաւ ձեզի, որ Օծեալ Տէրն է: Ասիկա նշան թող ըլլայ ձեզի. պիտի գտնէք մանուկ մը փաթթուած խանձարուրով եւ դրուած մսուրի մը մէջ»:

Եւ իսկոյն հրեշտակին միացաւ բազմաթիւ հոյլ մը երկնային զօրութիւններու, որոնք զԱստուած կ'օրհնէին եւ կ'ըսէին: «Փառք Աստուծոյ երկինքի բարձունքներուն մէջ, եւ երկրի վրայ խաղաղութիւն մարդոց՝ իր սիրելիներուն»:

ԵՐԳ ԴԶ

Հոյլք հոգեղէնք ընդ հովիւսն քարոզէին ի յանբանից մըսուր գրանն բազմեալ:

Եւ մոգքն աստեղբն գուշակեալ մատուցին զընծայսըն խորհրդոյ:

Արկ. Այս սուրբ խաչով աղաչենք Տիրոջ, որ ասով փրկէ մեզ մեղքէն եւ ազատէ՝ շնորհիւ իր ողորմութեան. ամենակալ Տէր, Աստուած մեր, ազատէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

ԱՂՕԹՔ

ՔՐՈՑ. Պահպանէ՛, Քրիստո՛ս, մեր Տէր Աստուածը, խաղաղութեան մէջ, այս բնակարանն ու ասոր բնակիչները, քու սուրբ եւ պատուական խաչիդ հովանիին ներքեւ: Փրկէ՛ երեւելի եւ աներեւոյթ թշնամիէն. արժանի ըրէ որ գոհութեամբ փառաւորենք քեզ՝ Հօր եւ սուրբ Հոգիիդ հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ ✠ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր, որ յերկինս ես...

Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք, յաւիտեանս. ամէն:

Եւ խաչը համբուրել կու տայ ամէնուն:



ԿԱՆՈՆ ՏՆՕՐՀՆԷՔԻ
Աստուածայայտութեան
եւ Մկրտութեան րօնի

Քահանան, ուրար հագած եւ ձեռքը խաչ առած,
կ'օրհնէ աման մը ջուրը որ իր առջեւ կը դրուի:

Սրկ. *Եւ եւս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք,
ընկալ, կեցո եւ ողորմեա:*

Քհն. *Օրհնութիւն եւ փառք՝ Հօր Ք եւ Որդւոյ եւ
Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն:*

Ծարական ԴԶ.

Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար եւ մարմնացար
ի սուրբ Կուսէն. զի վերստին նորոգեսցես զապական-
եալն Ադամ: Դու Աստուած ի յերկրի երեւեցար եւ
ընդ մարդկան շըրջեցար. եւ փրկեցեր ըզտիեզերս
յանիծիցն Ադամայ:

Ալէլուի. ալէլուիա:

Տուն իսրայէլի, օրհնեցէք զՏէր. տուն Ահարոնի,
օրհնեցէք զՏէր. տուն Ղեւեայ, օրհնեցէք զՏէր. եր-
կիւղածք Տեառն, օրհնեցէք զՏէր:

Սրկ. *Ալէլուիա. օրթի:*

Քհն. *Խաղաղութիւն թ՛ ամէնուն:*

Սրկ. *Երկիւղածութեամբ լսենք:*

Քհն. *Սուրբ Աւետարանը ըստ Մատթէոսի (3, 13-17):*

Սրկ. *Պռոսխումէ: Աստուած կ'ըսէ:*

Քհն. *Վասն մկրտութեան թ՛ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:*

Այն օրերուն, Յիսուս Գալիլիայէն Յորդանան եկաւ, Յովհաննէսի մօտ, անկէ մկրտուելու համար: Եւ Յովհաննէս արգիլեց անոր եւ ըսաւ. «Ե՛ս պէտք է մկրտուիմ քեզմէ, եւ դուն ինձի՞ կու գաս»:

Յիսուս պատասխանեց անոր եւ ըսաւ. «Թոյլ տուր այժմ, որովհետեւ պատշաճ է որ այսպէս կատարուի ամէն արդարութիւն»: Այն ատեն Յովհաննէս թոյլ տուաւ:

Երբ Յիսուս մկրտուեցաւ եւ ջուրէն դուրս ելաւ, ահա երկինքը բացուեցաւ անոր եւ տեսաւ Աստուծոյ Հոգին որ աղաւնիի նման կ'իջնէր անոր վրայ: Եւ ահա երկինքէն ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր. «Ասիկա իմ սիրելի Որդիս է, որուն ես հաճեցայ»:

Քահանան կ'օրհնէ ջուրը, խաչաձեւ, խաչը թաթ-խելով ջուրին մէջ:

Ծարական ԴԶ.

Մըկըրտի Քրիստոս եւ սըրբին ամենայն արարածք. եւ տայ մեզ թողութիւն մեղաց. ջրով եւ Հոգւով վերասըրբելով ըզմեզ:

Սրկ. Այս սուրբ խաչով աղաչենք Տիրոջ, որ ասով փրկէ մեզ մեղքէն եւ ազատէ՝ շնորհիւ իր ողորմութեան. ամենակալ Տէր, Աստուած մեր, ազատէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

ԱՂՕԹՔ

Քհն. Պահպանէ՛, Քրիստո՛ս, մեր Տէր Աստուածը, խաղաղութեան մէջ, այս բնակարանն ու ասոր բնակիչները, քու սուրբ եւ պատուական խաչիդ հովանիին ներքեւ: Փրկէ՛ երեւելի եւ աներեւոյթ թշնամիէն. արժանի ըրէ որ գոհութեամբ փառաւորենք քեզ՝ Հօր եւ սուրբ Հոգիիդ հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ ✠ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր, որ յերկինս ես...

Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք, յաւիտեանս. ամէն:

Եւ խաչը համբուրել կու տայ ամէնուն:

✠ ✠ ✠

ԿԱՆՈՆ ՏՆՕՐՀՆԷՔԻ **Քրիստոսի Յարութեան Տօնին**

Քահանան, ուրար հագած եւ ձեռքը խաչ առած,
Կ'օրհնէ աման մը ջուրը որ իր առջեւ կը դրուի:

Սրկ. **Եւ եւս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք,
ընկալ, կեցո եւ ողորմես:**

Քհն. **Օրհնութիւն եւ փառք՝ Հօր Ք եւ Որդւոյ եւ
Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն:**

Ծարական ԴԶ.

**Այսօր յարեալ ի մեռելոց փեսայն անմահ եւ երկ-
նաւոր. քեզ աւետիք խընդութեան հարսն ի յերկրէ
Եկեղեցի. օրհնեալ ի ձայն ցընծութեան զԱստուած
քո Սիրովն:**

**Այսօր անճառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զման-
կունրս քո. լուսաւորեա Երուսաղէմ. քանզի յարեալ
լոյս քո Քրիստոս. օրհնեա ի ձայն ցընծութեան
զԱստուած քո Սիրովն:**

Ալէլուիա. ալէլուիա:

**Տուն Իսրայէլի, օրհնեցէք զՏէր. տուն Ահարոնի,
օրհնեցէք զՏէր. տուն Ղեւեայ, օրհնեցէք զՏէր.
Երկիւղածք Տեառն, օրհնեցէք զՏէր:**

Սրկ. Ալէլուիա օրթի:

Քհն. Խաղաղութիւն թ՛ ամէնուն:

Սրկ. Երկիւղածութեամբ լսենք:

Քհն. Սուրբ Աւետարանը ըստ Մատթէոսի (28, 16-29):

Սրկ. Պռոսխումէ: Աստուած կ'ըսէ:

Քհն. Յետ յարութեան թ՛ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Իսկ տասնմէկ աշակերտները գացին Գալիլիա, այն լեռը ուր Յիսուս ժամադրած էր զիրենք: Երբ տեսան զինքը, երկրպագեցին անոր, բայց ոմանք տարակուսեցան: Յիսուս մօտեցաւ անոնց, խօսեցաւ անոնց եւ ըսաւ. «Ամէն իշխանութիւն տրուած է ինձի երկինքի մէջ եւ երկրի վրայ: Ինչպէս որ Հայրը առաքեց զիս, ես ալ կ'առաքեմ ձեզ: Գացէք ուրեմն, աշակերտեցէ՛ք բոլոր ազգերը եւ մկրտեցէ՛ք զանոնք, Հօր, Որդիին եւ սուրբ Հոգիին անունով: Սորվեցուցէ՛ք անոնց պահել ինչ որ ես պատուիրեցի ձեզի. ահաւասիկ ես ձեզի հետ եմ ամէն օր՝ մինչեւ աշխարհի կատարածը»:

ԵՐԳ ԴԶ.

Լուսապայծառ հրեշտակին նստելով ի կենսատու գերեզմանին: Եւ աւետէր կանանցն՝ յարեաւ Աստուած:

Սրկ. Այս սուրբ խաչով աղաչենք Տիրոջ, որ ասով

փրկէ մեզ մեղքէն եւ ազատէ՝ շնորհիւ իր ողորմութեան. ամենակալ Տէր, Աստուած մեր, ազատէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

ԱՂՕԹՔ

Քհն. Պահպանէ՛, Քրիստո՛ս, մեր Տէր Աստուածը, խաղաղութեան մէջ, այս բնակարանն ու ասոր բնակիչները, քու սուրբ եւ պատուական խաչիդ հովանիին ներքեւ: Փրկէ՛ երեւելի եւ աներեւոյթ թշնամիէն. արժանի ըրէ որ գոհութեամբ փառաւորենք քեզ՝ Հօր եւ սուրբ Հոգիիդ հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ ✠ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր, որ յերկինս ես...

Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք, յաւիտեանս. ամէն:

Եւ խաչը համբուրել կու տայ ամէնուն:

✠ ✠ ✠

ԿԱՆՈՆ ՉՈՒՐԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Քահանան, ուրար զգեցած, այս կարգով կ'օրհնէ առջեւը դրուած աղն ու ջուրը.

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ, կեցո եւ ողորմեա:

Քհն. Օրհնութիւն եւ փառք՝ Հօր Ք եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օգնութիւն է մեզ յանուանէ Տեառն, որ արար զերկինս եւ զերկիր:

Երդմնեցուցչութիւն աղի

Քհն. Կ'երդմնեցուցնեմ քեզ, արարա՛ծդ աղի,
կենդանի Ք Աստուծմով,
ճշմարիտ Ք Աստուծմով,
սուրբ Ք Աստուծմով,
այն Աստուծմով՝ որ հրամայեց որ Եղիսէ մարգարէն ջուրի մէջ հեղու քեզ՝ բուժելու համար ջուրերու ամլութիւնը.

որպէսզի դառնաս երդմնեցուած աղ՝ հաւատացեալներու փրկութեան համար,

եւ հոգւոյ եւ մարմնոյ առողջութիւն՝ քեզ ընդունողներուն համար,

եւ ուր որ ցանուիս՝ հեռու փախչի անկէ ամէն զա-
ռանցանք եւ չարութիւն

կամ դիւային պատրանքներու խաբէութիւն, եւ
ամէն պիղծ հոգի.

երդմնեցուցանելով անոր միջոցաւ որ պիտի գայ՝
հուրով դատելու կենդանիներն ու մեռեալները եւ
ամբողջ աշխարհը:

Դպ. Ամէն:

ԱՂՕԹՔ

Քհն. Ամենակալ յաւիտենական Աստուած,
քու առջեւ խոնարհելով, կ'աղաչենք որ այս աղի
արարածը, զոր տուիր մարդոց պէտքերուն համար,
հաճիս օրհնել ջ եւ սրբել ջ քու ողորմութեամ-
բըր,

որպէսզի բոլոր անոնց համար որ պիտի ստանան
գայն՝ ըլլայ պատճառ մտքի եւ մարմնի առողջու-
թեան,

եւ որեւէ բանի որու մերձենայ կամ ուր որ ցան-
ուի՝

չմնայ հոն չար ոգիներու պղծութիւն կամ հակա-
ռակամարտութիւն:

Մեր Տէր Յիսուս Քրիստոսով որուն, Հօր եւ սուրբ
Հոգիիդ հետ, կը վայելէ փառքը, իշխանութիւնը եւ
պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Երդմանեցուցչութիւն ջուրի

Քհն. Կ'երդմանեցուցնեմ քեզ, արարա՛ծդ ջուրի,
յանուն ամենակալ Հայր Ճ Աստուծոյ,
յանուն անոր Որդիին՝ մեր Տիրոջ Յիսուս Ճ Քրիս-
տոսի,

եւ զօրութեամբ սուրբ Ճ Հոգիին,
որ ըլլաս երդմանեցուած ջուր՝
հալածելու համար թշնամիին ամէն իշխանութիւ-
նը,

եւ կարող ըլլաս վանել եւ բնաջինջ ընել նոյն այդ
թշնամին

իր ապստամբ արբանեակներուն հետ:

Զօրութեամբ մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ պիտի
գայ՝ հոլորով դատելու կենդանիներն ու մեռեալները
եւ ամբողջ աշխարհը:

Դպ. Ամէն:

ԱՂՕԹՔ

Քհն. Ո՛վ Աստուած, որ մարդկային ազգի փրկու-
թեան համար՝ մեծամեծ խորհուրդներ հաստատեցիր
ջուրով, գթութեամբ նայէ մեր աղաչանքներուն, եւ
այս տարրին մէջ՝ զոր պատրաստեցիր բազմապատիկ
մաքրագործումներ կատարելու համար,

հէ՛ղ քու օրհնութեանդ Ճ զօրութիւնը,
որպէսզի քու արարածդ, որ քու խորհուրդներուդ
կը սպասաւորէ, ստանայ զօրութիւնը քու աս-
տուածային շնորհքիդ՝

հալածելու համար դեւերը եւ վանելու համար

ախտերն ու հիւանդութիւնները.

որպէսզի ամէն պղծութիւն ջնջուի հաւատացեալներու տուններէն կամ այլ վայրերէն ուր կը սրսկուի այս ջուրը, եւ զերծ մնան ամէն վնասակարութենէ.

չմնայ հոն մահաշունչ հոգի եւ ապականիչ օդ, եւ հեռու մնան թշնամիին ամէն դարանակալ պատրանքները.

եւ երբ բնակիչներու անդորրութիւնը եւ հանգիստը նախանձի ենթակայ ըլլայ, այս ջուրին սրսկումով փախուստ տայ եւ հեռու մնայ անկէ.

որպէսզի առողջութիւնը, զոր կը հայցենք քու անունովդ, պատսպարուի ամէն հակառակամարտութեան դէմ,

մեր Տէր Յիսուս Քրիստոսով, քու Որդիովդ, որ քեզի հետ կենդանի է եւ կը թագաւորէ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հոս, երեք անգամ խաչաձեւ կը նետէ ադը ջուրից մէջ, ըսելով մէկ անգամ.

Այս աղին խառնումը ջուրին հետ, թող ըլլայ Հօր Ք, Որդիին Ք եւ Սուրբ Ք Հոգիին անունով. ամէն:

Ապա օրհնեալ ջուր կը սրսկէ շուրջը:

Սրկ. **Այս սուրբ խաչով աղաչենք Տիրոջ, որ ասով փրկէ մեզ մեղքէն եւ ազատէ՝ շնորհիւ իր ողորմութեան. ամենակալ Տէր, Աստուած մեր, ազատէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:**

ԱՂՕԹՔ

Քհն. Պահպանէ՛ մեզ, Քրիստո՛ս, մեր Տէր Աստուածը, խաղաղութեան մէջ, քու սուրբ եւ պատուական խաչիդ հովանիին ներքեւ: Փրկէ՛ երեւելի եւ աներեւոյթ թշնամիէն. արժանի ըրէ որ գոհութեամբ փառաւորենք քեզ՝ Հօր եւ սուրբ Հոգիիդ հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ ✠ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր, որ յերկինս ես...

Զի քո է արքայութիւն եւ գօրութիւն եւ փառք, յաւիտեանս. ամէն:

✠ ✠ ✠

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԿԱՂՈՐԴՈՒԹԵԱՄԲ

Քահանան կը զգեստաւորուի քահանայական զգեստներով՝ բացի վակասէն. ապա կ'ուղղուի դէպի խորան, որու վրայ դրուած են զոյգ մը վառուած աշտանակներ:

Մինչ այդ դպիրները կ'երգեն հետեւեալ երգը.

*Հացս այս մարմին է Քրիստոսի,
Բաժակս արիւն նորոյ ուխտի.
Ծածկեալ խորհուրդըն մեծ յայտնի,
Աստուած ի սմա մեզ տեսանի:
Սա է Քրիստոս, Բանն Աստըլած,
Որ ընդ աջմէ Հօրըն բազմի,
Եւ աստ ի մեզ պատարագի,
Բառնայ ըզմեղըս աշխարհի:*

Քահանան սուրբ Հաղորդութիւնը կը դնէ բազմոցի վրայ, կ'երկրպագէ եւ կը վերադառնայ խորանին վարը: Հոն ծնրադրած՝ կը խնկարկէ սուրբ Խորհուրդը երեք անգամ երեք, ոտքի կը կանգնի եւ ձայնի կ'ըսէ հետեւեալ Աղօթքը.

*Տէր Աստուած բարձրեալ ամենակալ, լոյս անքնին,
մեծութիւն ասէղ, գթութիւն անսահմանելի, մար-
դասիրութիւն օրհնաբանելի, Յիսուս, Աստուծոյ կեն-
դանւոյ Միածին Որդի:*

Որ սքանչելարուեստ հրաշիւք, անպարագի՛րդ էակ, վասն մեր եղեր մարդ ի Կուսէն: Որ արեամբդ քո զմեզ ստացար, եւ մարմնովդ կերակրես:

Որ կարգեալ զայս խորհուրդ անճառելի՝ ուխտ կենաց անփոխադրելի սահմանեցեր: Որ յանուն զենման՝ միշտ յիշատակաւ քո չարչարանաց առ Հայր քո բարերար աղօթել զմեզ համարձակեցեր, եւ զայս տուրս շնորհաց քան զամենայն գործոց քոց զսքանչելիսն մեծացուցեր:

Լուր մեզ, բազմագուլթ մարդասէր, տուր զպարարեալ վշտօք քո մարմինդ քո ամենայն սրտի սրբարար կերակուր. զի զքեզ ունին քաւիչ քահանայ՝ գնեալ արեամբ հօտս քո, հայեաց յամենեսեան, հանգո զաշխատանս մեր ի քո օթեւանսդ, ուր գնացեր, Տէր, եւ խոստացար:

Արժանաւորեա զքոյս փառաւորել զքեզ այդր ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյդ ի յաւիտեանս:

Դպ. Ամէն:

Աղօթք՝ վասն Սրբազան Քահանայապետին.

Հովիւ քաջ եւ առաջնորդ բանաւոր հօտի, աղաչեմք զքեզ, Տէր, նայեա գթութեամբ ի ծառայյ քո (Այս անուն) Քահանայապետ՝ զոր կարգեցեր հովիւ Եկեղեցւոյ քում սրբոյ. Տուր սմա բանիւք եւ արդեամբք առաջնորդել ի փրկութիւն իւրոց հնազանդելոցն հաւատացեալ նմա հօտին. զի ընդ նոսին ժամանեսցէ ի կեանսդ յաւիտենից:

Դպ. Ամէն:

Քահանան, դարձեալ ծունկի եկած, կը խնկարկէ ամենասուրբ Խորհուրդին, ուսանոցը կ'առնէ ուսին եւ կը բարձրանայ խորան, կ'երկրպագէ եւ ձեռքը կ'առնէ սուրբ Խորհուրդը: Մինչ այդ դպիրները կ'երգեն՝

Աստուած մեր եւ Տէր մեր, երեւեցաւ մեզ: Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Քահանան, բարձրացնելով Սրբութիւնը, կը դառնայ դէպի ժողովուրդը, եւ անով կ'օրհնէ զայն՝ խաշաձեւ, ըսելով միաժամանակ, ձայնիւ.

Կեցո, Տէ՛ր, զժողովուրդս քո, եւ օրհնեա զժառանգութիւնս քո. հովուեա եւ բարձրացո զսոսա յայսմ-հետէ մինչեւ յաւիտեան:

Մինչ քահանան կ'օրհնէ, սարկաւազը կը խնկարկէ սուրբ Հաղորդութեան:

Օրհնութենէն ետք, քահանան կը դառնայ դէպի խորան, մինչ դպիրները կ'երգեն հետեւեալ Ծարականը ԲԶ.

Յաստուածային կայծակունսն, ի սրովբէից անհըպելին. Անմաքրապէս մերձեցաք, գոլ պարտապան քում խորհրդոյդ. Շնորհեա ըզնոյն մաքրութեամբ, ի թողութիւն մեղաց մերոց:

Որ վառեցար ի յարփւոյն եւ ոչ կիզար ի մորենւոյն, այլ ետուր զհացըն կենաց կերակուր բանաւորաց: Բարեխօսեա առ Քրիստոս ջընջել ըզգիր մեղաց մերոց:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԳՈՒԹԵԱՄԲ

Քահանան կ'իջնէ աստիճանին վարը, կը հանէ ուսանոցը, կը ծնրադրէ եւ կը խնկարկէ երեք անգամ սուրբ Խորհուրդին: Ապա կը բարձրանայ խորան, կ'երկրպագէ, եւ առնելով սուրբ Հաղորդութիւնը, կը դնէ զայն տապանակին մէջ:

✠ ✠ ✠

Մեծ Պահքի ընթացքին, փոխանակ Հացս այս մարմինի, կ'երգցուի 50-րդ Սաղմոսէն մի քանի տուն.

Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում, քաւեա զանօրէնութիւնս իմ:

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. եւ ի մեղաց իմոց սուրբ արա զիս:

Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ. զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ:

Բարի արա, Տէր, կամօք քովք Սիրովնի. եւ շինեսցին պարիսպքն Երուսաղէմի:

Յայնժամ հաճեսցիւ ընդ պատարագս արդարութեան. ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակաց:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ փոխանակ «Յաստուածային կայծակունս» շարականին, կ'երգցուի «Թագաւորն արարածոց» շարականը:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԳՈՒԹԵԱՄԲ

Թագաւորն արարածոց, զհացըն կենաց ետ քաղցելոց. եւ ըզբաժակն ուրախարար, որք յԱդամայ տըրտմեցելոց: Այս նոր ուխտ է իմոյ արեան, փոխան հընոյ ուխտին արեան. Ձոր յիշատակ իմ առնիցէք, մինչեւ եկից ես միւսանգամ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

| | |
|---|-----|
| ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ | 3 |
| ԿԱՆՈՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲԻ ԽՈՐՀՈՒՐԳԻՆ | 5 |
| ԿԱՆՈՆ ԳՐՈՇՄԻ ՍՈՒՐԲԻ ԽՈՐՀՈՒՐԳԻՆ | 26 |
| ՅԱԽԵԼՈՒԱԾ. ՍՈՒՐԲԻ ԳՐԱՅԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ | 32 |
| ԿԱՆՈՆ ՔԱՌԱՄՆՕՐԲԵԱՅ ՍԱՆՈՒԿԸ ԵԿԵՂԵՑԻ ԲԵՐԵԼՈՒ | 37 |
| ԿԱՆՈՆ ՆՇԱՆՏՈՒՔ ՕՐՀՆԵԼՈՒ | 44 |
| ԿԱՆՈՆ ՍՈՒՐԲԻ ՊՍԱԿԻ ԽՈՐՀՈՒՐԳԻՆ | 51 |
| ՅԱԽԵԼՈՒԱԾ. ՍՈՒՐԲԻ ԳՐԱՅԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ | 68 |
| ԿԱՆՈՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲԻ ԽՈՐՀՈՒՐԳԻՆ | 76 |
| ՀԻՒԱՆԳՆԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ | 79 |
| ԿԱՐԳ ՀԻՒԱՆԳՆԵՐՈՒ ՕԾՈՒՄԻ ԽՈՐՀՈՒՐԳԻՆ | 84 |
| ԿԱՐԳ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՈՐՈՎ ԼԻԱԿԱՏԱՐ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՇՆՈՐՀՈՒԻ ՀԻՒԱՆԳՆԵՐՈՒՆ | 98 |
| ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՆՆՋԵՑԵԱԼՆԵՐՈՒ | 102 |
| ՅԱԽԵԼՈՒԱԾ. ՍՈՒՐԲԻ ԳՐԱՅԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ | 127 |
| ԿԱՆՈՆ ՀԱՆԳԱՏԵԱՆ ՆՆՋԵՑԵԼՈՅ | 135 |
| ԿԱՆՈՆ ՏՆՕՐՀՆԷՔԻ - Քրիստոսի Սուրբ Ծննդեան տօնին | 139 |
| ԿԱՆՈՆ ՏՆՕՐՀՆԷՔԻ - Աստուածայայտնութեան և Մկրտութեան տօնին | 142 |
| ԿԱՆՈՆ ՏՆՕՐՀՆԷՔԻ - Քրիստոսի Յարութեան տօնին | 145 |
| ԿԱՆՈՆ ՋՈՒՐԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ | 148 |
| ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲԻ ՀԱՂՈՐԳՈՒԹԵԱՄԲ | 153 |

